


ՅՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ



ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ

ՆԿԻՐԿԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ


ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ







ՀՀ ԳԱՍ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ,  
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Գիրքը հրատարակվում է

ՀՀ ԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի և  
«Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և  
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» ՊՈԱԿ-ի  
գիտամեթոդական խորհրդի որոշումներով

Книга издается по решениям

Ученого совета Института археологии и этнографии НАН РА и  
Научно-методического совета ГНКО «Сардарапатского мемориального комплекса,  
Национального музея этнографии и истории освободительной борьбы армян»

Book is published according to

decisions of the Scientific Council of the Institute of  
Archaeology and Ethnography NAS RA and Scientific-methodical  
Council of the NCSO "Memorial Complex of Sardarapat Battle, National Museum  
of Armenian Ethnography and History of Liberal Struggle"



Գիտաժողովը նվիրված էր  
պատմաբան, ազգագրագետ, հայ և կովկասյան  
ժողովուրդների ազգագրության հիմնախնդիրների մասնագետ,  
պ.գ.թ. Յուրի Իսրայելի Մկրտումյանի ծննդյան 80-ամյակին

Конференция была посвящена  
80-летию со дня рождения историка, этнографа, специалиста по  
проблемам этнографии армян и кавказских народов, к. и. н.  
Юрия Исраеловича Мкртумяна

The conference was dedicated  
to the 80-th anniversary of birth of Historian, Ethnologist,  
specialist on problems of ethnography of Armenians and peoples  
of Caucasus, Ph.D Yuri Israyel Mkrtumyan



«САРДАРАПАТСКИЙ МЕМОРИАЛЬНЫЙ КОМПЛЕКС,  
НАЦИОНАЛЬНЫЙ МУЗЕЙ ЭТНОГРАФИИ И ИСТОРИИ  
ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРМЯН» ГНКО  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

СБОРНИК МАТЕРИАЛОВ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ,  
ПОСВЯЩЕННОЙ 80-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
ЮРИЯ МКРТУМЯНА



“MEMORIAL COMPLEX OF SARDARAPAT BATTLE,  
NATIONAL MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY AND  
HISTORY OF LIBERAL STRUGGLE” NCSO  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA

COLLECTION OF MATERIALS OF THE  
CONFERENCE DEDICATED TO THE 80-TH  
ANNIVERSARY OF BIRTH OF YURI MKRTUMYAN

ЕРЕВАН  
YEREVAN  
2020


«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ,  
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊՈԱԿ  
ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

8  
106  
11

**ՅՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ  
ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ**



ԵՐԵՎԱՆ  
2020



ՀՏԴ 93/94:39:06  
ԳՄԴ 63.3+63.5  
Յ 930

Խմբագրական կազմ Կարեն Փահլևանյան, Պավել Ավետիսյան,  
Սվետլանա Պողոսյան, Հասմիկ Հարությունյան

Редакционная коллегия Карен Пахлеваниян, Павел Аветисян,  
Светлана Погосян, Асмик Арутюнян

Editorial board Karen Pahlevanyan, Pavel Avetisyan,  
Svetlana Poghosyan, Hasmik Harutyunyan


Յ 930 Յուրի Մկրտումյանի ծննդյան 80-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի  
ժողովածու. - Եր.: Սարգսրապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց  
ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան, 2020,  
136 էջ:

ՀՏԴ 93/94:39:06  
ԳՄԴ 63.3+63.5

ISBN 978-9939-1-1175-9

© «Սարգսրապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և  
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան», ՊՈԱԿ, 2020  
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2020






**ՅՈՒՐԻ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**  
**(01.01.1939-12.11.2005)**  
**ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ**

01.01.1939	Մեզին է թրիլիսիում (ՎԽՄՀ), զինվորականի ընտանիքում:
1946-1957	Մովորել է թրիլիսիի 11-ամյա թիվ 86 միջնակարգ դպրոցում:
09.1947-08.1949	Ընտանիքով ապրել են ԳԴՀ-ում:
09.1957-07.1962	Մովորել է Մոսկվայի պետական համալսարանում (ՄՊՀ):
1953	ՀԼԿԵՄ անդամ, Կոմերիտ. կազմ. քարտուղար, Տեղկոմի անդամ և նախագահ
05.1965-09.1991	ԿԿ-ի անդամ
08.1962-02.1963	Հայաստանի ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) ազգագրության սեկտորի լաբորանտ
02.1963-01.1971	Աշխատել է ՀԱԻ-ում՝ որպես կրտսեր գիտաշխատող:
29.11.1968	Մտացել է պ.գ.թ. գիտական աստիճան:
09.1970-06.1971	Աշխատել է ԵՊՀ հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնում՝ որպես ավագ դասախոս:
03.06.1971-09.1976	Ամբիոնի դոցենտ, դոցենտի կոչում ստացել է ԲՈՀ-ի 29.12.1974 որոշմամբ (Մոսկվա):
09.1976- 08.1978	Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության (հետագայում՝ Հնագիտության և ազգագրության) ամբիոնի ավագ գիտական աշխատող, դոկտորանտ ՄՊՀ-ում
09.1978-11.1989	Ամբիոնի դոցենտ
1986	Դասախոսություններ է կարդացել Հանոյի (Վիետնամ) համալսարանում:
17.11. 1988-09.1991	ԵՊՀ Կոսկոմի քարտուղար
1990-09.1991	Հայաստանի ԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ
10.11.1989-12.04.1994	Ազգագրության ամբիոնի վարիչ
01-05.1993	Դասախոսել է Թեմիլ համալսարանում (ք. Ֆիլադելֆիա) Ֆուլբրայթ հիմնադրամի հրավերով:
12.04.1994-06.1994	ՀՀ արտգործնախարարի խորհրդական
06.1994-06.1997	ՀՀ արտակարգ և լիազոր առաջին դեսպան ՌԴ-ում
08.1997-11.2000	ՀԱԻ-ի առաջատար գիտաշխատող
11.2000-01.09.2004	Ազգագրության ամբիոնի վարիչ
01.09.2004-11.2004	Ազգագրության ամբիոնի դոցենտ-խորհրդատու
11.2004-12.11.2005	Հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ-խորհրդատու

Մասնակցել է ավելի քան քսան միջազգային կոնգրեսների, գիտաժողովների, սիմպոզիումների.

22.08.1973-12.09.1973	ԱՄՆ
12.1978	Հնդկաստան
01.1990-02.1990	ԱՄՆ
05.05.2003-08.05.2003	Թուրքիա՝ «Կովկասագիտական գիտաճյուղերի ծրագրեր» կոնֆերանս




**ԳԻՏԱԿԱՆ (ԳԻՏԱՍԵԹՈՂԱԿԱՆ) ԵՎ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ**

1. Մկրտումյան Յու. 1963, Հայաստանի հյուսիս-արևելյան հայերի տարեկան անասնապահական ցիկլը նախահեղափոխական շրջանում, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ (Երևան), № 7, էջ 87-100:
2. Мкртумян Ю. 1965, Формы сообществ по выпасу скот а вармянской деревне второй половины XIX века, Ваидов Р.М. (ред.), Материалы сессии, посвященной итогам археологических и этнографических исследований в СССР, Баку, АН Аз. ССР, сс. 186-187.
3. Мкртумян Ю., Сехбосян К. 1966, Рецензия: Вардумян Д., Карапетян Э.. Семья и семейный быт колхозников Армении, Советская этнография(Москва), № 4, сс. 187-190.
4. Мкртумян Ю. 1967, Некоторые формы сообществ в армянской деревне (Вторая половина XIX века), Պատմաբանասիրական հանդես (Երևան), № 4, էջ 284-290:
5. Мкртумян Ю. 1968, Формы скотоводства и быта населения в армянской деревне второй половины XIX века, Советская этнография (Москва), № 4, сс. 14-29.
6. Мкртумян Ю. 1968, Формы скотоводства у армян (вторая половина XIX в.- начало XX в.), Լրաբեր հասարակական գիտությունների (Երևան), № 12, էջ 49-56:
7. Мкртумян Ю. 1968, Формы скотоводства в Восточной Армении (по этнографическим материалам). Автореферат диссертации, М., Изд-во МГУ, 28 с.
8. Мкртумян Ю. 1971, К изучению форм скотоводства у народов Закавказья, Гарданов В.К. (Отв. ред.), Хозяйство и материальная культура народов Кавказа (Материалы к Кавказскому историко-этнографическому атласу), вып. I, М., Наука, сс. 116-135.
9. Мкртумян Ю. 1971, Оскотоводческой терминологии в специальной научной литературе, Всесоюзная научная сессия, посвященная итогам этнографических исследований 1970 г. Тезисы докладов, Тбилиси, Изд-во Мецниереба, сс. 31-32.
10. Мкртумян Ю. 1972, Картографирование элементов скотоводческой культуры народов Кавказа, Советская этнография(Москва), № 2, сс. 61-67.
11. Мкртумян Ю. 1973, Традиционное и новое в быте и культуре населения северо-восточной Армении, Луинин Б.В., Мирхасилов С.М. (Под общ. ред.), Всесоюзная археолого-этнографическая сессия по итогам полевых исследований 1972 г. Тезисы докладов и сообщений по этнографии, Ташкент, ФАН, сс. 107-109.
12. Мкртумян Ю. 1973, Соотношение земледелия и скотоводства и его роль в формировании современной культуры и быта сельского населения Кавказа, М., Наука, 23 с.
13. Мкртумян Ю. 1974, Формы скотоводства в Восточной Армении (вторая половина XIX-начало XXв.): историко-этнографическое исследование, Վարդումյան Դ.Ս. (պատմաբանասիրական խմբ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն, 6, Երևան, ՀՍՍՀԳԱ հրատ., էջ 7-158:

14. Մկրտումյան Յու. 1974, Գրախոսություն. Վ.Հ. Բրդյան, Հա յագգագրություն: Համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, 287 էջ, Լրագրեր հասարակական գիտությունների (Երևան), № 11, էջ 106-109:
15. Մկրտումյան Յու. 1976, Էթնոգոստեխնիկայի պատմամշակութային տեսանկյունների ուսումնասիրության հարցի շուրջը, Հարությունյան Ս.Բ., Նազինյան Ա.Ս., Վարդումյան Դ.Ս. (Պատ. խմբագիրներ), ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական նստաշրջան, նվիրված ազգագրա-բանահյուսական աշխատանքների արդյունքներին, դեկտ. 23-24, 1976 թ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 7-8:
16. Мкртумян Ю. 1976, Историко-культурные аспекты картографирования зоотехнического материала (К Кавказскому историко-этнографическому атласу), Башилов В.Н. (отв. ред.), Сессия, посвященная итогам полевых этнографических исследований в СССР. Тезисы докладов, Душанбе, Дониш, сс. 166-167.
17. Մկրտումյան Յու. 1977, Գոմ, Միմոնյան Ա.Պ. (խմբ.), Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 3, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 151:
18. Мкртумян Ю. 1978, Компоненты культуры этноса, Маркарян Э.С. (отв. ред.), Методологические проблемы исследования этнических культур. Материалы симпозиума, Ереван, Издательство АН Армянской ССР, сс. 42-47.
19. Арутюнов С., Мкртумян Ю. 1978, К проблеме типологической классификации хозяйственно-культурных компонентов, Башилов В.Н., Вардумян Д.С. (редакторы), Все-союзная сессия по итогам полевых этнографических и антропологических исследований 1976-1977 гг. Тезисы докладов, 19-22 апр, 1978 г., Ереван, Изд-во АН Арм ССР, сс. 13-15.
20. Арутюнов С., Мкртумян Ю. 1978, Армяне, Григулевич И. Р. (отв. ред.), Расы и народы. Ежегодник АН СССР, т. 8, М., Наука, сс. 262-271.
21. Mkrtumyan Yu. 1978, Historical Dynamics of Stock-Breeding: Ecological and Socio-Cultural Factors (Based on a Study of the Armenian Upland and the Caucasus), General Problems of Ethnography. Papers by Soviet Researchers, 1, Moscow.
22. Mkrtumyan Yu. 1978, Ecological and Social-Cultural Aspects of the Development of the Stock-Breeding on the Armenian Upland and the Caucasus, Sarla Banerjee and Others (Edit.), X International Congress of Anthropological and Ethnological Sciences. Abstracts, Dec. 10 to 21, 1978, v. 2, Delhi, Thomson Art Press, pp. 222-223.
23. Mkrtumian Yu. 1979, Changing Life Patterns in the Caucasus: The Contributions of Agriculture and Cattle Breeding, Sol Tax (General Editor), Anthropology and Social Change in Rural Areas, The Hague-Paris-New York, Mouton Publishers, pp. 223-234.
24. Մկրտումյան Յու. 1980, Չմեռանց, Արգունյան Մ.Վ. (խմբ.), Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 6, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 709:

25. Арутюнов С., Мкртумян Ю. 1980, Проблемы изучения культуры жизнеобеспечения (по материалам исследований в Армянской ССР), Басилов В.Н., Бикбулатов Н.В., Гурвич И.С., Дробужева Л.М., Жданко Т.А., Кузеев Р.Г., Соколова В.К. (ред. кол.), Всесоюзная сессия по итогам полевых этнографических и антропологических исследований 1978-1979 гг., Тезисы, Уфа, БФАН СССР, сс. 18-19.
26. Арутюнов С., Мкртумян Ю. 1981, Проблемы классификации элементов культуры (на примере армянской системы питания). Советская этнография (Москва), № 4, сс. 3-15.
27. Арутюнов С., Маркарян Э., Мкртумян Ю. 1983, Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса. Советская этнография (Москва), № 2, сс. 22-31.
28. Маркарян Э. (рук. авторского коллектива), Арутюнов С., Барсегян И., Енгибарян С., Мелконян Э., Мкртумян Ю., Сарингулян К. 1983, Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры), Арутюнов С.А., Маркарян Э.С. (отв. редакторы), Ереван, изд-во АН Арм. ССР, 319 с.
29. Մկրտումյան Յու. 1984, Էկոլոգիական և սոցիոմշակութային գործոնները հայոց անանապահական տնտեսության պատմական շարժընթացի մեջ, Վարդումյան Դ.Ս. (պատ. խմբ.), Հանրապետական գիտական նստաշրջան, նվիրված 1982-1983 թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների հանրագումարին, մայիսի 14-16, 1984 թ., Երևան, էջ 26-27:
30. Арутюнов С., Мкртумян Ю. 1984, Проблемы типологического исследования механизмов жизнеобеспечения в этнической культуре, Крюков М.В., Кузнецов А.И. (отв. редакторы), Типология основных элементов традиционной культуры, М., Наука, сс. 19-33.
31. Арутюнов С., Мкртумян Ю. 1988, Армяне, Бромлей Ю. В. (гл. ред), Народы мира. Историко-этнографический справочник, М., Научное издательство «Советская энциклопедия», 0,5 п.л.
32. Mkrtyumyan Yu. 1994, National Movements in the North Caucasus and National Self-Awareness of the Local Peoples, The Mid-Atlantic Slavic Conference. Papers of the Seventeenth Annual Meeting, Newark, 0,5
33. Մկրտումյան Յու. 1995, Եզդիներ, Խուդավերդյան Կ.Ս. (գլխ. խմբ.), Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան, էջ 79-80:
34. Мкртумян Ю. 1997, Армения-Россия: многолетние связи и современные отношения. Дипкурьер, вып. 6, М., изд-во МИД.
35. Մկրտումյան Յու. 1997, Ազգային փոքրամասնությունների իրավունքները մարդու իրավունքների համակարգում, Համատեղ սեմինարների կյութերի ժողովածու, Երևան, էջ 79-86:

- 
36. Арутюнов С., Мкртумян Ю. 1998, Армяне, Тишков В.А. (Главный ред.), Народы и религии мира, М., Научное издательство «Большая Российская энциклопедия», сс. 56-59.
  37. Մկրտումյան Յու. (խմբ. և հեղինակ) 2000, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 164 էջ:
  38. Մկրտումյան Յու. 2004, Հայաստանի Հանրապետության բնակչության ազգային կազմն ըստ 2001 թ. մարդահամարի (ազգագրական, ժողովրդագրական, միջազգային-իրավական տեսանկյունները), Բանբեր Երևանի համալսարանի (Երևան), № 3, էջ 3-13:
  39. Арутюнов С., Мкртумян Ю. 2001, Вершина хлебопечения-лаваш, Губогло М.Н. (Отв. ред.), IV конгресс этнографов и антропологов России, Тезисы докладов, Нальчик, 20-23 сент., 2001 г., М., с. 160.
  40. Մկրտումյան Յու. (խմբ. և հեղինակ) 2005, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 254 էջ:





ԵՐԱՆՏԻՔԻ  
ԽՈՍՔԵՐ



## ԼԵՎՈՆ ՀՄԱՅԱԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
Արդիականության ազգաբանության բաժնի վարիչ,  
պատմ. գիտ. թեկնածու, ԳԱԱ թղթակից անդամ  
Էլ. փոստ - levon\_abrahamian@yahoo.com

## ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԴԵՄՊՆԱԸ

Կարծում եմ՝ ճիշտ ընտրություն է, որ Յուրի Մկրտումյանին նվիրված գիտաժողովն արվում է Ազգագրագետի օրը: Այստեղ գտնվողների մեծամասնությունը ազգագրագետ են դարձել հենց Յուրի Մկրտումյանի շնորհիվ: Ես նկատի չունեմ այն, որ նա դասավանդել է նրանց, այլ այն, որ նա վարակել է իր աշակերտներին այդ մասնագիտությամբ, և ազգագրությունը դարձել է նրանց համար ոչ միայն մասնագիտություն, այլ նաև ապրելաձև և աշխարհայացք: Եվ գլխավորը՝ սեր է ամրապնդել մարդու հանդեպ, ում ազգագրագետը ոչ միայն ուսումնասիրում է, այլև, թեկուզ կարճ ժամանակով, ապրում նրա կյանքով: Ես բախտ չեմ ունեցել լինել Յուրի Մկրտումյանի աշակերտը, նրա հետ աշխատել դաշտում, բայց կնոջս և գործընկերներիս պատմածից կարող եմ պատկերացնել, ինչ անմոռանալի տպավորություն է թողել նա իր աշակերտների վրա:

Դաշտում աշխատել սովորեցնելն ընդհանրապես Յուրի Մկրտումյանի բացառիկ տաղանդներից էր (թող չնեղանան իմ այս պնդումից ավագ սերնդի մեր փորձառու ազգագրագետները): Որքան գիտեմ, ուսուցման յուրահատուկ մեթոդը նա չէր սովորել իր բազմաթիվ խմբային դաշտային հետազոտություններից, ոչ էլ հետևում էր 19-րդ դարից հասած ընդհանուր ոճին և լուրջ թերություններով դաշտային աշխատանքը կազմակերպելու խիստ սակավ տեղեկություններին (այսօրվա բազմաթիվ մեթոդաբանական ձեռնարկները դեռ գրված չէին կամ հասանելի չէին): Նրա աշակերտների բազմաթիվ և բազմերանգ հիշողություններից կարելի է կազմել հետևյալ մոտավոր մոդելը. գիտարշավի յուրաքանչյուր մասնակից ուներ իր թեման և աշխատում էր իր բանասացի հետ, բայց երեկոյան բոլորը կիսվում էին իրենց հավաքած նյութով և նախնական մտքերով, քննարկում և քննադատում էին մեկը մյուսին, այնպես որ, բոլորը գիտեին բոլորի խնդիրները, բոլորը բաց էին, և ոչ մեկի մտքով չէր անցնում այսօր երբեմն շահարկվող «ինտելեկտուալ սեփականությունը»՝ դաշտային նյութի առումով: Որքան հասկացա, այդպիսի բաց աշխատելաճոհ կապ չունեի պրոլետկոլտի ժամանակվա բրիգադային ուսուցման հետ: Յուրի Մկրտումյանը կարողանում էր այդ պարբերական քննարկումներով ստեղծել թիմային մտածողություն, վստահություն ու խստապահանջություն գործընկերոջ և, գլխավորը, ինքը քո հանդեպ: Խստապահանջությունը և նման ձևով աշխատելը ենթադրում է նաև որոշ կազմակերպչական խստություն, և Յուրի Մկրտումյանը երբեմն բավականին խիստ էր ռեժիմի առումով: Պատահում էր, որ անկարգապահներին ու անբարեխիղճներին տուն էր ուղարկում: Այսօր, հետ նայելով Յուրի Մկրտումյանի՝ դաշտային աշխատանքին ուսանողներին հաղորդակից դարձնելու հաջող-

ված փորձին, ավելի ու ավելի եմ համոզվում, որ նա, փաստորեն, ստեղծել էր «նվիրագործական» մի ինստիտուտ, որով անցնում էին ուսանողները: Չգիտեմ՝ նա հետևում էր Վ. Թրերներին, երբ կազմակերպում էր «կոմունիստա» հիշեցնող նվիրագործվողների խումբը, թե ուղղորդվում էր ազգագրագետի բնագրով և հոտառությամբ, ինչով առատորեն օժտված էր: Նկարագրածս խումբը «կոմունիստաից» տարբերվում էր նրանով, որ մեր «նվիրագործվողները» սովի փորձություն չէին անցնում, ընդհակառակը՝ չափազանց լավ էին սնվում: Դաշտի «ռեժիմային» կարգերի գլխավոր դժվարությունը ումանց համար հենց ստիպողաբար ռեժիմով սնվելն էր: Հիշենք, որ այս նվիրագործական փորձառությունը տեղի էր ունենում 1990-ականների սկզբներին, պատերազմի օրերին, և Վայոց ձորում, Մյունիքում, ուսանողներին թողնելով անվտանգ վայրում, Յուրի Մկրտումյանը պարբերաբար այցելում էր սահմանին ավելի մոտ գտնվող գյուղի դիրքերը պաշտպանող զինվորներին:

Յուրի Մկրտումյանը մի հատկություն ուներ (դա ես իմ փորձից էլ գիտեմ), հնարավոր չէր նրան մերժել: Կարծում եմ՝ այդ հատկության շնորհիվ էր այդպես հաջող կազմակերպում աննդի, տեղափոխության, դաշտային աշխատանքների համար անհրաժեշտ ֆինանսավորման հարցերը: Միբու՛ր էր ասել արդեն թևավոր դարձած խոսքերը. «Պորբլեն չկա, ձեր խնդիրն է միայն այն ձևակերպել»:

Շատ է քննարկվում, թե ինչպիսին պետք է լինի ազգագրագետը, ինչպես պետք է իրեն պահի դաշտում, ինչքանով պետք է մերվի ուսումնասիրվող դաշտին և ինչքանով դուրս մնա դրանից: Յուրի Մկրտումյանին ինչ-որ անհայտ ձևով հաջողվում էր միաժամանակ և՛ մոտիկ լինել մարդկանց (այնպես, որ խնդիր չէր ամենահավաստի նյութ հավաքելը), և ինչ-որ ձևով չանցնել մտերմության սահմանը՝ «չախպերանալ» այնքան, որ էլ չտեսներ ուսումնասիրվող նյութը: Գյուղացիները մտերմանում էին նրա հետ, բայց և հարգում էին և, կարծում եմ, մի քիչ էլ քաշվում էին. նրա պահվածքը նման վերաբերմունք ներշնչում էր՝ անկախ վայրից և մարդու դիրքից:

Մարդկանց հետ նման հարաբերությունը, որը, շեշտեմ, բնական էր և այդ պատճառով էլ ընդունվում էր, իդեալական հատկություն է պատգամավորի համար: Դեսպանի պարտականությունները Մոսկվայում կատարելուց հետո Յուրի Մկրտումյանը որոշեց ընտրել այնպիսի մի ուղի, որը հնարավորություն կտար մարդկանց խնդիրները լուծելու համար դրանք հասցնել խորհրդարան: Մուրեն շոբոյանն առաջարկեց շատ դիպուկ կարգախոս նրա բարոզական արշավի համար՝ «Ձեր դեսպանը խորհրդարանում», բայց Յուրի Մկրտումյանը որոշեց չօգտագործել այն, համարելով, երևի, ոչ այնքան համեստ: Ավաղ, այդ տարիներին ևս համեստությունն ու պրոֆեսիոնալիզմը քիչ էր գնահատվում:

Ես չեմ խոսի Յուրի Մկրտումյանի գիտական նվաճումների մասին: Ձեր ելույթներում, կարծում եմ, դուք ավելի լավ կանդրադառնաք դրանց: Կարելի էր նաև շատ խոսել նրա դասավանդման յուրօրինակ ձևի մասին, որի տպավորության և ազդեցության տակ են նրա աշակերտները մինչ օրս: Ինձ հետ նա մի քանի անգամ կիսվել էր իր պատկերացումներով և պլաններով բազմազան ու լայնամասշտաբ անելիքների մասին, որոնց զգալի մասը գիտության և կրթության բարեփոխման հետ էր առնչվում, ինչում այսօր Յուրի Մկրտումյանի նման պրոֆեսիոնալների կարիքն այդքան ունե նք: Ցավոք, չհասցրեց իրականացնել:

ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳԻ ՀՈՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
Ազգագրության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - suren.hobosyan@mail.ru

ՅՈՒՐԻ ԻՍՐԱՅԵԼԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ,  
ՄԱՐԴԸ, ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՔԱՂԱՔԱՑԻՆ

Օնվել և մեծացել էր Թիֆլիսում, հայրը զինվորական էր, խիստ, պահանջկոտ և զուսպ: Նա անցավ «պատերազմի մանկություն» իրական առարկան՝ զրկանքներ, կարիք, տազնապ, բայց նաև պայքար, նաև հավատ ու լավատեսություն: Նրա արմատները Տավուշում էին, Քրդկան-Ենոքավանում, որտեղ մանկուց շատ էր լինում, բայց թիֆլիսեցի էր որջ էությամբ, միշտ հպարտ, միշտ լավատես ու անկոտրում:

Թիֆլիսը ազգագրական մի բազմերանգ ու եռուն «կաթսա» էր, մի ահռելի դպրոց ուսումնասեր պատանու համար: Քաղաքը շատ բան էր տալիս, բայց ամբողջություն չէր ստացվում, գյուղը, գյուղի մարդը, գյուղական կենցաղը, բնությունն ու բնականը ձգում էին նրան: Դպրոցական արձակուրդներին գյուղ էր գնում ու գյուղ գնում էր ոչ այնքան հանգստանալու ու վայելելու, որքան դիտելու, ընկալելու, սովորելու, նաև աշխատել սովորելու համար: Մանկուց, ինչպես և շատ պատանիների, նրան հրապուրում էին լեռներն ու սարերը, դրանց հետ կապված առասպելներն ու պատմությունները: Մկրտումյանի դեպքում դրանք վերացական չէին, նա սարերն էր գնում, օրերով ապրում հովիվների հետ, օգնում նրանց, նրանց հետ մի կտոր հաց կիսում, մասնակիցը դառնում նրանց չարքաշ աշխատանքի, փորձում հասկանալ նրանց, հասկանալ մարդու գործունեության այս բնագավառը ևս: Նրա ուսումը, նրա համալսարանը սկսվեց այստեղ, իսկ այբուբենը մարդն էր ու աշխատանքը, հարգանքը մարդու և նրա աշխատանքի հանդեպ, ազնվությունն ու մաքրությունը: Ազգագրությունը նրա համար լոկ մասնագիտություն չէր թերևս, նաև կենսակերպ էր, որով աճում էն, սովորում, ձևավորվում, մարդ ու մասնագետ դառնում:

1962 թ. ավարտեց Մոսկվայի պետական համալսարանը, ձեռք բերեց ազգագրագետի մասնագիտություն և նույն թվականին աշխատանքի անցավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Մերժելով մի շարք գրավիչ առաջարկություններ՝ նա որոշեց իր գիտելիքներով օգտակար լինել իր բուն հայրենիքին ու ժողովրդին և տեղափոխվեց Երևան, 1968 թ. պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ գիտական հետազոտության թեմա ընտրելով հայ ժողովրդի անասնապահական մշակույթը:

1970 թ. նրան հրավիրեցին Երևանի պետական համալսարան: Նրա եռանդուն ջանքերի շնորհիվ ու իր ավագ գործընկերներ Դ. Վարդումյանի, Վ. Բդոյանի, Կ. Մելիք-Փա-

շայանի գործուն աջակցությամբ Պատմության ֆակուլտետում իր պատվավոր և արժանի տեղը գտավ նաև ազգագրությունը: «Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության» ամբիոնը դարձավ ազգագրական կադրերի պատրաստման հիմնական դպրոցը: 1989 թ. ԵՊՀ Պատմության ֆակուլտետում բացվեց «Ազգագրության» ամբիոն, որի հիմնադիրն ու ղեկավարը Յուրի Մկրտումյանն էր:

Դեռևս ուսանողական տարիներին, նաև սեփական փորձով համոզվել էր, որ ազգագրական ուսումնասիրության հաջողության կարևորագույն գրավականներից մեկը դաշտային աշխատանքն է, նյութի գրառումը նրա բուն կրողներից, ակտիվ շփման, անկեղծ զրույցի, դիտարկումների միջոցով: Յուրի Մկրտումյանի ազգագրական դպրոցի ուսումնական ծրագրերի պարտադիր մասը դարձան ամեն տարի ամառային արձակուրդների ժամանակ կազմակերպվող համալսարանի ազգագրական գիտարշավները (ՀԱԳ): Դրանց նախապատրաստվում էին հիմնավորապես՝ թեմայի ընտրություն, աշխատանքային պլան, հարցարան և այլն: Հասկացվող միջոցները սուղ էին, ուսանողին հասանելիք օրապահիկը 0,87 ռուբլի էր, որը նախատեսված էր սնվելու, գիշերելու և տրանսպորտային ծախսերի համար: Քչերը գիտեին, որ ծախսերի մի մասը, իր անձնական սուղ միջոցներից, հոգում է արշավախմբի պետը՝ «Ուսանողը մեղավոր չէ, որ գումարը փոքր է» բացատրությամբ: Գիշերում էին հիմնականում դպրոցներում՝ քնապարկերով, սնվում նույն տեղում, արշավախմբի օրվա հերթապահների պատրաստած կերակուրներով, շրջագայում տեղում վարձած մեքենաներով, և այդ ամենը կազմակերպվում էր հնարավորինս բարձր մակարդակով, պատասխանատվությամբ, հոգատարությամբ ամեն մի ուսանողի նկատմամբ ու խիստ կանոններով:

Գիտարշավները ուսանողների համար նաև ազգագրագետ դառնալու իրական փորձություն էին, և դա հասկանալի է, քանի որ բոլորը չէ, որ կարող էին հարմարվել քնապարկում քնելուն, ապրել դաշտային պայմաններում, անգամ մասնակցել համայնքային միջոցառումներին, ինչպես 1982 թ., Տավուշի Ոսկեպար գյուղում, երբ արշավախումբը ողջ կազմով խոտ էր հավաքում սարերում:

Գիտարշավային օրերի երեկոները՝ ուսանողական, ռոմանտիկ երեկոները, բոլոր մասնակիցների համար սիրուն հիշողություններ են, բայց դրանք նաև ուսման, սովորածը յուրացնելու երեկոներ էին: Ամեն օր ընթրիքին հաջորդում էր ուսանողների կատարած աշխատանքների քննարկումը, որը կարող էր տևել մինչև օրվա վավարտը: Հավաքած դաշտային ազգագրական նյութերը պարտավոր էին մաքուր արտագրել առանձին տետրերում: Այն տարիներին դրանք ընկալվում էին զուտ որպես տետրեր, սակայն տարիներ անց, երբ մոռացվել և փոխվել են ավանդական շատ բարբեր ու սովորություններ, ու չկան դրանց կրողները՝ այն տարիների բանասացները, դրանք ազգագրական կարևորագույն սկզբնաղբյուրների նշանակություն ունեն: Ծնորհակալ ենք Յուրի Մկրտումյան մարդուն, մանկավարժին և մեծ ազգագրագետին նաև այս նյութերի համար, որ այսօր պահվում են ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվում:

Գիտարշավներ կազմակերպվում էին հիմնականում Տավուշում և Վայոց ձորում՝ ընտրելով 4-5 բնակավայր, հաշվի առնելով դրանց աշխարհագրական դիրքը, դրա հետ կապված՝ տնտեսական զբաղմունքները, բնակչության ներէթնիկ կազմը և այլ հանգամանքներ:

Դաշտային աշխատանքներն ու ուսումնառության գործընթացը ավելի արդյունավետ դարձնելու համար, տարբեր տարիների գիտարշավների մասնակից էին դառնում նաև այլ մասնագետներ՝ Ս. Հարությունով, Կ. Սեղոսյան, Հ. Սարգսյան, ճարտարապետներ Թ. Գևորգյան, Հ. Թելումյան և ուրիշներ:

Հիշարժան էր հատկապես 1975թ. ՀԱԳ-ը, որը տարբերվում էր աշխարհագրական ընդգրկմամբ: Այն սկսվեց Մյունխի Շվանիձոր՝ Հայաստանի ամենացածրադիր գյուղերից մեկում, շարունակվեց Կապանի Շիկահողում, Գորիսի Քարահունջում և առաջին կեսն ավարտվեց Միսիանի Բոնակոթում: Գիտարշավը շարունակվեց Շիրակում՝ Մարմաշեն, Մուսայեղյան, Ղազանչի: Գիտարշավին մասնակցում էր նաև մեր ժամանակների հանրահայտ գիտնական, ազգագրագետ Սերգեյ Հարությունովը, Յուրի Մկրտումյանի ընկերն ու արժեքավոր շատ աշխատությունների համահեղինակը: ՀԱԳ-ի նման աշխարհագրությունն ու բարձր տեմպը կապված էին նաև նշանավոր ազգագրագետների ձեռնարկած գիտական կարևորագույն թեմաներից մեկի՝ կենսապահովման մշակույթի տեսական հիմունքների մշակման հետ:

Ուսուցչից ժառանգելով հայրենիքին, ժողովրդին ու իրենց մասնագիտությանը անմնացորդ նվիրվելու հատկությունը՝ Յուրի Մկրտումյանի շատ ու շատ աշակերտներ առաջատար տեղ են գրավում մեր երկրի գիտության, մշակույթի, կրթության ոլորտներում:

Յուրի Մկրտումյանը, որտեղ էլ գտնվեր, ինչով էլ զբաղվեր, առաջին հերթին մեծ մարդ էր, մեծ հայ ու մեծ հայրենասեր: XX դարի ավարտին հայ ժողովրդին բաժին հասած դաժան աղետի՝ Սպիտակի երկրաշարժի և հայ ժողովրդի զարթոնքի՝ Ղարաբաղյան շարժման ճակատագրական դեպքերի ժամանակ նա Երևանի պետական համալսարանի Կուսակցական կոմիտեի առաջին քարտուղարն էր: Նրա կազմակերպչական տաղանդն ու դիվանագիտական ճկուն քաղաքականությունը խրթին շատ հարցերի լուծման բանալին հանդիսացան: Ողջ երկրում տոտալ ռազմական վերահսկողություն էր սահմանվել, պարետային ժամ, ձեռքակալություններ, տեռոր, պատիժներ ամենաչնչին զանցանքների համար: Ի շահ մեր հանրապետությունում լքրված իրավիճակի նորմալացման, ի շահ մայրաքաղաքի բուհերի և այլ ուսումնական հաստատությունների ուսանողության՝ նա իր մարդկային բարձր արժանիքների, հաստատակամության, ամուր կամքի, բարձր գիտելիքների շնորհիվ կարևորագույն խնդիրների լուծման էր հասնում անգամ Միության ողջ տարածքում պատժիչ գործողություններ իրականացրած զորամիավորումների հրամանատարների հետ ունեցած բանակցություններում: Արցախի համար բախտորոշ այս ծանր իրավիճակում ևս հայոց հայրենասեր ոգին կենսունակ գտնվեց՝ տարբեր ուղիներով մատակարարելով անհրաժեշտ պարագաներ և զենք, ու այդ ուղիներից մեկը անց-

նում էր Յուրի Մկրտումյանի համալսարանական աշխատասենյակով, որը և՛ շտաբ էր, և՛ գինապահեստ, և՛ գաղտնարան:

Յուրի Իսրայելի Մկրտումյանը Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի խիստ պատասխանատու պաշտոնում ևս շարունակեց անմնացորդ նվիրումով ծառայել երկրին ու ժողովրդին, իր նպաստը բերելով երկու երկրների ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցությանը:



## ԱՐՄԻՆԵ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևան քաղաքի պատմության  
թանգարանի տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - yhmuseum@gmail.com

### ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ

Յուրի Մկրտումյանի հետ առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1978 թ., երբ նա սկսեց մեզ՝ երկրորդ կուրսեցիներիս դասավանդել Ազգագրության հիմունքներ առարկան: Եվ հենց այդ ժամանակվանից էլ մեզանից շատերի համար ազգագրությունը դարձավ մասնագիտական ուղենիշ: Չորս տարի շարունակ լսելով նրա բացառիկ դասախոսությունները՝ նրանից ստացած գիտելիքները մեզանից յուրաքանչյուրին մղեցին իր ղեկավարությամբ ուսումնասիրելու, խորացնելու ու նոր մոտեցումներով բացահայտելու հայ ժողովրդի նյութական ու ոչ նյութական մշակութային ժառանգության առանձին ոլորտներ ու շերտեր: Այս առումով անմոռանալի են նրա կազմակերպած ազգագրական գիտարշավները, որոնք դարձան ազգագրագետ մկրտվելու իսկական դարբնոց, և որոնց սպասում էինք առանձնահատուկ անհամբերությամբ: Հենց դրանց շնորհիվ մենք հնարավորություն ունեցանք շրջելու Հայաստանի ամենատարբեր մարզերում ու գյուղերում՝ հավաքելով կարևոր, հետաքրքիր ու արժեքավոր նյութեր, որոնք հետագայում հիմք հանդիսացան դիպլոմային աշխատանք ու ատենախոսական թեզ գրելու համար:

Յուրի Մկրտումյանն այն անձնավորությունն ու գիտնականն էր, ում հետ շփվելը մեծագույն պատիվ էր: Այստեղ ուզում եմ հիշատակել մեկ կարևոր փաստ՝ նրա համար անկարելի բան չկար: Բազմաթիվ օրինակներից մեկը 1982 թ. փետրվարին ազգագրության ցկլիի մեր խմբին Լենինգրադ (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգ) տանելն էր, քանի որ 1980 թ. օլիմպիական խաղերի պատճառով մեր կուրսը չէր մեկնել ավանդական դարձած ուղևորությանը դեպի Մոսկվա և Լենինգրադ, որոնք հայտարարվել էին փակ քաղաքներ: Լենինգրադի թանգարաններում ու հատուկ պահոցներում մենք հնարավորություն ունեցանք տեսնելու այն ամենը, ինչն անհասանելի էր սովորական այցելուի համար՝ և այդ ամենը Յուրի Մկրտումյանի մեծ հեղինակության ու հետևողականության շնորհիվ:

Մի նոր որակի ու բնույթի էին նրա հետ ունեցած հարաբերություններն արդեն հասուն տարիքում՝ ուսանողական նստարանը թողնելուց հետո: Պետք էր տեսնել, թե ինչպես էր ոգևորվում մեր եռյակին (Կարինե Բազեյան, Սվետլանա Պողոսյան, Արմինե Մարգարյան) միասին տեսնելիս ու հպարտանում մեր հաջողություններով: Ու մենք բացառություն չէինք, դա կհավաստեն նրա կրթած բոլոր սերունդները:

Յուրի Մկրտումյանը բացառիկ մարդ ու գիտնական էր, նրա տեղն առ այսօր դատարկ է... Եվ որքան էլ անցնում են տարիները, մինևույնն է, նրան ճանաչողների հոգում դարձյալ վառ է մնում մարդու այդ տեսակի հիշատակը: Շնորհակալ եմ, որ կյանքն ինձ նույնպես շնորհ է արել լինել նրա ուսանողն ու կրտսեր ընկերը:

## ՖԻՐԴՈՒՄ ԱՐՄԵՆԻ ԶԱՔԱՐՅԱՆ

1980-1981 ուս. տարվա  
ազգագրագետ շրջանավարտ  
Էլ. փոստ - firdus.zakaryan@gmail.com

### ԵՐԵՔ ԴՐՎԱԳ

#### 1.

Ժողովրդական իմաստությունը հուշում է. «Ասա՛՛ ո՞վ է ընկերդ, ասեմ՛՛ ով ես դու»: Այս տրամաբանությունը գործում է մի այլ պարագայում ևս. «Ասա՛՛ ո՞վ է ուսուցիչդ, ասեմ՛՛ ով ես դու»: Շատ հիմնավոր պատճառ կա, որ այստեղ հավաքվածներս մեզ համարենք հարազատ հանրայթի անդամներ, որովհետև մենք անցել ենք մի ճանապարհով, որը կոչվում է *մկրտումյանական դպրոց*: Մարդ, որին որքան էլ ճանաչեցիր, բազմաթիվ շերտերով մնաց հանելուկային ու չբացահայտված: Խոսքս պայմանականորեն կվերնագրեի այսպես. «Երեք դրվագ, որոնք բացահայտում են մարդու այդ տեսակը»:

Իր կյանքի վերջին ամիսներին ստացվեց այնպես, որ մեր շփումները ակտիվացան: Զրուցում էինք ամենատարբեր թեմաների շուրջ, որոնք այդ պահին հուզում էին մեզ: Զրույցներից մեկը վերաբերում էր մարդկային երախտագիտությանն ու երախտամոռությանը: Պատմեց, թե ինչպես, երբ իր ծննդավայրում առաջադրել էր թեկնածությունը Ազգային ժողովում ընտրվելու համար, անգամ բարեկամներն էին ընտրակաշառքի դիմաց անցել ուրիշի կողմը: Բնականաբար, ես էլ պատմեցի իմ գլխով անցած նույնատիպ պատմությունը: Հետո պատմեց, թե ինչպես, երբ որ դիրք ուներ ու առողջ էր, այլ էր մարդկանց վերաբերմունքը. հավանաբար ոմանց մոտ նկատել էր որոշակի փոփոխություն: Պատկած էր անկողնում: Պահը ենթադրում էր զսպվածություն, նույնիսկ տխրություն: Բայց հանկարծ նա անսպասելիորեն ընդհատեց լռությունն ու ոգևորված ասաց, որ ինքը պատահածից չի վիհավել, ավելին, նույնիսկ ուրախ է, որ այդպես է եղել, որովհետև դա օգնեց, որ կյանքին նայի մի այլ տեսանկյունից ևս: Ասաց՝ եթե առաջ հարցնեին՝ ովքե՞ր են իր ընկերները, կպատասխանե՞ր՝ ողջ Երևանը... Հիմա կհաշվի երկու-երեքը ու չորրորդը կդժվարանա նշել: Ապա նախադասությունը վերջացրեց այսպես.

- Պատկերացնո՞ւ՛մ ես, մեռնեի, հեռանայի կյանքից՝ չիմանալով, որ այսպիսի բան էլ կա աշխարհում: Խիղճս հիմա ավելի հանգիստ է:

Այդ պահին իմ աչքերում բացահայտվում էր այն Մկրտումյանը, ով երևույթներին, այդ թվում և մահվանը, նայում էր վերևից, սառնասրտորեն, ով այնպես էր մահը հավաքել բռան մեջ, որ վերջինս ասես շնչահեղձ էր լինում: Բացահայտվում էր այն Մկրտումյանը, ում կյանքի փիլիսոփայությունը մղում էր նրան հանգիստ ու մի քիչ էլ ժպիտով վերաբերվել կյանքի անցողիկությանը, դրսևորելով այն իմաստությունը, որ մահը կյանքի բնականոն ու նույնիսկ անհրաժեշտ շարունակությունն է:



## 2.

Մի այլ անգամ գրույցի թեման ազնվությունն էր, արդարությունը, դրանց կողքին՝ սուտը, կեղծիքն ու խաբեությունը: Ես պատմեցի, թե ինչպես են ինձ խաբել, նա էլ պատմեց, թե ինչպես են ուզում իրեն խաբել: Ես ասացի, որ ցավոք խաբեբաները շատացել են: Նա էլ ասաց, որ խաբեբաներ եղել են բոլոր ժամանակներում, հիմա պարզապես իրավիճակը նպաստում է, որ մարդիկ բացահայտեն իրենց դեմքը: Գողերի, «քցողների», սրիկաների մասին գրույցը հասավ գագաթնակետին, ու ես ասացի, թե այդպիսիներին պետք է պատժել: Հետաքրքրվեց, թե ի՞նչ պատիժ նկատի ունեմ: Ասացի՝ խիստ: Ասաց՝ այդ դեպքում լսիր մի պատմություն, որը մեզ է հասել իմ պապ Մկրտումից: Մի օր Մկրտում դային, պատշգամբում նստած, տեսնում է՝ հարևանը հրացանը ուսին գցած, խոժոռ ու անտրամադիր, գազան կտրած գնում է: Մի վատ բան գուշակելով՝ նրան կանչում է ներս, հալ-քեֆ հարցնում, հանգստացնում, հետո հարցնում է, թե ո՞ր է այդպես կատաղած գնում: Պարզվի ի՞նչ. սրա քավորը մի տարի առաջ 10 ոսկի է երկու ամսով պարտք վերցրել, ապա ձգել-ձգձգելով, երեկ ասել է, թե չի տալու, ինքն էլ գնում է հրացանը դատարկի քավորի փորը: «Բա օրը ցերեկով իմ ոսկիները տանի ուտի ու ինձ ես վիճակին գցի՞: Պիտի սպանեմ: Թե չէ 10 ոսկիս տանեն, ուտե՞ն», - ոչ մի կերպ չի հանգստանում հարևանը: Մկրտում դային էլ, թե՛ «Ա՛յ, հարևան, սպասիր, է՛: Ի՞նչ ես գլուխդ գցել, թե տասը ոսկիս տարան կերան: Իսկ ինչո՞ւ չես ասում, որ տասը կորցրել ես, իննսունը՝ շահել»: «Ո՞նց, - գարմանում է հարևանը, - ո՞նց թե շահել եմ: Ձեռ ես անում՝ մ, Մկրտում Դայի»: «Իսկի էլ չէ, - վստահաբար ասում է Մկրտում Դային: Հլա ինձ լսիր: Որ քավորդ քեզանից ոչ թե տասը, այլ հարյուր ոսկի խնդրեր, կտայի՞ր»: «Բա ի՞նչ պիտի անեի, քավորիս ո՞նց կմերժեի», - նույն վստահությամբ պատասխանում է հարևանը: «Տեսնո՞ւ ես, ինքդ ես ասում: Ա՛յ, որ հարյուրը տված լինեիր, հարյուրը կորցրած կլինեիր: Քանի որ տասն ես տվել, իննսունը խնայել ես: Հիմա գլխի ընկա՞ր, որ շահած դիրքում ես: Դա դեռ ոչինչ. որ քավորիդ սպանես, մարդասպանի անուն կհանե՞ս, մի տաս-տասնհինգ տարի կտա՞ն, երեխեքդ կմնա՞ն որք, դու էլ առողջությունդ կքայքայես: Այդ տարիներին քանի՞ քանի տասը ոսկի կաշխատես: Դե գնա, քե՛ մատաղ, երկու հատ մում վառի, քարը փեշիցդ թափի ու անցիր քո ամենօրյա գործին: Հաշվիր, որ դաբաղը սարից իջել ու մի քանի կով է սպանել: Եղա՞մ: Հա՛, մեկ էլ. որ մեկը քեզանից նորից փող պարտք ուզի, ի՞նչ կանես»: «Մկրտում Դայի, որ պապս էլ գերեզմանիցը վեր կենա գա, փող պարտք տվողը չկա»: «Տեսնո՞ւ ես, այ էն տասը ոսկին, որ չկորցնեիր, խելքի չէիր գա: Էդ փորձը կորցրածդ փողից կարևոր է»:

Ահա այս պատմությունից հետո պատժի մասին իմ պատկերացումները արմատապես փոխվեցին: Միաժամանակ, ինձ համար բացահայտվեցին Մկրտումյան մարդու այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ անչափ բարությունը, լայնախոհությունն ու բոլոր իրավիճակներում սթափ դատելու կարողությունը: Այս պատմությունը ես գետեղեցի իմ գրքում

պատմվածքի տեսքով, նախաբանում նշելով, որ այն նվիրվում է ազգագրագետ Յուրի Մկրտումյանին:

## 3.

Ասաց, որ հաղթահարելու է հիվանդությունը և նույնիսկ մտադիր է ժամեր վերցնել համալսարանում: Ես էլ խոստացա ուղեկցել նրան: Համաձայնվեց, բայց ասաց, որ վերադարձի հարցը կհոգա եղբայրը: Մի անգամ պատահեց այնպես, որ եղբայրը գործ ուներ, և մենք միասին պիտի գնայինք ու գայինք: Հարցրեց՝ ի՞նչ օր է այդ օրը: Ասացի՝ ապրիլի յոթն է: Ժպտալով թե՛ ուրեմն մեզ ի՞նչ է հարկավոր: «Իհա՛րկե, ծաղիկներ»,-ասացի ես: «Ի՞նչ ծաղիկներ»,-հարցրեց: «Մանուշակներ»,-պատասխանեցի ես: «Ինչո՞ւ մանուշակներ»,-հարցրեց կիսագարմացած: Ես տվեցի հետևյալ պատասխանը. «Որովհետև ծաղիկների մեջ մանուշակը խորհրդանշում է զսպվածությունը և համեստությունը: Իմ պատկերացրած Մկրտումյանը, ենթադրում եմ, կանանց մեջ գնահատում է առաջին հերթին հենց այդ հատկանիշները»: Նա իր խորասույզ հայացքը հառեց ինձ ու գլուխը տմբամբացնելով, փոքրիկ լռությունից հետո արտաբերեց իրեն հատուկ հայտնի դարձվածքը. «Կեցցե՛ք, կեցցե՛ք...»: Շրջանային ստորգետնյա անցումից գնեցի ծաղկի փնջիկները՝ ոչ թե չորս, ինչպես ասել էր, այլ հինգ հատ: Երբ բարձրացա վեր, նա հարցրեց. «Չորս հա՛տ է»: «Ո՛չ, հինգ»,-պատասխանեցի ես: «Իսկ ինչո՞ւ ես մեկն ավել վերցրել»,-գիտնականի հետաքրքրասիրությամբ հարցախույզ արեց ինձ: «Անկանխատեսելի իրավիճակի համար»,-ես էլ իմ հերթին տվեցի դիվանագիտական պատասխան: Նայեց այնպիսի հայացքով, թե հինգերորդի կարիքը չկար: Նրան ուղեկցեցի լսարան: Վերադարձա երկու ժամից: Թեև զանգը հնչել էր, բայց նա դասը չէր ավարտել: Նկատելով ինձ՝ գլխի շարժումով հրավիրեց ներս: Խմբի չորս աղջիկների սեղանին մանուշակի փունջ կար: Այն է, ուզում էր դասը ավարտել, հանկարծ դուռը բացվեց ու մի աղջիկ, գլուխը դռնից ներս մտցնելով, ինչ-որ բան հարցրեց: Աղմուկ էր, ու նա աղջկան հրավիրեց ներս՝ մոտիկից հարցը կրկնելու: Երբ աղջիկը մոտեցավ, նա իր դարակից հանեց վերջին ծաղկեփունջն ու պարզեց նրան, ապա նայելով ինձ, բազմանշանակ բացականչեց. «Ահա՛՛ հինգերորդը»:

Ես նայում էի նրան ու մտածում, թե որքա՛ն անթելված կրակներ կան այս մարդու հոգում, որի մտորումների ու ապրումների ելնեջները այդպես էլ շրջապատի համար մնացին չբացահայտված: Եվ թե ինչպիսի՛ ջերմություն ու նվիրվածություն կդրսևորեր նա այն կնոջ հանդեպ, ով իր կյանքի ընկերը կլիներ:

Այսօր ես հավատացած եմ, որ նրա ողջ կենսագրությունը, եզակի մարդու, նվիրյալ մտավորականի կերպարը պատշաճորեն ներկայացնելը ոգևորիչ և ուսանելի կարող է լինել նոր սերնդի համար: Իսկ նրա մեծ ու մաքրամաքուր սիրո պատմությունը, որի նրբերանգներին վերաբերող անկրկնելի զգացողությունները նա տարավ իր հետ, միանշանակ արժանի էր գեղարվեստական կերպավորման: Ափսոս, որ մեզանից որևէ մեկին Աստված չտվեց այդ ամենի մասին մանրագնին տեղեկանալու բախտն ու այդ ամենը գեղարվեստորեն արտահայտելու շնորհը: Բայց ուզում եմ հաստատապես ասել, որ այն,

ինչ մեզ համար մնաց չբացահայտված, շատ ավելի է խոսում Մկրտումյան մարդու վե-  
հույթյան ու մեծության մասին: Եթե սիրել, ապա Մկրտումյանի պես՝ անչափելի ու ան-  
մնացորդ: Եթե սիրել, Մկրտումյանի պես գուլալ ու ջինջ, ա՛յն մոմի նման, որի մաքրու-  
թյունը երևում է միայն այրվելուց հետո, երբ արդյունքում չի մնում ոչ մի խարամ, ոչ մի  
չայրված հյուլ:

Եթե ինչ-որ բան էլ մնում է՝ դա չճերացող հիշողությունն է:



## ՀԱՍՄԻԿ ԹԵԼԵՄԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության  
ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - h.harutyunyan@ysu.am

### ՅՈՒՐԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝

#### ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՉ

**Բանալի բառեր.** մանկավարժական գործունեություն, կազմակերպիչ, հիմնադիր, կրթական գործ, մասնագետների պատրաստում, ուսումնական պլան:

Յուրի Իսրայելի Մկրտումյանը, 1957 թ. ոսկե մեդալով ավարտելով Թբիլիսիի թիվ 86 տասնմեկամյա միջնակարգ դպրոցը, ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որը գերազանցության դիպլոմով ավարտում է 1962 թ.՝ պատմաբան-ազգագրագետի որակավորմամբ: Թեև Մոսկվայում նրան սպասվում էր աշխատանքային խոստումնալից հեռանկար (ստացել էր մի քանի առաջարկներ), սակայն նախընտրում է համեստ աշխատանք նախնիների հայրենիքում՝ լաբորանտի, ապա կրտսեր գիտաշխատողի պաշտոնը Հայաստանի ԳԱ ՀԱԻ ազգագրության սեկտորում: 1968 թ. Մոսկվայում պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն, 1974 թ. ստանում է դոցենտի կոչում:

1970 թ. Յու. Մկրտումյանը, «Ազգագրության հիմունքներ» դասավանդելու առաջարկով, հրավեր է ստանում ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնից: Կարճ ժամանակ անց նրա անմիջական ջանքերով ուսումնական ծրագրում տեղ գտան ազգագրական մի շարք առարկաներ, և ամբիոնը վերանվանվեց «Հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության»: Յու. Մկրտումյանն ստանձնեց «ազգագրության ցիկլի» ղեկավարությունը՝ աստիճանաբար այն վերածելով ազգագրական կադրերի պատրաստման հիմնական «դարբնոցի»:

Ելնելով ազգագրագետ զիտնականի և մանկավարժի հայեցակետից՝ Յու. Մկրտումյանը գիտական լուրջ մոտեցում էր ցուցաբերում ուսումնական գործի կազմակերպմանը: Վաղուց էր հասունացել բարձրագույն կրթության ազգագրագետ-պատմաբան պատրաստելու համար նախատեսված առարկայացանկն ու ծրագրերը թարմացնելու, ուսմանը հատկացված ժամաքանակն ավելացնելու խնդիրը: Լինելով նախաձեռնող և առաջամարտիկ՝ այս գործում նա համատեղում էր և՛ ՄՊՀ-ում ստացած գիտելիքները, և՛ աշխարհի տարբեր համալսարաններում ընդունված մեթոդներն ու սկզբունքները, և՛ հայ ավագ գործընկերների բազմամյա փորձն ու հմտությունները:

Տարիների նպատակասլաց աշխատանքը հանգեցրեց այն բանի, որ հանրապետությունում բարձրացավ ազգագրագետների պահանջարկը, և 1989 թ. իրականացավ Յու. Մկրտումյանի նվիրական երազանքներից մեկը՝ ԵՊՀ Պատմության ֆակուլտետում բաց-

վեց Ազգագրության ամբիոն: Որպես վաստակի գնահատական, նաև հետագա հաջողությունների ակնկալիքով՝ ԵՊՀ ղեկավարությունն ու գործընկերներն ամբիոնի ղեկավարությունը վստահեցին հիմնադրին՝ Յու. Մկրտումյանին: Առանձին ամբիոնի գոյությունը նոր հնարավորություններ ընձեռեց «ազգագրություն» մասնագիտության հետագա բարգավաճման համար:

Ազգագրական կադրերի պատրաստման գործն ընթանում էր չորս հիմնական ուղղություններով՝ հայ ազգագրություն, Կովկասի ժողովուրդների ազգագրություն, աշխարհի ժողովուրդներ, ազգագրական գիտության մեթոդաբանությունը, տեսությանն ու պատմությանը վերաբերող հիմնախնդիրներ: Ըստ այդմ, դասավանդվող առարկաներն ունեին տեսամեթոդական, ռեզիոնալ և թեմատիկ բովանդակություն:

Ուսումնական գործընթացում առաջին քայլերից մեկը «Հայ ազգագրության» դասավանդման խորացումն էր. առարկայի առանձին հատվածները, համապատասխան անվանումներով՝ «Հայոց կենսապահովման մշակույթը», «Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը», «Հայոց արտադրական մշակույթը», «Հայոց հումանիտար մշակույթը», սկսեցին դասավանդվել ըստ մշակույթի՝ իր կողմից մշակված քառամաս մոդելի: Հայ ազգագրությունը լիարժեք ու ամբողջական ներկայացնելու նպատակով ուսումնական ծրագրում ընդգրկվեց «Հայերի էթնոգենեզը և էթնիկ պատմության հիմնական փուլերը» առարկան: Յու. Մկրտումյանը շատ կարևորում էր սփյուռքահայ համայնքների ազգագրական ուսումնասիրությունը, ուստի առարկայացանկում ավելացավ «Հայ Սփյուռքի ազգագրություն» դասընթացը: Այն պարբերաբար լրացվում էր տարբեր երկրների հայ համայնքներից հրավիրված մասնագետների դասախոսություններով:

Ուսումնական պլանում ավելացավ «Կովկասի ժողովուրդների ազգագրություն» առարկայի ժամաքանակը: Հետևելով տարածաշրջանում ընթացող զարգացումներին և ճիշտ ժամանակին գնահատելով իրողությունը՝ անհրաժեշտ համարեց միջէթնիկ հարաբերությունների ժամանակակից պատկերը ուսանողներին ներկայացնել նոր՝ «էթնիկ կոնֆլիկտները Կովկասում» դասընթացի շրջանակում: Պարբերաբար դասախոսություններ կարդալու էր հրավիրում Ռուսաստանի ԳԱ Միկլուխո-Մակլայի անվան Ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի Կովկասի բաժնի վարիչ Ս.Ա. Հարությունովին, որին ունկնդրում էին նաև դասախոսներն ու գիտաշխատողները, բոլոր նրանք, ում հետաքրքիր էր Կովկասն ու այնտեղ ընթացող էթնոքաղաքական գործընթացները. դրանով իսկ ամբիոնը մեծ նպաստ բերեց կովկասագիտական գիտելիքի հանրահռչակմանը մեր երկրում: Հայագիտական և կովկասագիտական գիտելիքը Յու. Մկրտումյանը հանրայնացնում էր ոչ միայն հայ ուսանողության և գիտական շրջանակում, այլև աշխարհի տարբեր համալսարաններում դասավանդելով: 1993 թ. հունվար-մայիս ամիսներին «Ֆուլբրայթ» ծրագրի շրջանակում դասավանդել է Ֆիլադելֆիայի Թեմփլ համալսարանում: Հպարտությամբ նշում էր, որ Մոսկվայի պետական համալսարանում երկու կարգավիճակ է ունեցել՝ և՛ ուսանողի, և՛ դասախոսի:

XX դ. վերջում ողջ աշխարհում ընթացող զարգացումները պահանջեցին վերանայել նաև ուսումնական գործընթացը, այսպէս՝ «Ընդհանուր ազգագրոյան պատմութիւն» առարկան վերանվանվեց «Ազգագրական դպրոցներ»: «Արտասահմանյան երկրների ժողովուրդների ազգագրութիւնը», «Ռեգիոնալ ազգագրութիւն» ընդհանուր խորագրով, բաժանվեց «Ասիայի ժողովուրդների ազգագրութիւն», «Եվրոպայի ժողովուրդների ազգագրութիւն», «Աֆրիկայի ժողովուրդների ազգագրութիւն», «Ամերիկայի ժողովուրդների ազգագրութիւն», «Ավստրալիայի և Օվկիանիայի ժողովուրդների ազգագրութիւն» առարկաների: Նպատակն էր, ըստ Յու. Մկրտումյանի, ուսանողներին խորութեամբ ներկայացնել աշխարհի ժողովուրդներին՝ ըստ պատմազգագրական տարածաշրջանների: Նա կարևորում էր, որ առարկան դասավանդի հատկապէս այդ տարածաշրջանն ուսումնասիրող, տվյալ հիմնախնդրով զբաղվող մասնագետը:

Նկատի ունենալով, որ հայերն իրենց էթնոմշակութային զարգացման ընթացքում դարեր շարունակ եղել են Առաջավոր Ասիա պատմազգագրական տարածաշրջանում և առաջավորասիական մշակույթի կրող են, հատկապէս կարևորվեց ասիական այդ տարածաշրջանի ժողովուրդների խորացված ուսումնասիրութիւնը: Հաշվի առնելով ժամանակակից մտեցումները՝ նպատակահարմար գտավ դասընթացը վերանվանել «Հարավարևմտյան Ասիայի ժողովուրդների ազգագրութիւն»:

Տնական աշխատանքային փորձի և գիտամանկավարժական պրպտումների արդյունքում նա հանգել էր այն եզրակացոյան, որ ամբիոնում դասավանդվող առարկաների գերակշիռ մասը պետք է լինի կայուն, իսկ մեկ երրորդը կարող է փոփոխվել՝ կապված գիտութեան, քաղաքական ու տնտեսական իրավիճակների, այսինքն՝ ժամանակի պահանջների հետ: Այսպէս. «ԽՍՀՄ ժողովուրդների ազգագրութիւն» առարկան դուրս եկավ ծրագրից, և այդ ժողովուրդների ուսումնասիրութիւնը շարունակվեց «Ռեգիոնալ ազգագրութիւն» համապատասխան հատվածների շրջանակում:

Տարեցտարի ընդլայնվում էր ամբիոնի կողմից իրականացվող ազգագրական հետազոտութիւնների շրջանակը, ուստի մի խումբ առարկաներ պարբերաբար փոփոխվում էին: Տարբեր տարիների դասավանդվել են «Քաղաքի ազգագրութիւն», «Ֆիզիկական մարդաբանութիւն», «Էթնոերաժշտագիտութիւն», «Էթնոժողովրդագրութիւն», «Էթնոհոգեբանութիւն», «Էթնոսոցիոլոգիա», «Երկրագործական մշակույթներ», «Անասնապահական մշակույթներ», «Արհեստագործական մշակույթներ» և այլ առարկաներ:

Քանի որ բանահյուսական նյութը ազգագրական իրողութիւնների յուրօրինակ աղբյուր է, և ազգագրագետի համար շատ կարևոր է նաև այդ գիտելիքը, առարկայացանկում իր արժանի տեղն ունէր «Բանագիտութիւն» առարկան:

Ամբիոնի շրջանավարտները տարեցտարի համալրում էին նաև թանգարանների, հատկապէս Հայաստանի ազգագրոյան պետական թանգարանի գիտաշխատողների շարքը. թանգարանագիտական տեսական գիտելիքներով նրանք զինվում էին «Ազգագրական թանգարանագիտութեան» դասաժամերին:

Յու. Մկրտումյանի ջանքերով 1991թ. կարևոր փոփոխություն կատարվեց պատմության ֆակուլտետի ուսումնական պլանում: Որպեսզի ազգագրագետ ուսանողները ստանան կայուն և հիմնավոր գիտելիքներ, նրանք մասնագիտական առարկաներն սկսեցին անցնել երկրորդ կուրսից, ոչ թե երրորդ, ինչպես ընդունված էր պատմաբան մյուս ուսանողների համար:

Քանի որ ուսումնական պլանով առարկայացանկն, այնուամենայնիվ, սահմանափակ էր, կիրառվեց ֆակուլտատիվ դասընթացների մշակույթը:

Ուսումնական գործընթացի հիմնական ուղղություններն արտացոլվում էին ոչ միայն դասավանդվող առարկաների ընտրության մեջ, այլև կուրսային ու դիպլոմային աշխատանքների թեմաներում, որոնց զգալի մասը հետագայում շարունակվում էր որպես առենախոսական աշխատանք: Մկսած 1980-ական թվականներից՝ ազգագրագետ շրջանավարտների մի սովոր խումբ, նրա անմիջական ղեկավարությամբ ու գիտական աջակցությամբ, պաշտպանեց թեկնածուական ատենախոսություններ: Նշենք, որ դա նաև այն բանի շնորհիվ էր, որ դեռ այդ տարիներից սեփական նախաձեռնությամբ Ազգագրության ամբիոնի ուսանողների համար դասավանդում էր «Գիտական աշխատանքի մեթոդները» շատ կարևոր դասընթացը: Դասընթացի շրջանակում Յու. Մկրտումյանը մանրամասն, կոնկրետ թեմաների օրինակով բացատրում էր կուրսային, դիպլոմային և գիտական այլ աշխատանք գրելու հմտությունները, ներածության, վերջաբանի, պարագրաֆների կամ գլուխների կառուցվածքը, շարադրման մեթոդներն ու գիտական ապարատը: Նկատենք, որ գիտական աշխատանքի սկզբունքներին ծանոթացումը սկսում էր՝ առաջին հերթին թեմայի ընտրության նրբությունները ներկայացնելով:

Ուսումնական գործընթացում կարևորում էր նաև մայրենի լեզվով դասագրքերի առկայությունը: «Ազգագրության հիմունքներ» հայերեն դասագրքի հրատարակությունը, որը նրա հերթական նվիրական երագանքն էր, անկատար մնաց: Ռուսերենից թարգմանեց Յու. Բրովկեյի խմբագրությամբ դասագիրքը, որը, սակայն, ինչ-ինչ պատճառներով չհանձնեց տպագրության:

Դեռևս Մոսկվայում ուսանելու տարիներին նա ձեռնարկել էր ստեղծել մասնագիտական գրականության մի եզակի գրադարան, որից մինչ օրս օգտվում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները, և՛ բոլոր ցանկացողներն առհասարակ: Դա ուսումնական գործին նպաստող բացառիկ հնարավորություն էր, եթե հաշվի առնենք, որ այն ժամանակ այդ գրքերը, թվայնացված չլինելով, բոլորին հասանելի չէին:

Համալսարանում ստացած ազգագրական տեսական գիտելիքներն ուսանողները կիրառում էին նաև գործնականում. փորձառու մասնագետների ղեկավարությամբ միջոցառումներ էին կազմակերպում՝ նվիրված ժողովրդական տոներին, ուսեստին, տարագին և այլն, այսպիսով, հայոց մշակույթի տարբեր բնագավառների հանրառոտակաման գործում ևս ամբիոնն իր ավանդն ու դերն է ունեցել:

Ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է կազմում ազգագրագետ ուսանողների անմիջական շփումը ժողովրդի հետ, դաշտային նյութերի գրառումը: Այդ հմտություններն ուսանողները ձեռք էին բերում համալսարանի ազգագրական գիտարշավներում (ՀԱԳ), որին մասնակից ամեն մի ուսանող ուներ և՛ անհատական թեմատիկ ծրագիր, և՛ նախապես կազմված հարցարան: Այսպիսով, ուսանողները գիտարշավին պատրաստվում էին նախապես՝ օգտագործելով «Դաշտային ազգագրական հետազոտությունների մեթոդներ», «Ազգագրական գիտության աղբյուրները» դասընթացների շրջանակում ստացած գիտելիքները ևս:

Յու. Մկրտումյանի եռանդուն և արդյունավետ գործունեության այս ասպարեզը առանձին ուսումնասիրության է արժանի: Նկատենք միայն, որ եղել են դեպքեր, երբ ազգագրագետ ուսանողների խումբը հրաժարվել է Մոսկվա-Լենինգրադ թանգարանային պրակտիկայից՝ գերադասելով մասնակցությունը ՀԱԳ-ին: ՀԱԳ-ը մի ուրույն մոդել էր հայկական գերդաստանական ընտանիքի, որտեղ կար նահապետ, և յուրաքանչյուր անդամ ուներ իր պարտականություններն ու իրավունքները: Որպես արշավախմբի պետ՝ մեծագույն պատասխանատվություն ուներ գիտարշավի յուրաքանչյուր անդամի նկատմամբ, միաժամանակ չափազանց խիստ էր ընդունված կարգուկանոնը խախտելու դեպքում: Ամենախիստ պատիժը, անկախ կարգավիճակից, կարգազանցին տուն ուղարկելն էր, որի մասին անբեկանելի որոշումը հայտնում էր երեկոյան հավաքի ընթացքում: Հայաստանի համար նույնիսկ ամենաձանր տարիներին համալսարանի ազգագրական գիտարշավները չդադարեցին, որովհետև, շնորհիվ իր անբասիր համբավի, միշտ հնարավորություն էր գտնում միջոցներ հայթայթելու:

ՀԱԳ-ի բարձր կազմակերպվածության գործում կարևոր դեր են ունեցել իր ուսանողական գիտարշավների ընթացքում նկատած թերություններից քաղած դասերը: Հաճախ էր պատմում իր առաջին ազգագրական գիտարշավի մասին, որ կայացել էր Դաղստանում, 1958 թ. ամռանը, առաջին կուրսն ավարտելուց հետո:

Յու. Մկրտումյանը կարևորում էր նաև տարբեր սերունդների ազգագրագետների գիտական շփումը: Այն ապահովում էր՝ ՀԱԳ-երին ազգագրական հիմնարկությունների ներկայացուցիչներին հրավիրելով, նաև ազգագրական սեմինարների շրջանակում, որոնք կազմակերպվում էին և՛ Սարդարապատում՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, և՛ Ազգագրության ամբիոնում՝ դրանով իսկ նաև պահպանելով ազգագրական թանգարան-ամբիոն սերտ կապը:

Ամենափոքր առիթն անգամ բաց չէր թողնում կազմակերպելու ԽՍՀՄ տարբեր համալսարանների և ԵՊՀ ազգագրագետ ուսանողների հանդիպումներ, հայ ուսանողներին ծանոթացնելու անվանի ազգագրագետների հետ. այսպես՝ 1987 թ. դեկտեմբերին, ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից հրավիրված հայտնի գիտնականների մասնակցությամբ Թբիլիսիում նշվում էր վրացի անվանի ազգագրագետ Ա. Ի. Ռոբակիձեի 80-ամյակը: Յու. Մկրտումյան գիտնականի ու մանկավարժի համար դա հիանալի առիթ էր՝ ծա-



նորացնելու երկու համալսարանների ազգագրագետ ուսանողներին: Չխուսափելով ուսանողներին տեղափոխելու և բազմաթիվ այլ հոգսերից՝ նա ուսանողներին հնարավորություն ընձեռեց հարստացնելու «Գովկասի ժողովուրդների ազգագրություն» առարկայի շրջանակում ստացած գիտելիքը՝ ապահովելով անմիջական շփում Գովկասի ժողովուրդների ներկայացուցիչների, նրանց մշակույթների հետ:

Յու. Մկրտումյանը յուրաքանչյուր ուսանողի վերաբերվում էր որպես հավասարի, որպես ապագա գիտնականի: Անչափ հիասթափվում էր նրանց անհաջողություններից և ոգևորվում հատկապես գերազանցիկներով: Գուցե դա պայմանավորված էր նրանով, որ ժամանակին նրա անունը Մոսկվայի պետական համալսարանի թերթում նշվել էր «Լավագույնը լավագույններից» շարքում:

Հաճախ Յու. Մկրտումյանին կշտամբում էին ուսանողներին «երես տալու» համար, գտնելով, որ դրանից մեծամտանում են և իրենց կայացած գիտնականներ համարում: Այս հարցի շուրջ նա ուներ իր կարծիքը. «Մի փոքր ավելի գովասանքը օգտակար է, խելացի ուսանողին ոգևորում է»: Թերևս չարժե անտեսել այն փաստը, որ նրա որոշ ուսանողներ հետագայում դարձան քաղաքական և պետական գործիչներ:

Յու. Մկրտումյանը, որպես մանկավարժ և երկրի քաղաքացի, մեծագույն պատասխանատվությամբ էր վերաբերում նաև ազգագրագետ շրջանավարտների հետագա գործունեության հարցերին: Որոշ ազգագրագետներ դեռևս ուսանողական տարիներից էին ընդգրկվում աշխատանքի գիտամշակութային տարբեր կառույցներում, այդ թվում՝ իր ղեկավարած Ազգագրական լաբորատորիայում, էթնոմշակութային հետազոտությունների «Ուստան» կենտրոնում, որտեղ զբաղվում էին Ադրբեջանից բռնագաղթածների ադապտացիայի, ազգային փոքրամասնությունների և այլ հիմնախնդիրներով<sup>1</sup>: Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում ջանք չխնայեց՝ օգնելու ազգագրագետներին՝ աշխատելու հատկապես մասնագիտական ոլորտում:

Նրան հաճախ էին հանդիմանում, որ ուսանողների խնդիրների լուծմանը շատ ժամանակ է տրամադրում, որից տուժում էր իր գիտական գործունեությունը: Այս հարցում էլ հստակ համոզմունք ուներ. «Պետք է շատ կարդալ, իսկ գրել՝ թեկուզ քիչ, բայց բովանդակալից, էական, խորը»:

Յու. Մկրտումյանի մանկավարժական հմտությունները, ուսումնական գործի կազմակերպման անկրկնելի տաղանդը հանրահայտ էին ու կարծես թե սովերել էին նրա գիտական գործունեությունը: Յու. Մկրտումյանը և՛ մեծ մանկավարժ էր, և՛ միաժամանակ մեծ գիտնական: Հեղինակ է շուրջ չորս տասնյակ գիտական աշխատությունների, որոշ դրույթներ նորամուծություն են, զգալի ներդրում գիտության, հատկապես մշակույթի

<sup>1</sup> Տե՛ս օրինակ՝ *Մկրտումյան Յու.* (խմբ. և հեղինակ), Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I, Երևան, 2000: *Մկրտումյան Յու.* (խմբ. և հեղինակ), Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II, Երևան, 2005:

տեսության մեջ: Նա ոչ միայն հետազոտել է հայերի (նաև Կովկասի ժողովուրդների) անանապահական մշակույթը, կենսապահովման մշակույթը՝ հատկապես ուտեստը, բնակավայրը, բնակարանային համալիրը, այլև գրել է տեսական աշխատանքներ (Մ. Հարությունովի, նաև Է. Մարգարյանի հետ համահեղինակությամբ) առհասարակ մշակույթի տարրերի դասդասման, կենսապահովման մշակույթի ուսումնասիրության, կենսապահովման մեխանիզմների տիպաբանական հետազոտության հիմնախնդիրների վերաբերյալ: Մշակույթի՝ այսպես կոչված «քառամաս մոդելի» հեղինակը իրավամբ Յու. Մկրտումյանն է<sup>2</sup>: Իրեն երբեք ազգաբան չանվանեց, սակայն նրա հետաքրքրություններն ընդգրկում էին ազգաբանական լուրջ հիմնախնդիրներ, նա իսկապես խորը տեսաբան ու վերլուծաբան էր:

Ազգագրության բնագավառում Յու. Մկրտումյանի հաջողության գրավականներից մեկը իր էությունն էր, այդ գործի համար շահեկան բնավորությամբ ու խառնվածքով. նա զրուցասեր էր, շփվող, կենսուրախ, լավատես, բարյացակամ: Մանկավարժության, կրթական գործի կազմակերպման մեջ նրա աննախադեպ ձեռքբերումներն առաջին հերթին պայմանավորված էին իր գործին անմնացորդ ու անշահախնդիր նվիրումով, գիտականորեն հիմնավորված մեթոդների ու անհատական հմտությունների կիրառմամբ, և, վերջապես, ուսանողների հիշողության մեջ կատարյալ մանկավարժի նրա կերպարը մնաց անզերագանցելի նաև այն պատճառով, որ նա ոչ միայն մեծ մտավորական էր, այլև բարոյական բարձր նկարագրով Մարդ:

Դասախոսության ժամանակ մատուցած նյութը մնայուն գիտելիքի վերածելու հաջողված մեթոդ էր կիրառում՝ *էքսպրես* հարցումներ. դասի սկզբում մի քանի ուսանողի հարցնում էր նախորդ դասախոսության նյութը և գնահատում էր: Ոչ միայն ազգագրագետ, առհասարակ պատմաբան ուսանողները «Ազգագրության հիմունքների» քննությանը պատրաստվում էին կիսամյակի ընթացքում՝ դրանով իսկ ձեռք բերած գիտելիքը հիշելով ընդմիջտ: Դասախոսությունները համեմուն էր տպավորիչ օրինակներով, նյութը մատուցում էր կենցաղային հետաքրքիր պատմություններով, որպեսզի դրանք հիշվեն ողջ կյանքում: Դասախոսություններում կար ներշնչանք, ոգեշնչում: Լինելով արտիստիկ կերպար՝ նրան հաջողվում էր դասախոսության որոշ հատվածներ ներկայացնել որպես փոքրիկ բեմադրություններ:

<sup>2</sup> Տե՛ս օրինակ՝ *Mkrtumian Yu.*, Changing Life Patterns in the Caucasus: The Contributions of Agriculture and Cattle Breeding, Anthropology and Social Change in Rural Areas, The Hague-Paris-New York, 1979, pp. 223-234. *Արուտոն Ս., Մարգարյան Է., Մկրտումյան Յու.*, Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса. Советская этнография, 1983, № 2, сс. 22-31. *Արուտոն Ս., Մկրտումյան Յու.*, Проблемы классификации элементов культуры (на примере армянской системы питания). Советская этнография, 1981, № 4, сс. 3-15. *Արուտոն Ս., Մկրտումյան Յու.*, Проблемы типологического исследования механизмов жизнеобеспечения в этнической культуре. -Типология основных элементов традиционной культуры, М., 1984, сс. 19-33. *Մկրտումյան Յու.*, Компоненты культуры этноса, *Մարգարյան Է.Ս.* (отв. ред.), Методологические проблемы исследования этнических культур. Материалы симпозиума, Ереван, 1978, сс. 42-47.

Ուսանողների այն դժգոհություններին, թե որոշ դասախոսների ոճը ձանձրալի է, պատասխանում էր իր ուսանողական կյանքից քաղած դասով. «Ե. Մելետիևսկին բանագիտության ասպարեզում խոշորագույն մասնագետ էր, սակայն նրա ձայնի առողանությունից կարելի էր բնել, և դասախոսությունից առաջ լվացվում էինք, թարմանում: Ուսանողը գիտական հասունության որոշակի մակարդակ պետք է ունենա, որպեսզի գիտնականին գնահատի ոչ նրա ձայնի տոնով»:

Ազգագրագետի կոչմանը մեծանուն գիտնականը հավատարիմ մնաց նաև՝ Հայաստանի Հանրապետության համար բախտորոշ տարիներին (1994-1997 թթ.) ստանձնելով ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի շատ պատասխանատու պաշտոնը Ռուսաստանի Դաշնությունում: Քաղաքական գործունեությանը զուգահեռ՝ նա շատ բան արեց երկու պետությունների կրթական ու մշակութային համագործակցության խորացման ուղղությամբ<sup>3</sup>:

Դիվանագիտական առաքելությունն ավարտելուց հետո վերադարձավ հարազատ ինստիտուտ, իսկ 2000 թ. կրկին ստանձնեց ամբիոնի ղեկավարությունը: 2003թ. համալսարանական հերթական ազգագրական գիտարշավից վերադառնալու հաջորդ օրը ուղեղի ծանր կաթված ստացավ: Լինելով պայքարող անձնավորություն, որ հաղթահարել էր բազում դժվարություններ՝ նա չնահանջեց. աներևակայելի ջանքերի շնորհիվ կարողացավ վերադառնալ լսարան, կրթել նոր սերունդների, սակայն լիովին վերականգնվելն անհնար էր: Քաջ գիտակցելով, որ այլևս հնարավոր չէ լիարժեքորեն նվիրվել սիրած գործին (իսկ դա նրան հատուկ չէր), և ելնելով առաջին հերթին ամբիոնի շահերից՝ 2004 թ. սեպտեմբերին դիմեց համալսարանի ղեկավարությանը՝ դոցենտ-խորհրդատուի հաստիքի փոխադրվելու խնդրանքով: Այդ պահից Ազգագրության ամբիոնի առանձին գոյությունը դադարեց:

Թեև Յու. Մկրտումյանի նվիրական մյուս երազանքը՝ պատմության ֆակուլտետում բացել Ազգագրության բաժին, իր կենդանության օրոք չիրականացավ, սակայն նա անմիջական մասնակցություն ունեցավ Մշակութաբանության և Կովկասագիտության բաժինների բացման գործում: Անուրանալի է Յու. Մկրտումյանի դերը նաև 2019-2020 ուսումնական տարում Հնագիտության և ազգագրության բաժնի բացման գործում, քանզի նա իրական հիմք էր ստեղծել, որպեսզի աշակերտները շարունակեն մեծ ուսուցչի անավարտ գործը:

Յու. Մկրտումյանի գիտամանկավարժական գործունեության մեծագույն ձեռքբերումներից մեկն այն է, որ ստեղծեց ազգագրական դպրոց, որի ներկայացուցիչներն իրենց կարևոր տեղն ունեն ոչ միայն կրթության, գիտության և մշակույթի ասպարեզում, այլև բազմաթիվ հետազոտական ծրագրերով իրենց նպաստն են բերում Հայաստանի Հանրապետության առջև ծառայած բազում խնդիրների լուծմանը:

<sup>3</sup> Տե՛ս *Мкртумян Ю.*, Армения-Россия: многолетние связи и современные отношения. Дипкуррьер, 1997, вып. 6.



АСМИК ТЕЛЬМАНОВНА АРУТЮНЯН

Доцент кафедры археологии и этнографии ЕГУ,  
кандидат исторических наук  
эл. почта: h.harutyunyan@ysu.am

ЮРИЙ МКРТУМЯН - ПЕДАГОГ И  
ОРГАНИЗАТОР ОБРАЗОВАТЕЛЬНОГО ДЕЛА

Резюме

Цель статьи - оценивать педагогическую деятельность выдающегося армянского этнографа Юрия Мкртумяна, его заслуги в открытии отдельной кафедры этнографии в ЕГУ, в подготовке этнографов-специалистов. В статье также обсуждаются его восприятия и конкретные шаги (основанные на научных принципах) в совершенствовании образовательного дела.

Ключевые слова: педагогическая деятельность, организатор, основатель, образовательное дело, подготовка специалистов, учебный план.

HASMIK TELMAN HARUTYUNYAN

Associate Professor of the Chair of  
Archaeology and Ethnography YSU, Ph D  
e-mail: h.harutyunyan@ysu.am

YURI MKRTUMIAN - THE EDUCATIONAL  
SPECIALIST AND ORGANIZER OF EDUCATIONAL JOB

Summary

The aim of this paper is to evaluate the pedagogical activities of the prominent Armenian ethnographer Yuri Mkrumian. The paper seeks to present Yuri Mkrumian's efforts in establishment of the Chair of Ethnography and preparing specialists. This paper also discusses Yuri Mkrumian's perceptions, thoughts, attitude on organizing of educational job, including the improvement of the curriculum based on scientific principles.

Keywords: pedagogical activities, organizer, founder, educational job, training of specialists, curriculum.



ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱՅԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱԹ-ի գիտական գծով փոխտնօրեն,  
ՀԱԻ ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - sv\_ethnomuseum@yahoo.com

ՅՈՒՐԻ ՄՎԻՏՈՒՄՅԱՆԻ ԴԵՐՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Բանալի բառեր.** ազգագրական գիտարշավներ, դաշտային աշխատանք, դասընթացների շարք, ազգագրության թանգարան:

Յուրի Բարայելի Մկրտումյանը հայտնի պատմաբան-ազգագրագետ էր: Նա հայ ազգագրության և Կովկասի ժողովուրդների ազգագրության հիմնախնդիրների խոշորագույն մասնագետներից էր: Պատահական չէ, որ նրա ծննդյան 80-ամյակը նշվեց 2019 թ. հուլիսի 17-ին: Դա առանձնահատուկ խորհուրդ ունեցող օր է: Այդ օրը ծնվել է մեկ այլ հայտնի ազգագրագետ՝ Ն.Ն. Միկլուխո-Մակլայը (1846 թ. հուլիսի 17-ին): Յուրի Մկրտումյանի նախաձեռնությամբ՝ 1970-1980-ական թվականներին նրա կազմակերպած ՀԱԳ-երում՝ Համալսարանի ազգագրական գիտարշավներում, ողջ անձնակազմով նշել են այդ օրը՝ որպես ազգագրագետի օր: Եթե Դերենիկ Սուրենի Վարդումյանը հայոց ազգագրության նահապետն էր, Էմմա Տիգրանի Կարապետյանը՝ հայոց ազգագրության մեծ տիկինը, ապա ընկեր Մկրտումյանը՝ հայոց ազգագրության առաջնորդն էր, առաքյալ, մեծ գիտնական, հրաշալի դասախոս և մեծատառով մարդ, պայծառ և խարիզմատիկ անձնավորություն, որի համար «ոչ» բառ, անհնարին բան չկար: Նա ամեն հնարավոր բան անում էր իր ուսանողների կրթությունը լիարժեք դարձնելու համար: Նա լավ գիտական ղեկավար էր: Կարողավ մեր աշխատանքները, հողվածները՝ նա ոչ միայն խմբագրում էր, այլ դրանք դարձնում էր վերլուծական, տրամաբանական և կառուցիկ, անում էր տեսական և ըստ էության առաջարկներ: Ամեն ինչին վերաբերում էր մեծ պատասխանատվությամբ և նվիրումով: Նա իր կյանքը նվիրեց ազգագրական գիտությանը՝ ստեղծելով ազգագրության ամբիոն, մկրտումյանական դպրոց: «Զարմանալի էություն էր, անսակարգ սիրով լեցուն: Մեր՝ առ իր օրինավոր ու օրինապաշտ ծնողները, որոնցից ազնվական հոգու դասեր էր ամել պաշտել հայրենիքը: Մեր՝ հանդեպ իր ուսանողները, որոնց վերաբերում էր ինչպես հայրը՝ իր սիրասուն զավակներին, որոնց թիվը հազարների է հասնում»,-այսպես են բնութագրել նրան ժամանակակիցները<sup>1</sup>:

Նրա շնորհիվ է, որ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի ժամանակավոր ցուցահանդեսների համար նախատեսված կենտրոնական դահլիճում կայացել է Օվկիանիայի մշակույթին և արվեստին նվիրված ցուցադրությունը (Ն.Ն. Միշու-

<sup>1</sup> Որպես պսակ ապրած կյանքի /Հայաստան, 18 նոյեմբերի, 2005, էջ 8:

տուռը կլինի հավաքածու): Դրա հյուրերն էին Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում կայացած 14-րդ համամիութենական ուսանողական ազգագրական կոնֆերանսի մասնակիցները: Այդ աննախադեպ կոնֆերանսը տեղի է ունեցել 1981 թվականի ապրիլի 21-25-ը: Կոնֆերանսի աշխատանքներն ընթացել են երեք նիստով՝ «Տնտեսական կենցաղ և նյութական մշակույթ», «Հասարակական կենցաղ և հոգևոր մշակույթ», «Էթնիկական և կենցաղամշակութային գործընթացները» վերնագրերով: Մասնակցում էին ԵՊՀ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Մ.Լոմոնոսովի անվան ՄՊՀ-ի, Ուրալի պետական համալսարանի, Դաղստանի Վ. Լենինի անվան պետական համալսարանի, Բաշկիրիայի Հոկտեմբերի քառասունամյակի անվան պետական համալսարանի, Ադրբեջանի Ս. Կիրովի անվան պետական համալսարանի, Ուդմուրտիայի պետական համալսարանի, Լենինգրադի Ա. Ժդանովի անվան պետական համալսարանի, Մարիական պետ. համալսարանի, Քիշնևի պետական համալսարանի, Թուրքմենիայի պետական համալսարանի, Տարտուի պետական համալսարանի, Չեչենա-ինգուշական պետ. համալսարանի, Ղազախական Ս. Կիրովի անվան, Սամարղանդի, Դոնեցկի, Կալմիկիայի, Թբիլիսիի, Տոմսկի Վ. Կույբիշևի անվան, Վիլնյուսի Վ. Կապուկասի անվան, Կուբանի, Թուրքմենական Ա. Գորկու անվան, Տաշքենդի պետական համալսարանների պատմության ֆակուլտետների ուսանողները:

Ի թիվս այլոց Կազմկոմիտեում էին ՀԱՊԹ-ի տնօրեն Լավրենտի Աշոտի Բարսեղյանը, 5-րդ կուրսի ուսանողներ Արթուր Մկրտչյանը, Ֆիրդուս Ջաքարյանը և 4-րդ կուրսի ուսանողուհի Սվետլանա Պողոսյանը, որոնք հետո դարձան ՀԱՊԹ-ի գիտաշխատողներ<sup>2</sup>: Դրան զուգահեռ նա մեծ ավանդ ունեցավ նաև Հայաստանի ազգագրության պետական թանգարանի(որի իրավահաջորդն է Հայոց ազգագրության թանգարանը) գիտական գործունեության կայացման, թանգարանը համապատասխան որակյալ կադրերով ապահովելու շնորհակալ գործում:

Յուրի Մկրտումյանն ստացել է գերազանց կրթություն: 1957 թվականին ընդունվել է Մոսկվայի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ, որն 1962-ին ավարտել է պատմություն/ազգագրություն մասնագիտացմամբ և ստացել «պատմաբանի, պատմության, սահմանադրության և քաղաքական գիտելիքների հիմունքների ուսուցչի» որակավորում:

1968 թվականին փայտն պաշտպանել է «Անասնապահության ձևերը Արևելյան Հայաստանում (19-րդ դ. երկրորդ կես-20-րդ դ. սկիզբ) պատմաազգագրական ուսումնասիրություն» (ռուս.) խորագրով թեկնածուական ատենախոսություն՝ ՄՍՀՄ ԳԱ Ն.Ն. Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության ինստիտուտում:

ՀՄՍՀ ԳԱ ներկայացուցչության հրավերով՝ աշխատանքի է ընդունվել Հնագիտության և ազգագրության ինստիտուտում (ՀԱԻ) որպես ազգագրության սեկտորի լաբորանտ

<sup>2</sup> Программа 14 всесоюзной этнографической студенческой конференции, Ереван, Типография Ереванского госуниверситета, 1981, 16 стр.

(08.1962-02.1963): 1963 թվականի փետրվարից մինչև 1971 թ. հունվար աշխատել է ՀԱԻ-ում որպես կրտսեր գիտաշխատող: 1970 թվականից հրավիրվել է դասավանդելու ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի Հնագիտության և աղբյուրագիտության ամբիոնում սկզբում՝ որպես ավագ դասախոս, ապա՝ ամբիոնի ղոցենտ:

1973 թվականին ամբիոնը կոչվել է հնագիտության, ազգագրության և աղբյուրագիտության: Նրա գործուն ջանքերով է, որ 1977-ից ամբիոնը վերանվանվում է Հնագիտության և ազգագրության: 1989 թվականին նրա նախաձեռնությամբ և անմիջական ջանքերով բացվել է Ազգագրության առանձին ամբիոն, որը նա որպես հիմնադիր վարիչ ղեկավարել է մինչև 1994 թվականը: Գրեթե միաժամանակ նա հիմնել է Ազգագրական լաբորատորիա, որն այլ հարցերի շարքում զբաղվում էր նաև հայ փախստականների հարմարվողականության գործընթացի ուսումնասիրությամբ: 1994 թվականի ապրիլի 12-ից նա ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդականն էր, իսկ նույն թվականի հունիսին դառնում է ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր առաջին դեսպանը: 2000 թվականի նոյեմբերից Յուրի Մկրտումյանը կրկին ստանձնում է ԵՊՀ պատմության ֆակուլտետի Ազգագրության ամբիոնի վարիչի պարտականությունները: 08.1997 թ.-11.2000 թ. ժամանակահատվածում ՀԱԻ-ի առաջատար գիտաշխատող էր:

Սկսած 1962 թվականից՝ Յուրի Մկրտումյանը եղել և դաշտային հետազոտություններ է իրականացրել ավելի քան 700 գյուղում, 30 քաղաքում<sup>3</sup>:

Նա ունեցել է նաև անբասիր կուսակցական ուղի, եղել է սկզբունքային և նվիրված կուսակցական. 1965 թվականից նա Կոմկուսի անդամ էր, իսկ 1988 թվականի նոյեմբերի 17-ից ԵՊՀ Կուսկոմի քարտուղարն էր: 1990-09.1991թթ. Հայաստանի ԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամ էր:

Տակավին 1980-ին Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հիմնադիր-տնօրեն Լ. Բարսեղյանի՝ ապրիլի 23-ի թիվ 168 հրամանով թանգարանում երիտասարդ գիտական աշխատողների որակավորման հետագա բարելավման նպատակով ապրիլի 15-ից մինչև 1986 թվականի սեպտեմբերի 1-ը ժամկետով, համատեղության կարգով, որպես ավագ գիտական աշխատող, աշխատանքի է ընդունվել ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ղոցենտ, պ.գ.թ. Յուրի Մկրտումյանը: Հիմք է հանդիսացել Հայկ. ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության և ՀՍՍՀ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության փոխադարձ համաձայնությունը և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր ԵՊՀ-ի 1980 թ. մարտի 15-ի թիվ 0 կ/80 համաձայնությունը: Տնօրեն Լ. Բարսեղյանի՝ 1982 թվականի մայիսի 2-ի թիվ 249 հրամանով թանգարանի գիտական ցուցադրության հիմնական պլանի քննարկման աշխատանքներին մասնակցելու, դաշտային գիտահավաքչական արշավախմբերի նախապատրաստման և գիտական կոնսուլտացիաներ կատարելու համար ժամանակավորապես՝ հունիսի 1-ից հուլիսի 1-ը ժամկետով, որպես ավագ գիտական աշխատող աշխատանքի է

<sup>3</sup> Տե՛ս՝ ՀՀ ազգային ժողովի պատգամավորության թեկնածության թերթիկը:

հրավիրվել Յուրի Մկրտումյանը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա նույն ժամանակահատվածում գտնվում է իր հերթական արձակուրդի մեջ:

Թանգարանի գիտական արխիվում պահպանվում է Յու. Մկրտումյանի՝ 1983 թվականի դեկտեմբերի 25-ի թվագրությամբ դիմումը, որտեղ նա պատրաստակամություն է հայտնել արձակուրդի շրջանում մասնակցել բացօթյա թանգարանի ցուցադրական պլանի կազմման աշխատանքներին: Այդ հիմքով նա դեկտեմբերի 26-ից հունվարի 19-ը ներառյալ ընդունվել է աշխատանքի՝ որպես ավագ գիտական աշխատող: 1984 թվականի մայիսի 31-ի թիվ 233 հրամանով թանգարանի ժողովրդական ճարտարապետության և կենցաղի բացօթյա ցուցադրության պլանի կազմման աշխատանքներին մասնակցելու նպատակով հունիսի 1-ից մինչև 30-ը ներառյալ նա աշխատել է թանգարանում:

1984 թվականի մայիսի 14-16-ը կայացած «1982-1983 թթ. ազգագրական և բանահյուսական դաշտային հետազոտությունների հանրագումարին» նվիրված հանրապետական գիտական նստաշրջանում հանդես է եկել «Էկոլոգիական և սոցիալ-մշակութային գործոնները հայոց անասնապահական տնտեսության պատմական շարժընթացի մեջ» խորագրով ուշագրավ զեկուցմամբ:

1985 թվականի փետրվարի 27-28-ին ՀԱՊԹ-ի կողմից կազմակերպված Հայաստանի բնակչության տնտեսական կենցաղի և նյութական մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջանում թանգարանի աշխատողները հանդես են եկել Տավուշի մարզի մշակույթի վերաբերյալ զեկուցումներով՝ ներկայացնելով դաշտային նյութեր, որոնք գրանցել էին Յուրի Մկրտումյանի կազմակերպած «Տավուշ» ազգագրական գիտարշավների ընթացքում:

1985 թվականի մարտի 13-15-ին ՀԱՊԹ-ի կողմից կազմակերպված՝ Հայաստանի բնակչության հասարակական կենցաղի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջանում առաջին նիստավարը եղել է Յուրի Մկրտումյանը, որտեղ թանգարանի ինը աշխատող հանդես են եկել Տավուշի մշակույթի վերաբերյալ նոր զեկուցումներով: Հատկանշական է, որ նա կազմակերպել է պարբերական բնույթ ունեցող ազգագրական գիտական արշավախմբեր Տավուշում, Ջավախքում, Վայոց ձորում՝ թե՛ դաշտային ազգագրական նյութեր գրառելու, և թե՛ թանգարանային նշանակություն ունեցող մշակութային արժեքներ հավաքելու նպատակով: Նա հրաշալի կազմակերպիչ էր: Ամեն ինչ կանխավ ծրագրված էր: Արշավախմբի անդամները նախապես կազմած ունեին ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հարցարաններ՝ նյութերը գրառելով ըստ դրանց: Նյութերը մաքրագրվում էին և պարտադիր քննարկվում աշխատանքային օրվա ավարտին, որպեսզի բաց մնացած հարցադրումները լրացվեին հաջորդ օրերին: Գիտարշավը մարդկանց հետ հաղորդակցվելու, շփվելու, տարեց բանասացների շրջանում վստահություն ձեռքբերելու մեծ դպրոց էր: Արշավախմբերում անդամների միջանձնային հարաբերությունները, շնորհիվ ընկեր Մկրտումյանի, խիստ կանոնակարգված էին, և պահպանվում էր ընկերայնությունը և բարյացակամությունը միմյանց



նկատմամբ: Գերազանց էր կազմակերպվում առօրյան և հանգիստը: Թանգարանից ընդ-  
գրկված որոշ գիտաշխատողներ դա համարում էին «անվճար սանատորիա»: Հաճախ  
գիտարշավներին մասնակցում էր ընկեր Մկրտումյանի լավագույն բարեկամ, ականա-  
վոր գիտնական Սերգեյ Հարությունովը: Մյո երկու մեծությունների հետ շփվելը, նրանց  
շնորհիվ դաշտային հետազոտություն կատարելու այբուբենին ծանոթանալը փորձի և  
հմտության ձեռքբերման մեծ հնարավորություն էր և դարբնոց սկսնակ ազգագրագետնե-  
րի ու թանգարանագետների համար:

1987 թվականի «Հայաստանի բնակչության տնտեսական և հասարակական կենցա-  
ղի, նյութական և հոգևոր մշակույթի պտորլեմների ուսումնասիրությունը» գիտական նս-  
տաշրջանի 16 զեկուցողներից 13-ը Յուրի Մկրտումյանի սաներն էին:

1990 թվականին Երվանդ Լալայանի ծննդյան 125-ամյակին նվիրված «1986-1987 թթ.  
Ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական ար-  
դյունքները» հանրապետական գիտական նստաշրջանի համար զեկուցումների հիմնա-  
դրույթներ են ներկայացրել Յուրի Մկրտումյանի սաները՝ Կարինե Բազեյանը՝ «Ասեղնա-  
գործությունը հայկական մանրանկարներում», Գրիգոր Աղանյանը՝ «Պայտի հետ կապ-  
ված արհեստները երկաթագործության համակարգում» և Սվետլանա Պողոսյանը՝ «Հա-  
ցուստը որպես սոցիալ-հոգեբանական ցուցիչ» խորագրերով:

Թանգարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված գիտաժողովին թանգարանից զե-  
կուցումներով հանդես են եկել 12 գիտաշխատողներ, որոնք անցել են «մկրտումյանա-  
կան» դպրոցի բովով:

Յուրի Մկրտումյանը նաև փորձառու դասախոս էր: Բացի Երևանի պետական հա-  
մալսարանի, 1970-1990-ական թթ. հրավիրվել է դասախոսելու Մոսկվայի և Թբիլիսիի  
պետական համալսարաններում: 1986 թվականին դասախոսություններ է կարդացել Հա-  
նոյի համալսարանում (Վիետնամ), 1993-ի մայիսին Թեմիլի համալսարանում (Ֆիլադել-  
ֆիա)՝ Ֆուլբրայթ հիմնադրամի հրավերով:

Նա նաև լուրջ գիտնական էր. գրել է բազմաթիվ հոդվածներ և արժեքավոր գրքեր,  
մասնակցել է ավելի քան քսան միջազգային կոնգրեսների, գիտաժողովների, սիմպոզի-  
ումների:

Ընկեր Մկրտումյանի դասախոսությունները մինչև այսօր հիշում են նրա արդեն  
դասախոսող սաները: Նա փայլուն հոեևոր էր: Հայերեն թեև ուշ է սովորել, սակայն խո-  
սում էր գերազանց և մաքրամաքուր հայերենով: Փայլուն տիրապետում էր ռուսերենին,  
անգլերենին: Մարդկանց համոզելու բացառիկ կարողություն ուներ: Նա մշտապես ոգև-  
որում էր իր աշակերտներին և ավելին՝ խիստ ոգևորվում նրանց հաջողություններով:

1980-ական թթ. Յու. Մկրտումյանը նախաձեռնել է ազգագրական և թանգարանա-  
գիտական թեմաներով սեմինարների շարք: Նա մշտապես անմիջական մասնակցույթ-  
յուն և աջակցություն է ցուցաբերել թանգարանում գիտական գործունեության կայաց-  
ման շնորհակալ գործին:

Յուրի Սկրտումյանը թանգարանին գիտական աջակցություն և անհրաժեշտ խորհրդատվություն է ցույց տվել նաև թանգարանի գործունեության հաջորդ տարիներին: Նա գիտական խորհրդատվություն է ապահովել Գրիգորի Իվանի Հասարթյանի /04.01.1987-30.05.1991/ և Վլադիմիր Սարգսի Դարբինյանի /31.03.1998-20.08.2002/ տնօրինության ժամանակ: 2005 թվականի մարտի մեկից թանգարանի տնօրեն Լ. Բարսեղյանի թիվ 04-12/77 հրամանով նա աշխատանքի է ընդունվել Հայաստանի ազգագրության պետական թանգարանում՝ որպես ավագ գիտաշխատող: Նրա վրա է դրվել ազգաբանական և թանգարանագիտական սեմինարների և գիտական աշխատողների որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների գործի կազմակերպումն ու ղեկավարումը:

Մեթոդաբանական առումով շատ կարևոր է էթնոսի մշակույթի բաղադրատարրերի, առանձին ենթահամակարգերի՝ առաջնային արտադրության, կենսապահովման, սոցիոնորմատիվ և հումանիտար մշակույթների նրա բնութագիրը, որը բանալի է մշակույթի համակարգը դասակարգելիս, էթնիկական մշակույթների հետազոտության մեթոդաբանական պրոբլեմների համատեքստում<sup>4</sup>: Դրանով մշակույթի դասակարգման հին մոդելը 1970-ականների վերջերին վերանայվել է ազգագրագետ Յու. Սկրտումյանի և փիլիսոփա, մշակութաբան Էդուարդ Մարգարյանի կողմից: Նոր տեսության համաձայն, մշակույթի, որպես մեկ ամբողջական համակարգի մեջ առանձնացվել են չորս սերտ փոխկապակցված ենթահամակարգեր<sup>5</sup>: Հենց այդ սկզբունքով էլ կառուցված է Հայոց ազգագրության թանգարանի ազգագրությունը նվիրված հիմնական ցուցադրությունը<sup>6</sup>:

Թանգարանների փորձը ցույց է տվել, որ թանգարանները ոչ միայն պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության խոշոր կենտրոններ են, այլև գիտահետազոտական կարևոր հաստատություններ: Տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթների ուսումնասիրման բնագավառում այդպիսի հետազոտական կենտրոնի է վերածվել Հայաստանի ազգագրության պետական թանգարանը: Տարբեր թանգարաններում ցուցադրության կազմակերպման աշխատանքի պրակտիկան մշակել է ազգագրական նյութերի ցուցադրման տարբեր մեթոդներ ու ձևեր՝ օգտագործելով պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջանների ազգագրական ընդարձակ ու բազմազան ժողովածուներ: Աստիճանաբար թանգարաններում հաստատվել է ցուցադրության կազմակերպում՝ նոր թեմատիկ մեթոդով: Այս նույն ճանապարհով էլ մշակվել են ՀԱՊԹ-ի ցուցադրության իրականացման հիմնական սկզբունքները: Արդեն կազմված ցուցադրության թեմատիկ պլանի համաձայն ցուցանմուշները ընտրվել են

<sup>4</sup> Компоненты культуры этноса, *Маркарян Э.С.* (отв. ред.), Методологические проблемы исследования этнических культур. Материалы симпозиума, Ереван, Издательство АН Армянской ССР, сс. 42-47.

<sup>5</sup> *Арутюнов С.А., Маркарян Э.С., Мкртумян Ю.И.*, Проблемы исследования культуры жизнеобеспечения этноса//СЭ, 1983, 2, сс. 22-32.

<sup>6</sup> *Բարսեղյան Լ.*, Հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթների ցուցադրության և կազմակերպման հիմնական սկզբունքների մասին /Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմների նվիրված հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանս, Զեկուցումների թեզեր, Երևան-Սարգարապատ, 18-22 սեպտեմբերի, Երևան, 1979, էջ 20-21:

նպատակաուղղված, որոշակի թեմայի համապատասխան, որոնք արտահայտել են հայ ժողովրդի կենցաղի և մշակույթի զարգացման օրինաչափությունները հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը<sup>7</sup>:

Թեմատիկ ցուցադրության ստեղծման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել ցուցանմուշների շերտավորմանը, յուրաքանչյուր թեմատիկ ցուցադրական համալիրում գլխավորի առանձնացմանը, այն հաշվով, որպեսզի ցուցանմուշներից յուրաքանչյուրը մեծ արտահայտչակախությամբ կատարի իր գործառույթը տվյալ ցուցադրական համալիրի համատեքստում: Ցուցադրության մեջ լայն տեղ է տրվել կենցաղային համալիրների ներկայացմանը, որը հնարավոր է դարձրել առարկաների տեսակների զարգացման շարժընթացի դիտելիությունը: Այս առումով էլ յուրաքանչյուր ցուցանմուշ ցուցադրության մեջ դիտվում է տիպական կենցաղային միջավայրում՝ կիրառական և գործառույթային տեսանկյուններով:

Ցուցադրության մեջ կիրառվել են տեխնիկական միջոցներ (վավերագրական կինոնկարների ցուցադրում համապատասխան դահլիճում, դիապոզիտիվների և ձայնագրությունների ներկայացում հիմնական ցուցադրության մեջ և կենդանի ցուցադրության կազմակերպում՝ ժողովրդական վարպետի աշխատանքային գործընթաց):

ՀԱՊԹ-ում հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթի ցուցադրության ձևավորումը հիմք է դրել առանձին հիմնախնդիրների խորը ուսումնասիրություններին:

Հայաստանի ազգագրության պետական թանգարանի և Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի փայլուն համագործակցության վառ դրսևորում է 1992 թ. հոկտեմբերից 1993 թվականի հուլիսը ընկած ժամանակահատվածում կազմակերպված Ազգագրական սեմինարների շարքը, որի ոգեշնչող դարձյալ Յուրի Մկրտումյանն էր: Ծրագրում ամրագրված է այն փաստը, որ ՀԱՊԹ-ն ԵՊՀ-ի մասնակցությամբ վերսկսում է Ազգագրական սեմինարների նիստերը, որտեղ քննարկվելու են թանգարանի և հանրապետության այլ ազգագրական հաստատությունների գիտաշխատողների հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև ազգագրական գիտության, այդ թվում՝ ազգագրական թանգարանագիտության արդիական պրոբլեմները: Նիստերը նախատեսվել և իրականացվել են ամսական երկու անգամ, ուրբաթ օրերին՝ Ազգագրության ամբիոնում:

Հայոց ազգագրության թանգարանում մեծերի ժառանգություն թողած լավագույն ավանդույթները շարունակվում են: Քառասուներկուամյա պատմություն ունեցող թանգարանի կողմից իրականացվում է բազմաբնույթ՝ գիտահետազոտական, գիտաֆոնդային, գիտացուցադրական և կրթամշակութային գործունեություն: Թանգարանի գործունեության հիմնական նպատակը մշակութային գործունեության իրականացումն է, հայոց ազգագրությանը և ազատագրական պայքարի պատմության առանձին դրվագներին՝

<sup>7</sup> Նույն տեղում:

Մարդարապատի և Մուսա լեռան հերոսամարտերին առնչվող թանգարանային նշանակություն ունեցող մշակութային արժեքների ու հավաքածուների հայտնաբերումը, համալրումը, հաշվառումը, պահպանությունը և պաշտպանությունը, և որ գլխավորն է՝ ուսումնասիրումը և հանրահռչակումը: ՀՀ բնակչության սեռատարիքային, սոցիալական տարբեր խմբերի շահառուների, օտարերկրյա զբոսաշրջիկների և արտասահմանյան պատվիրակությունների համար կազմակերպվում են թանգարանի առաքելությանը և բնույթին համապատասխանող ցուցադրություններ և ցուցահանդեսներ, կրթամշակութային միջոցառումներ: Այցելուների համար իրականացվում են որակյալ բացատրություններ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն: Նկատելի աշխատանքներ են կատարվում գիտահետազոտական գործունեության ոլորտում, հրատարակվում են գրքեր, կատալոգներ, ուղեցույցներ և այլն: Կազմակերպվում են գիտաժողովներ, ազգագրական զիտարշավներ և պրակտիկաներ: Իրականացվում են թանգարանային առարկաների պահպանության և վերականգնման աշխատանքներ, թանգարանային հավաքածուների տվյալների շտեմարանի համալրում, թանգարանային առարկաների վերավկայացրում, անձնագրավորում և առարկաների թվանշայնացում:

Հայոց ազգային մշակույթն ակունքներից մինչև արդի ժամանակները և Հայոց ազատագրական պայքարի պատմության առանձին դրվագները (Մարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաբիլիսայի, Մուսա լեռան հերոսամարտերը) ներկայացնող մշտական ցուցադրությունների փոփոխություններին զուգընթաց՝ տեսանելի է թեմատիկ ցուցահանդեսների և միջոցառումների ավելացման միտում, որը կարևոր է հատկապես էթնիկ մշակութային ժառանգության, արդի մշակույթին XX դարի սկզբի հերոսամարտերի պատմության վերաբերյալ թանգարանային առարկաների և հավաքածուների ուսումնասիրման ու հանրահռչակման տեսանկյունից:

Հայոց ազգային մշակույթի տարբեր ենթահամակարգերը ներկայացնող մշտական ցուցադրության մեջ կատարված մասնակի փոփոխությունների և համալրումների հետ միաժամանակ 2008-2020 թթ. կազմակերպվել է շուրջ 50 ժամանակավոր առկա և առցանց ցուցահանդես:

Այս բոլորը արդյունք են նաև թանգարանի գիտական գործունեության մեջ Յուրի Մկրտումյանի նման մեծության ունեցած ներդրման:

СВЕТЛАНА ГАЙКОВНА ПОГОСЯН

Замдиректора Музея этнографии армян,  
старший научный сотрудник Института археологии и этнографии,  
кандидат исторических наук  
эл. почта: sv\_ethnomuseum@yahoo.com

## РОЛЬ ЮРИЯ МКРТУЯНА В НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МУЗЕЯ ЭТНОГРАФИИ АРМЯН

### Резюме

Юрий Израелович Мкртумян был известным историком-этнографом. Он был одним из крупнейших специалистов по армянской этнографии и проблемам этнографии народов Кавказа. По инициативе Ю. Мкртумяна во время этнографических экспедиций университета, организованных в 1970-1980 гг., со всеми участниками отмечали 17-ое июля как день этнографа. Всю свою жизнь он посвятил этнографической науке, создав кафедру этнографии, «мкртумяновскую» школу. В дополнение к своей обширной научной и педагогической деятельности, в 1980-х годах, он работал в Государственном музее этнографии Армении для повышения квалификации молодых ученых, оказания помощи в планировании научных экспозиций музея, подготовки научно-собирательных полевых экспедиций и предоставления научных консультаций. Он так же участвовал в составлении плана для открытой выставки быта народной архитектуры. Благодаря ему многие этнографы и будущие музейеведы познакомились с методами и принципами полевых исследований.

В 1980-1990 гг. по инициативе Ю. Мкртумяна была организована серия семинаров по этнографии и музеологии. Он всегда был непосредственным участником и сторонником развития научной деятельности музея.

И в последующие годы деятельности музея Юрий Мкртумян оказывал научную поддержку и консультацию Музею этнографии армян.

**Ключевые слова:** этнографические экспедиции, полевая работа, серия семинаров, Этнографический музей.



SVETLANA HAYK POGHOSYAN

Vice director of the Museum of Armenian Ethnography, Ph.D.,  
Senior researcher of the Institute of archaeology and ethnography  
e-mail: sv\_ethnomuseum@yahoo.com

YURI MKRTUMYAN 'S ROLE IN THE SCIENTIFIC- RESEARCH  
ACTIVITY OF THE MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY

Summary

Yuri Israyel Mkrtumyan is a well-known historian-ethnographer. He was one of the prominent specialists of the main problems of Armenian ethnography and that of Caucasian people. In 1970-80s on Yuri Mkrtumyan's own initiative, during their ethnographic expeditions, the whole staff of the University started to celebrate the 17<sup>th</sup> of July as Ethnographer's Day. He devoted all his life to ethnographic science, founding the Department of Ethnography, Mkrtumyan School. He carried out hard work not only as a scientist and professor, but in 1980s he also worked in the State Museum of Armenian Ethnography to improve the qualification of the young researchers, participated in discussions referring the scenography of the museum scientific exhibition, prepared expeditions for the field work and provided scientific consultation. He also participated in setting up scenography for the open air exhibition on public architecture and mode of life. Many ethnographers and future museologists were able to learn the methods and principles of field work due to him.

In 1980-1990s Yuri Mkrtumyan undertook seminar series on ethnography and museology. He has been supporting the worthwhile work in carrying out scientific activity in the Museum of Armenian Ethnography for the further years as well.

**Keywords:** ethnographic expeditions, field work, open air exhibition, seminar series, Ethnographical museum.



## ԿԱՐԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԲԱԶԵՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազիտական հետազոտությունների  
կենտրոնի ավագ գիտաշխատող,

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների  
և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»

ՊՈԱԿ-ի գիտահետազոտական բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - bazeyan60@yandex.ru

### ՅՈՒ. ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԱՐԵՇԱՎՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Բանալի բառեր. Յու. Մկրտումյան, Երևանի պետական համալսարան, ազգագրական գիտարշավ, դաշտային ուսումնասիրություններ:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում աշխատանքի հենց առաջին տարիներից Յուրի Մկրտումյանը, բացի ազգագրական գիտության մասնագիտական դասընթացներից, կարևորեց ուսանողների հետ տարվող գործնական աշխատանքներն ու մասնավորապես դաշտային նյութերի հավաքումը: Նա շատ լավ գիտեր, որ ազգագրության՝ որպես գիտության ձևավորման հենց սկզբից ժողովուրդների ուսումնասիրման ամենակարևոր և հիմնական աղբյուրը կյանքի տարբեր ձևերի անմիջական դաշտային դիտումներն են, որոնք ազգագրագետները պետք է կատարեն հետազոտվող էթնոսի ներսում, և համապատասխան նյութերի հավաքումն ու գրանցումը: Այն ազգագրագետը, որը դաշտում չի եղել ու չի շփվել իր ուսումնասիրած ժողովրդի հետ, չի կարող ոչ միայն դառնալ, այլև չի կարող համարվել իսկական ազգագրագետ: Ուստի այդ մասնագիտացումն ընտրած ուսանողներին դաշտային աշխատանքների հմտություններն ուսուցանելու համար նա կազմակերպեց Երևանի պետական համալսարանի ազգագրական գիտարշավները (հետայսու՝ ՀԱԳ), որոնք կազմակերպչական, կրթական ու գիտական բարձր մակարդակով ղեկավարեց 1971 թ.-ից մինչև իր կյանքի վերջը: Այդ գիտարշավների ժամանակ հավաքված նյութերը<sup>1</sup>, որոնց հիման վրա ուսանողները գրում էին իրենց կուրսային ու դիպլոմային աշխատանքները, ծանրակշիռ ներդրում ունեցան հայ ժողովրդի ավանդական կենցաղի տարբեր ոլորտների ուսումնասիրության մեջ<sup>2</sup>:

ՀԱԳ-ում փորձ ձեռք բերած ու հետագայում ազգագրության ոլորին ընտրած ուսանողներից շատերը (այդ թվում և ես), միայն մասնագիտական հմտություններ չեն ստա-

<sup>1</sup> Այդ նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվում:

<sup>2</sup> *Արუտյոնոս Շ., Արուտյոնյան Ա.*, Заслуги Ю.И. Мкртумяна в популяризации арменоведческих и кавказоведческих знаний, Научная конференция «Археология и этнография Кавказа и Крыма», Тезисы докладов, СПб, 2017, с. 127.

ցել այդ ընթացքում, ազգագրական գիտարշավները հիրավի կյանքի դպրոց էին, որ կանխորոշեցին նրանց ապագան:

Կարծում եմ, որ ՀԱԳ-ին մասնակցածների մեծ մասը կհամաձայնի այն բանի հետ, որ դրանք լուծում էին մի քանի խնդիր.

ա/ ձևավորում էին ժողովրդի հետ անմիջական շփման, դաշտային նյութերի հավաքման ու գրառման հմտություններ,

բ/ պայմաններ էին ստեղծում տարբեր սերունդների ազգագրագետների հետ շփման միջոցով փորձ ձեռք բերել,

գ/ ձևավորում էին տարբեր տարիքի ազգագրագետների ջերմ ընկերակցություն,

դ/ հնարավորություն էին տալիս ներսից ճանաչել ժողովրդին, հետևաբար նաև սիրել սեփական մշակույթն ու սերտորեն կապվել դրա հետ:

Փորձենք մի փոքր մանրամասն ներկայացնել վերոշարադրյալը, ինչը թույլ կտա ավելի ամբողջական ու լավ պատկերացում կազմել ՀԱԳ երևույթի ու դրա անփոխարինելի ղեկավար, մեր սիրելի ընկ. Մկրտումյանի մասին:

Դաշտային ազգագրական նյութերը ձեռք են բերվում մի քանի եղանակով՝ դիտում, հարցում, անկետավորում, հարցազրույց և այլն: Այս եղանակները կիրառելու համար օգտագործում են երկու ձև՝ արշավախմբային և ստացիոնար: Արշավախմբային ուսումնասիրության ժամանակ ազգագրագետներն ուղղվում են իրենց կողմից ուսումնասիրվող տարածքը, որոշ ժամանակ այնտեղ բնակություն են հաստատում, դիտարկումներ են կատարում, զրուցում տարբեր բանասացների հետ: Հենց այս ձևն ընտրելով ՀԱԳ-ի համար՝ Յու. Մկրտումյանը, մինչև արշավախմբերի իրականացումը, նախապատրաստական բազմապիսի աշխատանքներ էր կատարում՝ համապատասխան քանակով պարագաների հավաքումից (քննապարկեր, փշովի ներքնակներ, վրաններ և այլն) մինչև գիտարշավի համար ընտրված տարածաշրջանի ու կոնկրետ գյուղերի ղեկավարների հետ պայմանավորվածությունների ձեռքբերումը, տնտեսական հարցերի կարգավորումը, առաջին անգամ դաշտ գնացող ուսանողների հետ զրույցներն ու խորհուրդները:

Արշավախմբային եղանակը պահանջում է ազգագրական հարցարան՝ հարցերի մի ամբողջ խումբ, որն անհրաժեշտ է մշակույթի տարբեր երևույթները պարզաբանելու համար և ծրագրվում է մինչև արշավախմբի աշխատանքներն սկսվելը: Ուսանողները գիտարշավից շատ առաջ արդեն ծանոթանում էին իրենց թեմայի վերաբերյալ հիմնական գրականության հետ ու ղեկավարի օգնությամբ կազմում էին հարցարանը:

Դաշտային ազգագրության մեջ կարևոր դեր են խաղում նյութի ամրագրման եղանակները, իրենց կյանքի այս կամ այն իրադարձության մասին պատումների կամ որևէ հարցի շուրջ (որը բնութագրում է ավանդական մշակույթը) բանասացների զրույցի գրանցումը, նյութի հետ կապված իրեղեն ու իրադարձային երևույթների ֆիքսումը գծագրերի կամ լուսանկարների միջոցով: Ըստ այդմ ուսանողների համար կազմակերպվում էին լուսանկարչության դասընթացներ, որպեսզի նրանք կարողանան տեղում լուսանկարել:





Նախապատրաստական աշխատանքների ժամանակ անցկացվող զրույցների ընթացքում ուսանողներին բացատրվում էին ազգագրագետի բարեկարքության (էթիկայի) կանոնները, գյուղում իրենց պահելու, բանասացի հետ զրուցելու, նրան դիմելու ու ներկայանալու ձևերը, ընդհուպ մինչև արտաքին նկարագիրը՝ ընդունելի հագուկապը, իսկ աղջիկների համար նաև՝ ընդգծված շպար կրելու անթույլատրելիությունը: Որպես արշավախմբի պետ՝ ընկ. Մկրտումյանը մեծագույն պատասխանատվություն ուներ գիտարշավի յուրաքանչյուր անդամի նկատմամբ, միաժամանակ չափազանց խիստ էր ընդունված կարգուկանոնը խախտելու դեպքում: Ամենախիստ պատիժը, անկախ կարգավիճակից, կարգազանցին տուն ուղարկելն էր, որի մասին անբեկանելի որոշումը հայտնում էր նախորդ երեկոյան, ընթրիքի ժամանակ, իրեն հատուկ կիրթ տոնով<sup>3</sup>:

ՀԱԳ-երը բազմամարդ էին՝ երկու տասնյակ և ավելի անդամներով, որոնց թվում տարբեր կուրսերի ուսանողներ, արդեն կայացած ու հայտնի ազգագրագետներ, մշակութաբաններ, ճարտարապետներ, որոնցից յուրաքանչյուրն իր ներդրումն ուներ դաշտային նյութի հավաքման, գրանցման, ամրագրման ու վերլուծության գործում:

Առաջին անգամ արշավախմբին մասնակցող ու դեռևս նյութ հավաքելու փորձ չունեցող ուսանողներին կցվում էին ավագ սերնդի ազգագրագետներ կամ բարձր կուրսերի ուսանողներ, որոնք մեթոդական խորհուրդներ էին տալիս և օգնում էին սկսնակներին հարցազրույցը վարել՝ իրենք սկսելով զրույցն ու ցույց տալով բանասացի հետ կապ ստեղծելու, նրա վստահությունը ձեռքբերելու, զրույցը ցանկացած ուղիով տանելու ու իրեն անհրաժեշտ տեղեկությունը ստանալու ձևերը:

ՀԱԳ-երի ամենակարևոր ուսումնամեթոդական բաղադրիչներից մեկը օրվա ընթացքում հավաքած նյութերի քննարկումն էր, որը տեղի էր ունենում երեկոյան՝ ընթրիքից հետո: Դրանց նպատակն էր գնահատել ուսանողների հավաքած նյութերի որակը, շտկել բացթողումները, հստակեցնել հավաքվելիք նյութերի շրջանակներն ու ծավալները և այլն: Արշավախմբի յուրաքանչյուր ուսանող անդամի հավաքած ու մաքրագրած նյութը տրվում էր ավելի փորձառու ՀԱԳ-ականի՝ կարծիքի համար, որը քննարկման ժամանակ ներկայացվում էր բանավոր: Քննարկումներն անցնում էին առողջ և աշխույժ բանավեճի մթնոլորտում, որին մասնակցում էին բոլորը: Այդ քննարկումները ոչ միայն ուղղություն էին տալիս սկսնակներին՝ իրենց դաշտային աշխատանքը ճիշտ կազմակերպելու, այլև գիտական լուրջ վերլուծություններով, առաջարկություններով, նկատողություններով նպաստում էին հավաքած նյութը համակարգելուն, դասդասելուն և ամբողջական ներկայացնելուն:

1978 թ. Սարդարապատի հուշահամալիրում Հայաստանի ազգագրության պետական թանգարանի բացումից հետո համալսարանի հնագիտության ու ազգագրության ամբիոնի ուսանողների գերակշիռ մասը պատրաստվում էր նաև թանգարանային աշ-

<sup>3</sup> *Հարությունյան Հ.*, Յուրի Մկրտումյան՝ քաղաքացին, գիտնականը, մանկավարժը (ծննդյան 80-ամյակի առթիվ), Լրաբեր հասարակական գիտությունների, 2019, № 3, էջ 300:

խատանքի, որը ևս ղեկավարում էր ընկ. Մկրտումյանը: Դա արտահայտվում էր ոչ միայն նրանում, որ մասնագիտական առարկաներից մեկը ազգագրական թանգարանագիտությունն էր, այլև գիտարշավներին թանգարանի աշխատողներին ընդգրկելով: Վերջիններին հետ ուսանողները սովորում էին թանգարանային առարկայի չափորոշիչների հիման վրա համապատասխան իրեր գտնելու ու թանգարանի հավաքածուն համալրելու համար դրանց ձեռքբերման եղանակները: Պետք է նշել, որ այն թեմաները, որոնք ընտրվել էին ուսանողների կողմից և որոնց վերաբերյալ դաշտային ուսումնասիրություններ էին անցկացվում, թանգարանում աշխատելու ժամանակ շարունակվում էին: Դրանով էր պայմանավորված Ազգագրության թանգարանում 1978-1988 թթ. ձևավորված երիտասարդ ազգագրագետների այն արհեստավարժ համույթը, որոնց աշխատանքի արդյունքում թանգարանը կարճ ժամանակում դարձավ հանրապետության առաջնակարգ մշակութային կազմակերպություններից մեկը:

Սոս և՛կ ամիս տևող ՀԱԳ-երում շատ կարճ ժամանակ հետո ձևավորվում էր ընկերական, բարեկամական, մարդկային ջերմ հարաբերությունների վրա հիմնված մի կոլեկտիվ, որի առանցքը Յու. Մկրտումյան Ուսուցչի, Մարդու, Գիտնականի անձն էր: Նա շատ խիստ վերահսկում էր իրավիճակը, ուշադիր էր յուրաքանչյուր՝ նույնիսկ ամենփոքր թվացող հարցի նկատմամբ ու լուծում էր ցանկացած խնդիր, որն առաջանում էր այդ ընթացքում: ՀԱԳ-երում բարձր մակարդակով կազմակերպվում էին արշավականների սնվելու, հիգիենայի, հանգստի հարցերը: Օրը երեք անգամ (նախաճաշ, ճաշ և ընթրիք) ՀԱԳ-ականներին կերակրելու համար ընտրվում էր տնտեսվար, որը պետք է զբաղվեր մթերքի ձեռքբերման ու բաժանման հարցերով, սահմանվում էր հերթապահություն՝ խոհարարին օգնելու և սահմանված ժամանակին սեղանը պատրաստելու համար:

Ինչպես վերը նշվեց, ՀԱԳ-երը բացառիկ հնարավորություն էին ընձեռում հասկապես քաղաքաբնակ, դպրոցական նստարանը նոր թողած ուսանողներին ի մոտո տեսնել ու ներսից ճանաչել գյուղական, մաքուր ժողովրդական կենցաղը, մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին, հասարակական ծեսերին ու արարողություններին, ժողովրդական տոնախմբություններին: Ընկ. Մկրտումյանը ամեն տարի արշավականների համար կազմակերպում էր այցելություն ամառանոցներ (յայլաներ) և տարածաշրջանի պատմամշակութային հուշարձաններ, որոնք անջնջելի տպավորություններ ու հիշողություններ են թողել մասնակիցների մեջ: Նման միջոցառումները սեփական ժողովրդին ճանաչելու ու նորովի արժևորելու լավագույն ձևերն ու եղանակներն էին, որոնք պատմաբան-ազգագրագետի համար անփոխարինելի դեր ու նշանակություն ունեն:

Մեկ անգամ ևս անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀԱԳ-երի ամենամեծ ձեռքբերումները դրա մասնակիցների կողմից հավաքած դաշտային նյութերն են, որոնք վերաբերում են հայ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի ամենատարբեր ոլորտներին: Կարևոր չէ, թե ում կողմից են հավաքվել այդ նյութերը՝ փորձված ազգագրագետների, թե ուսանողների, փաստն այն է, որ դրանք անգնահատելի սկզբնաղբյուր են մեր ժողովրդի

ավանդական կենցաղն ու մշակույթը ուսումնասիրողների, անկախ հետազոտողների կամ հայրենագետների համար: ՀԱԳ-ի դաշտային ազգագրական նյութերի հիման վրա ՄՄՀՄ Գիտությունների ակադեմիայի Ն.Ն. Միկլյուխ-Մակլայի անվ. ազգագրության ինստիտուտի և ՀՄՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի կողմից հրատարակվեց «Կենսաապահովման մշակույթը և էթնոսը. էթնոմշակութաբանական հետազոտության փորձ (հայ գյուղական մշակույթի նյութերով)» ռուսերեն հեղինակային աշխատությունը<sup>4</sup>:

Ինչպես նշվեց, այդ նյութերը հետագայում դարձան շատերի ոչ միայն կուրսային ու դիպլոմային աշխատանքների, այլև թեկնածուական ատենախոսությունների հիմնական ատաղձը: ՀԱԳ-ը, ի դեմս Յու. Մկրտումյանի, ձևավորեց ազգագրական մի փայլուն դպրոց, որտեղ թրծվել ու մասնագիտական փորձառություն է ստացել արդի միջին սերնդի հայ ազգագրագետների գերակշիռ մասը՝ պատմական գիտությունների դոկտորներ Հարություն Մարությանն ու Սամվել Մկրտչյանը, պատմական գիտությունների թեկնածուներ Զավեն Խառատյանը, Հրանուշ Խառատյանը, Ռուբեն Օհանջանյանը, Հռիփսիմե Պիկիչյանը, Ամալյա Սարգսյանը, Համբարձում Գալստյանը, Բելլա Զաքարյանը, Արթուր Մկրտչյանը, Սվետլանա Պողոսյանը, Արմինե Սարգսյանը, Կարինե Բազեյանը, Լիանա Գևորգյանը, Անահիտ Մինասյանը, Նիկոլ Սարգսյանը, Աղասի Թադևոսյանը, Արտակ Դաբադյանը, Մխիթար Գաբրիելյանը, Հասմիկ Հարությունյանը և ուրիշներ:

Որպես ամփոփում բերենք Հ. Հարությունյանի խոսքը ՀԱԳ-երի ու Յու. Մկրտումյանի մասին. «...եղել են դեպքեր, երբ ուսանողները հրաժարվել են Մոսկվա, Լենինգրադ թանգարանային պրակտիկայից՝ գերադասելով մասնակցությունը ՀԱԳ-ին: ՀԱԳ-ը մի ուրույն մոդել էր հայկական գերդաստանական ընտանիքի, որտեղ կար նահապետ, և յուրաքանչյուր անդամ ուներ իր պարտականություններն ու իրավունքները: Հայաստանի համար նույնիսկ ամենաձանր տարիներին համալսարանի ազգագրական գիտարշավները չդադարեցին, որովհետև, շնորհիվ իր անբասիր համբավի, միշտ հնարավորություն էր գտնում միջոցներ հայթայթելու:

...Մանկավարժության, կրթական գործի կազմակերպման մեջ նրա աննախադեպ ձեռքբերումներն առաջին հերթին պայմանավորված էին իր գործին անմնացորդ ու անշահախնդիր նվիրումով, գիտականորեն հիմնավորված մեթոդների ու անհատական հմտությունների կիրառմամբ, և, վերջապես, նա ոչ միայն մեծ մտավորական էր, այլև բարոյական բարձր նկարագրով Մարդ»<sup>5</sup>:

<sup>4</sup> Культура жизнеобеспечения и этнос. Опыт этнокультурологического исследования (на материалах армянской сельской культуры), Ереван, 1983, ст. 16.

<sup>5</sup> Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 300-302:

## КАРИНЕ РАЗМИКОВНА БАЗЕЯН

Старший научный сотрудник Ширакского центра арменоведческих исследований НАН РА, зав. научно-исследовательским отделом «Службы по охране окружающей среды и историко-культурных музеев-заповедников» ГНО, кандидат исторических наук  
эл. почта: bazeyan60@yandex.ru

### ЭТНОГРАФИЧЕСКИЕ НАУЧНЫЕ ЭКСПЕДИЦИИ ПОД РУКОВОДСТВОМ Ю. МКРТУМЯНА КАК СПОСОБ ПРИОБРЕТЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНЫХ НАВЫКОВ

#### Резюме

В статье освещены роль и значение этнографических научных экспедиций Ереванского государственного университета под руководством Ю. Мкртумяна. Они стали отличной базой для получения профессиональных навыков, усваивания азов этнографической науки, ознакомления и исследования армянской народной культуры, что в значительной степени способствовало становлению многих молодых ученых - этнографов. В статье особо акцентируется личность Ю. Мкртумяна как опытного организатора, руководителя экспедиций, Человека и Учителя.

**Ключевые слова:** Мкртумян Ю., Ереванский государственный университет, этнографическая экспедиция, полевые исследования.

## KARINE RAZMIK BAZEYAN

Senior researcher of the Shirak Center of Armenological Studies  
NAS RA, Head of Scientific- research department of SNCO «Service For The Protection Of  
Historical Environment And Cultural Museum-Reservations», Ph.D.  
e-mail: bazeyan60@yandex.ru

### ETHNOGRAPHIC RESEARCH EXPEDITIONS LEAD BY Y. MKRTUMYAN AS A WAY OF ACQUISITION OF PROFESSIONAL SKILLS

#### Summary

The article elucidates the role and importance of the ethnographic expeditions organized by Yerevan State University and lead by Yuri Mkrumyan. The expeditions became a significant way of acquisition of professional qualifications, acquaintance and research of Armenian traditional culture and significantly contributed to young Armenian ethnographers in their professional turnover. The article makes a special reference to Y. Mkrumyan as a skillful organizer and leader of expeditions, a great Man and Teacher.

**Keywords:** Mkrumyan Yu., Yerevan State University, ethnographic expeditions, field research.

## ՄԻՆԴԱՆ ՎԱՐԴԳԵՄԻ ԳԱԼՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
առաջատար գիտաշխատող, էթնոսոցիոլոգիայի  
բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր  
Էլ. փոստ - akoonk@yahoo.ru

## ՀԱՄԼԵՏ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ - hsargsyan46@mail.ru

## ՅՈՒՐԻ ՄՎՐՏՈՒՄՅԱՆԻ ԱՎԱՆՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

**Բանալի բառեր.** ազգային փոքրամասնություն, էթնիկ հանրություն, էթնիկ խումբ, էթնոմշակութային, սոցիալ-տնտեսական, ազգային կազմ, փոքրաթիվ էթնիկ խումբ, հասարակական կազմակերպություն, համագումար:

Հայաստանը, չնայած էթնիկ հանրությունների բազմազանությանը, բնակչության ազգային կազմի առումով միատարր հանրապետություն է: 2011 թ. մարդահամարի տվյալների համաձայն ազգային փոքրամասնությունները կազմել են Հայաստանի բնակչության գրեթե 2%-ը, սակայն նրանց հիմնախնդիրների ուսումնասիրությունը շատ կարևոր ու արդիական է, քանի որ միջազգային իրավական համակարգում «ազգային փոքրամասնություն» հասկացությունը ընդունվում է ոչ թե քանակական, այլ՝ իրավական և քաղաքական կատեգորիա, և այս առումով թվաքանակը մեծ նշանակություն չունի<sup>1</sup>:

Կարևորելով հիմնախնդրի արդիականությունը՝ Յուրի Մկրտությանը 1998 թ. վերջերին ձեռնարկեց Հայաստանի ազգային փոքրամասնությունների ուսումնասիրությունը, որն իրականացնելու համար հարկ եղավ դիմել «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ» հայաստանյան մասնաճյուղին՝ ֆինանսական ծախսերը ստանալու նպատակով: Հետազոտական խումբը ձևավորվեց Յու. Մկրտումյանի ղեկավարությամբ գործող «ՈՍՄԱՆ» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպության անդամներից, որոնք պետք է նախապատրաստեին ու իրականացնեին դաշտային աշխատանքներ Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում: Նախատեսված էր առաջին փուլում հետազոտել հինգ ազգային փոքրամասնությունների (եզդիներ կամ եզդի-քրդեր, ռուսներ, հույներ, ասորիներ և բոշաներ) էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, էթնոմշակութային տեսանկյունները: Աշխատանքներն իրականացնելու համար

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I, Երևան, 2000, էջ 7:

խումբը՝ Յու. Մկրտումյանի գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ նրանց վերաբերյալ արխիվային փաստաթղթերի, վիճակագրական աղբյուրների, հրատարակված գրականության, հիմնական իրավական ակտերի ուսումնասիրությանը: Այս առումով մեծ օգնություն ցուցաբերեց ՀՀ վիճակագրական ծառայության Մարդահամարների և ժողովրդագրության բաժինը՝ մեզ տրամադրելով 1979 և 1989 թթ. մարդահամարների տվյալներն ըստ ազգային կազմի:

Հավաքված նյութերի հիման վրա, խմբի անդամների քննարկման արդյունքում կազմվեց հետազոտության ծրագիրըն այն մարզերի ու բնակավայրերի նախնական ցանկը, որտեղ անց էին կացվելու հետազոտությունները: Կազմված հարցաթերթերը փորձարկելուց ու վերջնական տեսքի բերելուց հետո հանձնվեցին տպագրության: Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու անհատական հարցաթերթը բաղկացած էր 120 հարցից: Այն հնարավորություն տվեց հարուստ նյութ հավաքել փոքրամասնությունների սոցիալ-ժողովրդագրական կազմի, զբաղվածության, լեզվական վարքագծի, ազգային տոները նշելու, դավանանքի, ազգային ինքնության, միգրացիոն վարքագծի և այլ հարցերի վերաբերյալ: Ազգային փոքրամասնությունների մեջ ուսումնասիրություններ իրականացնելը դասվում է բավականին զգայուն թեմաների շարքին: Ուստի, Յու. Մկրտումյանն, այդ հանգամանքը հաշվի առնելով, որպես հետազոտողներ հրավիրեց փորձառու ազգագրագետների, որոնք այս կամ այն չափով ծանոթ էին նրանց մշակույթին: Յու. Մկրտումյանի ցուցումով հարցման մասնակիցների հետ շփումներում պետք է պահպանեին էթիկայի բոլոր կանոնները՝ նրանց հուզական վտանգի չենթարկելու, հետազոտության նպատակները պարզ ներկայացնելու, հավաքված նյութերը որտեղ և ինչ նպատակով օգտագործվելու, ինչպես նաև մասնակիցների անանունությունը և տրամադրված տվյալների գաղտնիությունը պահպանելու առումով: Հավաստի տվյալներ և համակողմանի նյութեր ստանալու նպատակով Յու. Մկրտումյանը նպատակահարմար համարեց հանդիպելու Հայաստանում գործող բոլոր ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների հետ: Քննարկվեցին այդ շրջանում նրանց առջև ծառայած հիմնախնդիրները և դրանց բարելավման առումով հավաքվեցին մի շարք կարևոր առաջարկներ:

Մասնավորապես, Յու. Մկրտումյանի և հետազոտական խմբի մասնակցությամբ այդպիսի քննարկումներ տեղի ունեցան ռուսական «Հարմոնիա» մշակույթի միջազգային կենտրոնի, ՀՀ «Ռոսիա» համայնքի, ռուսական մշակույթի «Օդա» համայնքի, Հայաստանի ուկրաինացիների «Ուկրաինա» ֆեդերացիայի, «Մլավոնական տուն» հասարակական կազմակերպության, Հայաստանի և Արցախի հույների «Պատրիդա» հասարակական կազմակերպության, Երևան քաղաքի հույների «Պոնտի» համայնքի, Ալավերդու հունական համայնքների ֆեդերացիայի, «Անաստասի» հունական համայնքի, Վանաձորի «Պոնտի» հունական համայնքի և «Էլպիդա» հասարակական կազմակերպության, Նոյեմբերյանի «Օլիմպոս» հունական համայնքի, Հայաստանի եզդիների ազգային միության,

Եզդիների կրոնական համայնքի, ՀՀ քուրդ մտավորականության խորհրդի վարչության, Աշխարհի եզդիների ազգային միության, «Քուրդիստան» կոմիտեի, «Մլատե եզդի» համայն եզդիների հիմնադրամի, «Աթուր» ասորական սոցիալազգային, Հայաստանի ասորական «Աշշուր» երիտասարդական կենտրոնի, Հայաստանի հրեական կրոնական համայնքի, Հայաստանի հրեական համայնքի, «Մենորա» հրեական մշակութային կենտրոնի, վրացական «Իվերիա» համայնքի, Հայաստանի գերմանական համայնքի և բազմաթիվ այլ կազմակերպությունների ղեկավարների հետ:

Հետազոտական խմբի հաջողությունները մեծապես կախված էին ազգային փոքրամասնություններից գրառված ազգագրական նյութերից, ուստի դաշտային աշխատանքներին տրված էր 4 ամիս (1999 թ. սկզբից մինչև 2000 թ. մայիս): Հետազոտական խմբի անդամները, որոնք նաև գրքի առաջին մասի հեղինակներն էին, գործուղվեցին Հայաստանի քաղաքներ ու գյուղեր, որտեղ հոծ կամ ցրված ապրում էին եզդիներ (քուրդ-եզդիներ), ռուսներ, հույներ, ասորիներ և բոշաներ՝ նպատակ ունենալով լրացուցիչ ու թարմ նյութեր հավաքել գրքի հրատարակման համար: Խմբի անդամներն աշխատել են Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի, Ախթալա, Շամլուղ, Արտաշատ, Արթիկ, Աբովյան, Հրազդան, Իջևան և այլ քաղաքներում, ինչպես նաև Հայաստանի բոլոր մարզերի մի քանի տասնյակ գյուղերում: Պարբերաբար հետազոտություններ էին կատարվում նաև Երևանում: Ուսումնասիրությունների ընթացքում վերը նշված ազգային փոքրամասնությունների էթնոժողովրդագրական վիճակի, սոցիալ-տնտեսական կյանքի, էթնոմշակութային զարգացման միտումների վերաբերյալ հավաքվեցին հսկայածավալ նյութեր: Այնուհետ, հետազոտողները Յու. Մկրտումյանի գլխավորությամբ ձեռնամուխ եղան այդ նյութերի քանակական և բովանդակային վերլուծության, դասակարգման և շարադրման աշխատանքներին: Արդյունքում, Յու. Մկրտումյանի խմբագրությամբ 2000 թ. հրատարակվեց «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններն այսօր, I» գիրքը, որտեղ անդրադարձ է կատարվում նշված ազգային փոքրամասնությունների էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային, էթնոհոգեբանական և իրավաքաղաքական խնդիրներին, որն առաջին անգամ է իրականացվում մեր հանրապետությունում: Հավաքված նոր ու հավաստի նյութերը հիմնավորեցին այն եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնք ազգային փոքրամասնություններին օժանդակելու համար կարող են հիմք հանդիսանալ կառավարության ծրագրերի մշակման գործում: Դրա արդյունքում բացահայտվեցին մեր հասարակության անցումային շրջանի պայմաններին նրանց հարմարվելու գործընթացի առանձնահատկությունները, վեր հանվեցին տնտեսական գործունեության հիմնական ոլորտները, սոցիալական և էթնոմշակութային առանձնահատկությունները, միգրացիոն միտումները, իրավունքի և շահերի պաշտպանության խնդիրները: Գրքի առանձին բաժինների շարադրանքին Յու. Մկրտումյանի հետ մասնակցեցին նաև Հ. Մարգարյանը, Մ. Գաբրիելյանը, Ա. Թադևոսյանը, Բ. Դովժենկոն, Լ. Պետրոսյանը: Հ. Մարգարյանի կողմից կազմվեց

Հայաստանում նշված ազգային փոքրամասնությունների տեղաբաշխման քարտեզը: Որպես այդ աշխատանքների հաջող ավարտ, Յու. Մկրտումյանի մեծ ջանքերի շնորհիվ, 2000 թ. մարտի 12-ին, Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ, անցկացվեց ՀՀ ազգային փոքրամասնությունների հասարակական ազգային-մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչների համագումարը, որին մասնակցեցին Հայաստանի հասարակական, ազգային-մշակութային գրեթե բոլոր կազմակերպությունները՝ շուրջ 120 պատգամավոր:

Այն ընդունեց մի շարք կարևոր փաստաթղթեր՝ կապված ազգային փոքրամասնությունների զարգացման ասպարեզում գոյություն ունեցող խնդիրների հետ: Ավելին, համագումարում ընդունվեց բանաձև, որում առաջ էին քաշվում հետևյալ հիմնախնդիրները.

- արագացնել «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի ընդունումը, որի նախապատրաստման ու քննարկմանը պետք է գործուն մասնակցություն ունենան նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ու նրանց հասարակական կազմակերպության կառույցները.
- համագումարում ձևավորել «Համակարգող Խորհուրդ»՝ նրա կազմում ընդգրկելով յուրաքանչյուր ազգային փոքրամասնությունից երկուական ներկայացուցիչ, որոնք ունեն իրենց հասարակական ազգային-մշակութային կազմակերպությունները.
- հանձնարարել «Համակարգող Խորհրդին», նկատի ունենալով պատգամավորների առաջարկություններն ու ցանկությունները, ընդհանրացնել դրանք, նախապատրաստել երաշխավորությունների և անհետաձգելի միջոցառումների ծրագիր՝ համապատասխան պետական մարմիններին ներկայացնելու համար.
- հանձնարարել «Համակարգող Խորհրդին», երկամսյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել այդ խորհրդատվական մարմնի իրավունքների, գործառույթների և պարտավորությունների մասին կանոնադրությունը.
- անհրաժեշտ է կրթության, մշակույթի և առողջապահության ոլորտում ապահովել պետական աջակցություն: Հանձնարարել «Համակարգող Խորհրդին», եռամսյա ժամկետում մշակել առաջարկների փաթեթ՝ համապատասխան նախարարություններին ներկայացնելու համար.
- խթանել ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առավել գործուն մասնակցությունը հանրապետական, մարզային և տեղական կառավարման մարմիններում.
- նպատակահարմար է ՀՀ կառավարությանը կից ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներով զբաղվող հատուկ կառույց ստեղծելը.
- առաջարկել ՀՀ կառավարությանն աջակցելու պետական ԶԼՄ-ներում ազգային փոքրամասնություններին վերաբերող խնդիրների ավելի լայն լուսաբանմանը.



• առաջարկել ՀՀ կառավարությանն ազգային փոքրամասնություններին անհատույց հատկացնել առանձին տարածք՝ մշակութային կենտրոն հիմնելու համար, որը հնարավորություն կտա ծավալել մշակութային ու կրթական լիարժեք գործունեություն.

• նպատակահարմար է ազգային փոքրամասնությունների առկա խնդիրները ճանաչելու և զարգացման միտումները կանխատեսելու նպատակով անցկացնել գիտակիրառական կանոնավոր հետազոտություններ՝ ուղղված զարգացման պետական և հասարակական ծրագրեր մշակելուն:

Համագումարի անցկացումը կարևոր նշանակություն ունեցավ ազգային փոքրամասնությունների հասարակական ազգային-մշակութային կառույցների հիմնման գործում, ստեղծվեցին նոր միավորումներ, ասոցիացիաներ ու կենտրոններ, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում ազգային լեզվի, մշակույթի և կրոնական ինքնության պահպանման ու զարգացման, արտերկրում իրենց ազգակից համայնքների և կազմակերպությունների հետ սերտ փոխհարաբերություններ հաստատելու ուղղությամբ:

Այս ամենի արդյունքում ստեղծվեց ՀՀ նախագահի խորհրդականին առընթեր Համակարգող խորհուրդ, որի անդամներն ընտրվեցին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից, այսօր ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Բացի դրանից, Յու. Մկրտումյանը և ազգագրագետների խումբը, իրենց մասնակցությունն են ունեցել 2001 թ. ՀՀ մարդահամարի անցկացման համար ազգությունների անվանացանկը կազմելու գործում, որը կիրառվել է նաև 2011 թ. ՀՀ մարդահամարի ժամանակ:

Նախապես որոշված էր շարունակել հետազոտությունները՝ ընդգրկելով Հայաստանում բնակվող ազգային մյուս փոքրամասնություններին ևս: Որոշակի նախապատրաստական աշխատանքներից հետո, 2001 թ. հետազոտական խումբն սկսեց իր աշխատանքները: Յու. Մկրտումյանի առաջարկով ծրագիրը կոչվեց «Հայաստանի ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում», որը հիմնականում իրականացվեց շուրջ երկու տասնյակ էթնիկ հանրությունների շրջանում: Այս փուլում դաշտային հետազոտական աշխատանքներն ավելի մեծ ծավալներ ընդգրկեցին, և ավելացավ հետազոտական խմբի անդամների թիվը, որոնք եղան Հայաստանի գրեթե բոլոր այն բնակավայրերում, որտեղ բնակվում էին խնդրո առարկա էթնիկ հանրությունները: Այդ հարցում ևս աջակցություն ցուցաբերեց Հայաստանի վիճակագրական ծառայության համապատասխան բաժինը: Արդյունքում, բավականին հարուստ նյութ հավաքվեց հետևյալ ազգային փոքրամասնություններից. ուկրաինացիներ, վրացիներ, բելառուսներ, գերմանացիներ, հրեաներ, լեհեր, իսկ փոքրաթիվ էթնիկ խմբերից՝ նյուֆեր գրառվեցին պարսիկների, արբակների, մոլդավացիների, մորդվանների, բուլղարների, ինգուշների, թաթարների, օսերի, լատիշների, լիտվացիների, ադրբեջանացիների, ուլիների, գնչուների վերաբերյալ: Այս առումով կարող ենք ասել, որ

Յու. Մկրտումյանը և հետազոտական խումբը մեծ ներդրում ունեցան Հայաստանի բնակչության ազգային կազմի ճշգրտման, ամբողջականացման և համակողմանի տեղեկատվության հավաքման առումով: Ուսումնասիրության արդյունքում, 2005 թ. Յու. Մկրտումյանի խմբագրությամբ հրատարակվեց «ՀՀ ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II» գիրքը: Այդ աշխատության հեղինակներ են՝ Յու. Մկրտումյանը, Մ. Գաբրիելյանը, Մ. Գալստյանը, Ա. Թադևոսյանը և Հ. Սարգսյանը: Այս գրքում նույնպես տեղ է գտել վերը նշված ազգային փոքրամասնությունների և փոքրաթիվ էթնիկ խմբերի՝ Հայաստանում տեղաբաշխվածության քարտեզը՝ կազմված Հ. Սարգսյանի կողմից:

Հրատարակված երկու աշխատությունների նպատակը ոչ միայն գուտ ակադեմիական և գիտաճանաչողական խնդիրներն էին, այլ ազգային փոքրամասնությունների շրջանում առկա իրավական, սոցիալ-մշակութային խնդիրների բացահայտումը և Հայաստանի հասարակությանը, օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններին դրանց ներկայացումը և դրանց մեղմացման ուղղված առաջարկությունների մշակումը: Երկրորդ գրքի հրատարակումը ձգձգվեց մի քանի պատճառով. նախ՝ 2001 թ. կայացած ՀՀ մարդահամարի տվյալները հրատարակվեցին միայն 2004 թ., այնուհետև, հետազոտվող ազգային փոքրամասնությունները ցրված էին հանրապետության ամբողջ տարածքում և վերջապես, շատ ցավալի մի հանգամանք՝ Յու. Մկրտումյանի ծանր հիվանդությունը: Մեր հարգանքի տուրքը մատուցելով այդ Մեծ Մարդուն՝ նշենք, որ նրա ջանքերի շնորհիվ հաջողվեց 2005 թ. հրատարակման ներկայացնել այս աշխատանքը: Այսպիսով, ազգային փոքրամասնությունների շրջանում իրականացրած ուսումնասիրության արդյունքները տպագրվեցին երկու գրքով, և առաջին անգամ Հայաստանում համակողմանի հետազոտվեցին ու ներկայացվեցին նրանց ազգաբանական, էթնոժողովրդագրական, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները:

Հայաստանի ազգային փոքրամասնությունների ուսումնասիրության գործում Յու. Մկրտումյանի ներդրումը կարևոր էր մի քանի առումներով.

Առաջին՝ նրանց ուսումնասիրության հարցում ետ մեթոդաբանական մոտեցումների կիրառումը: Նա որոշակի հստակություն մտցրեց «ազգային փոքրամասնություն», «էթնիկ խումբ», «փոքրաթիվ էթնիկ խումբ» հասկացությունների պարզաբանման վերաբերյալ: «էթնիկ խումբ» հասկացությամբ նկատի է առնվում էթնոսի (ազգի, ժողովրդի) այնպիսի հատված, որը բնակվում է այլ երկրում՝ իր պատմական հայրենիքից դուրս և սերտորեն առնչվում է տվյալ երկրի էթնիկ հանրությանը, նրա սոցիալ-տնտեսական, լեզվամշակութային և պետաիրավական համակարգին: Բայց եթե նման խումբը ինքնակազմակերպվում և ստեղծում է ինստիտուցիոնալ կառույցներ, որոնք միտված են միավորելու, պահպանելու և զարգացնելու սեփական լեզվամշակութային արժեքները, ապա այն հանդես է գալիս որպես «ազգային փոքրամասնություն»: Ընդ որում, խմբի քանակական մեծությունից առավել էական գործոն է նրա անդամների քաղաքացիական կարգա-

վիճակը: Ելնելով այդ սկզբունքներից՝ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II» գրքի հեղինակային խումբը ՀՀ տարածքում առանձնացնում է 11 ազգային փոքրամասնություն<sup>2</sup>: Ինչ վերաբերում է «փոքրաթիվ էթնիկ խումբ» հասկացությանը, ապա նրանցում բացակայում են ինստիտուցիոնալ կառույցները և չեն ինքնակազմակերպվել ու ստեղծել իրենց ազգային-մշակութային կամ այլ բնույթի հասարակական կազմակերպություններ<sup>3</sup>:

**Երկրորդ՝ Յու. Մկրտումյանը** ազգային փոքրամասնությունների ուսումնասիրությունը դիտարկեց ոչ միայն նրանց պատմական զարգացման, այլև նրանց առջև ծառայած արդիականության խնդիրների տեսանկյունից:

**Երրորդ՝** համակողմանի և ամբողջական տեղեկատվություն հավաքելու նպատակով կիրառեց կիսաստանդարտացված հարցման, փաստաթղթերի վերլուծության, փորձագիտական հարցման մեթոդները:

**Չորրորդ՝ Յու. Մկրտումյանը** ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների խնդիրները դիտարկեց Հայաստանում ընթացող ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կայացման գործում նրանց ունեցած ներդրումների տեսանկյունից:

**Հինգերորդ՝** Ազգային փոքրամասնությունները դիտարկեց հայ բնակչության և միլիոնավոր հետ համագործակցության հարաբերություններում՝ ակուլտուրացիայի և ինտեգրացման տեսությունների շրջանակներում:


**Վեցերորդ՝** ՀՀ ազգային փոքրամասնությունների իրավունքները քննարկեց միջազգային իրավական, միջազգային քաղաքական չափորոշիչների և նորանկախ Հայաստանի Հանրապետության պետական օրենսդրության և քաղաքականության համադրելիության տեսանկյունից:

<sup>2</sup>Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունները քաղաքացիական հասարակության կայացման արդի պայմաններում, II, Երևան, 2005, էջ 15:

<sup>3</sup>Նույն տեղում:



---



**МИГРАН ВАРДГЕСОВИЧ ГАЛСТЯН**

Ведущий научный сотрудник, зав. отделом этносоциологии  
Института археологии и этнографии, доктор исторических наук  
эл. почта - akoonk@yahoo.ru

**ГАМЛЕТ ГРИГОРЕВИЧ САРКИСЯН**

Старший научный сотрудник, Института археологии и этнографии  
кандидат исторических наук

**ВКЛАД ЮРИЯ МКРТУМЯНА В ИССЛЕДОВАНИИ  
НАЦИОНАЛЬНЫХ МЕНЬШИНСТВ АРМЕНИИ**

Резюме

Известный этнограф Ю. Мкртумян одним из первых инициировал исследования национальных меньшинств в Армении. Под его чутким руководством сложилась творческая группа опытных этнографов, которая подготовила и осуществила полевые исследовательские работы среди национальных меньшинств Армении. На первом этапе были рассмотрены этно-демографические, социально-экономические, политико-правовые, этнокультурные процессы среди пяти национальных меньшинств: езиды или курды-езиды, русские, айсоры, греки и боша. На втором этапе группа собрала уникальные данные среди украинцев, грузин, белорусов, немцев, евреев, поляков и других малочисленных этнических групп. В результате исследований под редакцией Ю. Мкртумяна в 2000 году вышла в свет книга «Национальные меньшинства Республики Армения сегодня, I». Далее, в 2005 году была издана вторая книга «Национальные меньшинства Республики Армения в современных условиях становления гражданского общества, II». Целью этих публикаций стало не только постижение академических и научно-познавательных вопросов, но и выявление правовых, социально-культурных проблем, выработка прогнозов тенденций развития. Целеполагалось также, основываясь на этих трудах, разработать государственные и общественные программы развития национальных меньшинств.

**Ключевые слова:** Национальное меньшинство, этническое общество, этническая группа, этнокультурное, социально-экономическое, национальный состав, малочисленная этническая группа, общественная организация, съезд.



MIHRAN VARDGES GALSTYAN

Leading Scholar, Head Department of Ethnosociology of the  
Institute of archaeology and ethnography, Doctor of Historical Sciences  
e-mail: akoonk@yahoo.ru

HAMLET GRIGOR SARGSYAN

Senior researcher of the Institute of  
archaeology and ethnography, Ph.D.

CONTRIBUTION OF YURY MKRTUMYAN TO  
THE STUDY OF ETHNIC MINORITIES OF ARMENIA

Summary

The famous ethnographer Yury Mkrtumyan was one of the first to initiate research on ethnic minorities in Armenia. Under his watchful guidance, a creative team of experienced ethnographers were formed. Together they carried out field research among the ethnic minorities of Armenia. At the first stage, ethno-demographic, socio-economic, political-legal, ethno-cultural processes were considered among five national minorities: Yezidis or Yezidi Kurds, Russians, Assirians, Greeks and Bosh-Gypsies. At the second stage, the group collected unique data among Ukrainians, Georgians, Belarusians, Germans, Jews, Poles and other small ethnic groups. As a result of research edited by Y. Mkrtumyan, the book "National Minorities of the Republic of Armenia Today, I" was published in 2000. Further, in 2005, the second book "National Minorities of the Republic of Armenia in the Modern Conditions of the Formation of Civil Society, II" was published. The purpose of the publication of these books was not only the comprehension of academic and scientific-cognitive issues, but also the identification of legal, socio-cultural problems, making forecasts of development trends. It was also aimed, based on these works, to develop state and public programs for the further development of these national minorities.

**Keywords:** ethnic minority, ethnic community, ethnic group, ethno-cultural, socio-economic, national structure, small ethnic group, non-governmental organization, congress.



## ԳԱԼՅԱ ԳՐԻՇՄԱՅԻ ԴԱՎԻԴՈՎԱ

Հայոց ազգագրության թանգարանի ավագ գիտաշխատող  
Էլ. փոստ - Galya.davidova.60@gmail.com

### ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ «ՓԱՍՏԱԹՈՒՂԹ» ՀԱՎԱՔԱՏՈՒՐ

**Բանալի բառեր.** փաստաթուղթ, ֆոնդ, հավաքածու, թանգարան, նյութ, արխիվ, ցուցադրություն:

Հայոց ազգագրության թանգարանի «Փաստաթուղթ» ֆոնդի հավաքածուների հավաքագրումը թանգարանի գիտական անձնակազմի ավելի քան քառասուն տարիների ջանասիրության ու եռանդուն աշխատանքի արգասիքն են: Գիտաշխատողների շնորհիվ կորստից փրկվել են մասունքներ, որոնք այսօր պատմական իրադարձությունների խոսուն վկաներն են:

Սույն հոդվածի նպատակն է գիտական հանրությանը ներկայացնել «Փաստաթուղթ» ֆոնդի հարուստ ու պատմական կարևորագույն արժեք ունեցող փաստաթղթերը, որոնցից յուրաքանչյուրն ունի յուրօրինակ լեզենդ-պատմություն: Մա արժեքավոր շտեմարան է, որը ուսումնասիրող գիտական հանրության համար կդառնա նոր բացահայտումների սկիզբ: Մեծարժեք վավերագիր անտիպ փաստաթղթերը կլրացնեն մեր պատմության սպիտակ էջերը:

Հայոց ազգագրության թանգարանի 13 հավաքածուներում զետեղված են հայոց ազգային մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաներ՝ հնագույն շրջանից մինչև 20-րդ դարի 90-ական թվականները:

ՀԱԹ-ի՝ «Փաստաթուղթ», «Ֆոտո», «Հնագիտություն», «Գործվածք», «Թանկարժեք մետաղ», «Ապակի», «Հոգևոր մշակույթ», «Ազգագրություն և կենցաղ», «Գերպարվեստ», «Դրամագիտություն», «Մարդաբանություն», «Հերոսամարտերի պատմություն», «Աշխարհի ժողովուրդների ազգագրություն» ֆոնդերում պահպանվում է 74565 մշակութային արժեք, որոնք թանգարանը դարձնում են հայ ինքնության պահպանման նորոյա տաճար:

ՀԱԹ-ի «Փաստաթուղթ» հավաքածուն ունի հիմնական և գիտաօժանդակ (ՓԳՕ) վավերագիր փաստաթղթեր: Հիմնական ֆոնդն ունի ավելի քան 3377 թանգարանային

<sup>1</sup> ՀԱԹ-Հայոց ազգագրության թանգարանի կարճ անվանումը, նախկինում թանգարանը ունեցել է հետևյալ անվանումները.

Հայաստանի ազգագրության պետական թանգարան (ՀԱՊԹ)՝ թանգարանի կարճ անվանումը (1978-1998), «Մարդարապատի հուշահամալիր, Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան» (1998-2006),

«Մարդարապատի հուշահամալիր, Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (2006-2010),

«Մարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (2010):

արժեք: Ճոնդում պահպանվում են բնօրինակ նյութեր, կրկնօրինակներ և արտատպություններ, որոնցից որոշները բնօրինակին համարժեք են: Հիմնական ֆոնդն ունի թեմատիկ դասակարգում՝ փաստաթղթեր, հնատիպ գրքեր, ամսագրեր, թերթեր, արխիվներ, տոհմածառեր, գծապատկերներ, ժամանակավոր ցուցահանդեսների նյութեր, ազդագրեր, ծրագրեր, հրավիրատուներ, վկայականներ, վկայագրեր, գիտարշավի նյութեր, այցեքարտեր, այցետոմսեր, նամակներ, օրագրեր, անձնագրեր, բացիկներ, դասագրքեր, տետրեր, ծոցատետրեր, ծանուցագրեր, քարտեզներ, հրամաններ, մանդատներ, շնորհավորագրեր, գովասանագրեր, տեղեկանքներ, գրություններ և այլ փաստաթղթեր (46 անուն փաստաթուղթ): Մեծարժեք հավաքածուները բացառիկ նշանակություն ունեն հայոց մշակույթի պահպանման, ուսումնասիրման և հանրառոշակման գործում:

«Փաստաթուղթ» ֆոնդի գանձերից է շքեղ զարդանախշ փորագրանկարային պատկերներով առաջին հայ տպագիր «Աստվածաշունչը»՝ տպագրված 1666 թվականին Ամստերդամում: Այն ներկայացված է թանգարանի հիմնական ցուցադրությունում: «Աստվածաշունչ»-ն իր նշանակալիությամբ պատկանում է թանգարանային հազվագյուտ առարկաների թվին: Պատկերազարդ գիրքն իր մեջ պարունակում է Հին և Նոր կտակարանները, ունի 1462 էջ, 160 սև ու սպիտակ փորագրանկարներ, որոնց հեղինակն է հռլանդացի փորագրանկարիչ Քրիստոֆել վան Ջիխեմը<sup>2</sup>: Նա կրկնօրինակել է Ռաֆայելին, Ալբրեխտ Դյուրերին և Հենդրիկ Գուլցիուսին: Փորագրանկարները ձեռք է բերել հայ հոգևորական և հրատարակիչ Մատթեոս Ծարեցին: «Աստվածաշունչ»-ը հայերեն առաջին հրատարակությունն է՝ տպագրված ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Ջուղայեցու աջակցությամբ: Տպագրիչն է Ոսկան Երևանցին: Գրքի տպագրությունը ժամանակի մշակութային խոշոր երևույթ էր ոչ միայն հայ իրականության մեջ, այլև ամբողջ Եվրոպայում: Հնատիպ գրքերից են «Բառագիրք» հայկազյան լեզվի (հ. 2, Վենետիկ, 1769 թ.), Գ. Աբովյանցի «Համառոտություն հայոց ազգի պատմության» (Թիֆլիս, 1877 թ.) և արժեքավոր այլ գրքեր: Հարուստ ու ազգային արժեք ներկայացնող տեղեկատվություն են պարունակում «Ամսագրեր, թերթեր» բաժնում՝ 1895 թ. Թիֆլիսում տպագրված առաջին մանկական պատկերազարդ «Աղբյուր» ամսագիրը (լույս է տեսել 1883-1918 թթ., խմբագիր՝ Տիգրան Նազարյան), հասարակական քաղաքական օրաթերթ «Մշակ»-ի 1910 թ. № 10-ը (հրատարակվել է 1872-1921 թթ., առաջին խմբագիրը՝ Գ. Արծրունի), 1847 թ. Թիֆլիսում տպագրված «Կովկաս» ամսագիրը (լույս է տեսել 1846-47 թթ., խմբագիրներ՝ Հ. Արզանյան, Հ. Կարենյան), 1860 թ. Թեոդոսիայում լույս տեսած «Միածան» ամսագիրը և հետաքրքիր նյութեր ունեցող այլ թերթեր ու ամսագրեր:

Արժեքավոր են հայ հայտնի երգահան-երաժիշտների, նվագարանագործ-վարպետների անձնական արխիվները՝ վկայականներ, բացիկներ, համերգների ազդագրեր ու

<sup>2</sup> *Միսնյան Ա.*, Հայտնության փորագրանկարները Ոսկան Երևանցու և Թովմա Վանանդեցու հրատարակություններում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, № 3, էջ 278-299: Քրիստոֆել վան Ջիխեմը մի շարք նկարիչների անվանատառերը թողել է նրանց նկարներից պատճենած փորագրանկարների վրա՝ AD-Ալբրեխտ Դյուրեր, HG-Հենդրիկ Գուլցիուս, միաժամանակ դրել իր ստորագրությունը՝ CVS:

նամակներ՝ ուղղված կանանց ու մտերիմներին: Դրանցից են քամանչահարներ, Արևելքի մեծ երաժիշտ Ալեքսանդր Օգանեզաշվիլու (որ Լևոն Կարախանի հետ ավելացրեց քամանչայի մեկ լարը՝ դարձնելով քառալար)<sup>3</sup> և նրա աշակերտ՝ քամանչահար Գուրգեն Միրզոյանի արխիվները, դուդուկահարներ Լևոն Մաղոյանի, Վաչե Հովսեփյանի, թառահարներ Սողոմոն Մելրանյանի, Լևոն Կարախանի, ուղահար, Հայաստանում ուղի դպրոցի հիմնադիր Սողոմոն Ալթունյանի, դիրիժոր, թառահար-մանկավարժ Արամ Մերանգույանի, բաս ջութակահար, նոր քամանչաների՝ պրիմայի հեղինակ Վարդան Բունու (Բունիաթյան) և ուրիշների արխիվները:

Հավաքածուում տեղ են գտել հայտնի մարդկանց նյութեր, օրինակ՝ ռուս մարդաբան, ակադեմիկոս Ս. Գերասիմովի աշակերտ ակադեմիկոս, վիրաբույժ Անդրանիկ Ճաղարյանի՝ մարդու գանգի վերականգնման աշխատանքների մասին նյութերը: Մեծանուն մարդկանց արխիվների շարքը լրացնում են ԽՍՀՄ դիրիժոր Ալեքսանդր Շամիլի Մելիք-Փաշանի, բժիշկ Լևոն Քրիստափորի Պոպովի, Նագելի (տնտեսագետ) և Սրբուհի (ազգագրագետ-պարագետ) Լիսիցյան քույրերի նյութերը, հայոց ցեղասպանության զոհ դարձած ՀՅԴ գործիչ, կազմակերպիչ, մարտիկ-գրող Նիկոլ Միքայելյանի՝ Վանի Իշխանի թղթապանակը, որում պարունակում են նամակներ (7), փաստաթուղթ-վկայականներ (15), տեղեկանքներ, նոթատետրեր, նրա ձեռքով գծած Վան քաղաքի քարտեզը, որը չի տարբերվում տպագիր քարտեզներից: Արժեքավոր են հատկապես քաղաքական որոշ իրադարձությունների մասին տեղեկություններ պարունակող թղթապանակները: Իրենց կարևորությամբ չեն զիջում տարբեր մարդկանց և զանազան բովանդակության նամակները, հուշերն ու օրագրերը, որոնք պատմության խոսուն վկաներ են: Այս առումով կարևորագույն ձեռքբերումներ են հատկապես Մայիսյան հերոսամարտերի մասնակիցների հուշերն ու օրագրերը, որոնք ավելի են արժևորում «Փաստաթուղթ» հավաքածուն:

Հայոց ազգագրության թանգարանի արժեքավոր ձեռքբերումներից են Մարդարապատի հերոսամարտի մասնակիցների՝ Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանի (կոռնետ Վանո), Գևորգ Սարգսյանի (5-րդ գնդի 1-ին գումարտակի կապի վաշտի հրամանատար), Հովհաննես Մարգարյանի (Հայկական 5-րդ հրաձգային գնդի զինվոր), Հակոբ Միմոնյանի (5-րդ գնդի 1-ին վաշտի հրամանատար՝ պորուչիկ), Նշան Սանիշակյանի (Բաշ-Ապարանի հերոսամարտի մասնակից, զինվորական բժիշկ) հուշերը:

Ճակատամարտի մասնակիցների մասունք դարձած հուշերը 2014թ. ամփոփվեցին թանգարանի կողմից հրատարակված «1918 թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում» գրքում<sup>4</sup>:

<sup>3</sup> Գևորգյան Գ., Մաշա Օգանեզաշվիլի, Երևան, 1973, էջ 85:

<sup>4</sup> Արխիտակեայան Գ., պ.գ.թ. Ս. Պողոսյան, Ա. Մելիքյան, 1918թ. մայիսյան հերոսամարտերը մասնակիցների հուշերում, Երևան, 2014:



Հավաքածուում պահվում են փոքրաթիվ, բայց արժեքավոր օրագրեր. պատասիկները Մարդարապատի հերոսամարտի մասնակից, աշխարհագրային ջոկատի հրամանատար Արիս Ջորիկ Մամիկոնյանի օրագրից (1920 թ.), Մարդարապատի հերոսամարտի մասնակից, կամավորական ջոկատի հրամանատար Մարտիրոս Աբրահամյանի (Բաշգյառնեցի Մարտիրոս) օրագիրը (1923թ.), ինչպես նաև Մարդարապատի հերոսամարտի մասնակից, բժիշկ (հետագայում բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 180 աշխատությունների հեղինակ) Քրիստափոր Փիրույանի վերաբերող փաստաթղթեր:

Ամենատարբեր բովանդակության բազմաքանակ առարկաները լրացնում են ժամանակաշրջանի և իրադարձությունների պատկերը, վերականգնում այն իրականությունը, որում ապրում և արարում էր հայը:

Այս թվարկումների մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև Լազարյան Ճեմարան-ինստիտուտի նյութերը, որոնք դիվանագիտական կարևորագույն փաստաթղթերի կրկնօրինակներ կամ արտատպություններ են: Ճեմարանը (հայագիտական և արևելագիտական ուսումնական ու գիտական հաստատություն, հետագայում՝ Արևելյան լեզուների ինստիտուտ) հիմնադրվել է 1815 թ. ազնվական Հովակիմ Լազարյանի (1743-1826) կողմից: Լազարյանների ունեցվածքի մասին փաստաթղթի բնօրինակը պահվում է Խորհրդային պատմության կենտրոնական արխիվում (ԽՊԿԱ): Արժեքավոր, ուշագրավ փաստաթղթերի արտատպություններից են Եկատերինա Երկրորդի հրովարտակը Նոր Նախիջևանի հիմնադրման և հայերին տրվող արտոնությունների, ինչպես նաև Ալեքսանդր Առաջինի հրովարտակը Թերեքի շրջանում մետաքսի գործարան հիմնելու և հայերին առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալու մասին: Կրկնօրինակ փաստաթղթերի շարքը լրացնում է մի յուրօրինակ նյութ, որը արժեքավոր տեղեկատվություն է պարունակում առևտրի վերաբերյալ: Փաստաթղթում նշված է Սպահանի առևտրական համայնքի ներկայացուցիչ խոջա Ջաքար Սահրասյանի և նրա ընկերների՝ Մոսկվա ժամանման, ցար Ալեքսեյ Միխայլովիչին թանկարժեք իրեր՝ զմրուխտե զարդեր և «Ալմաստե գահ» նվիրելու մասին: Հայ ժողովրդի պատմության փառավոր էջերը լուսաբանող մեծարժեք փաստաթուղթ է 1699 թ. Սյունիքի 11 մելիքների ուղերձը (Անգեղակոթի խորհրդաժողով) Պյոտր Ալեքսեևիչին՝ ներկայացված ազգային-ազատագրական շարժման գործիչ Իսրայել Օրու (1659-1711) կողմից: Ուշագրավ է 1706 թ. Իսրայել Օրու փաստաթուղթ-խնդրագիրը՝ Պյոտր Մեծի մակագրությամբ, որը վկայում է ճանապարհորդության ժամանակ նրա կողմից ծախսվող գումարի հատուցման մասին:

Կարևորագույն փաստաթղթերի մեջ կա նաև ասորի դիվանագետ, Համադանում ռուսական դեսպանատան ներկայացուցիչ, բազմալեզու գրող, ասորական դասական գրականության հիմնադիր Բենյամին Արսանիսին վերաբերող մի թղթապանակ: Նա տվորել է Լազարյան ճեմարանում և հետագայում արևելյան լեզուներ է դասավանդել նույն ճեմարանում: Արսանիսի՝ ասորերենով գրված 9 գիրք, 1 դրամա, 1 թատերական ծրագիր

պահվում են «Փաստաթուղթ» ֆոնդում: Սա վկայում է այն մասին, որ ՀԱԹ-ի ֆոնդերում պահպանվում են Ռուսական կայսրության ուղղված, ռուսահայ, վրացահայ, պարսկահայ գաղութների վերաբերյալ գրություններ, ինչպես նաև այլազգի հայտնի անձանց գործունեությունը ներկայացնող նյութեր:

Այս ամենը հաստատում է մի կարևորագույն փաստ՝ ՀԱԹ-ի հավաքածուները հարուստ են ինչպես հնագույն, այնպես էլ՝ XVIII-XX դարերն ընդգրկող նյութերով և առարկաներով, որոնք ամբողջական պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջաններին բնորոշ կենցաղի, մշակույթի, քաղաքական իրադարձությունների մասին:

Ֆոնդում պահվում են ուշագրավ տոհմաձառեր, որոնց միջոցով բացահայտում ենք հայ գերդաստանների ազգակցական հարաբերությունները: Ընտանիքների, տոհմերի և ազգերի մասին հիշողությունը հաճախ ներկայացվում է ծառի տեսքով, որը զարմանալի չէ, քանի որ ծառը համարվում է ծննդի և զարգացման իրական մոդել:

Հավաքածուում արժեքավոր են Մալաթիայի Որբերյանների տոհմաձառը (կրկնօրինակ), որի վրա տոհմի անդամների անուններից բացի «+1915»-ով առանձնացված են Եղեռնի ժամանակ զոհված տոհմակիցները, տոհմիկ դարբին-զինագործներ Մամիկոնյան-Չիլինգարյանների տոհմաձառը (սկսվում է 1650 թ. Մուշ - Գլդանից)<sup>5</sup>: Տոհմաձառի վրա նշված է 10-12 սերունդների մոտավորապես 3000 անուն, 1980թ. տոհմաձառը կազմել է քիմիական գիտությունների թեկնածու Է. Մարգարյանը: Չիլինգարյան գերդաստանը միշտ սերտ կապի մեջ է թանգարանի հետ: 2014 թ. իունիսի 25-ին ՀԱԹ-ի բակում Չիլինգարյանների կողմից կազմակերպվեց «Դարբնի տունը» միջոցառումը, որի ժամանակ նրանք մշտական ցուցադրության համար նվիրեցին 15 առարկա:

Հավաքածուի մի թղթապանակ նվիրված է Չոփուրյանների (պատմությունը սկիզբ է առնում 1765 թվականից, տոհմաձառը կազմվել է Հալեպում՝ 1956 թ.) և Տեր-Ավետիսյանների (սկիզբ է առնում 1680 թ. Սիսիանի Բոնակոթ գյուղից, կազմվել է 1980 թ. տոհմի 300-ամյակի առթիվ) գերդաստանների պատմությանը:

Արժեքավոր տեղեկություններ են պարունակում «Հայ-թուրքական հարցեր»-ի, «Հայ-ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան»-ի, ինչպես նաև տոհմիկ-զինագործ Չիֆթալարյանների տոհմի պատմությանը նվիրված թղթապանակները:

Ֆոնդում պահպանվում են նաև գիտարշավների նյութեր: «Փաստաթուղթ» ֆոնդում պահպանվում են նյութեր, վավերագրեր, որոնք ձեռք են բերվել թանգարանի կողմից կազմակերպված գիտարշավների ժամանակ: Դրանք անցկացվում էին և՛ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, և՛ Երևանի պետական համալսարանի Հնագիտության և ազգագրության ամբիոնի հետ համատեղ (ղեկավար՝ ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յուրի Մկրտումյան): Գիտարշավները կազմակերպվել են Հայաստանի և Ջավախքի, Արցախի, Ռուսաստանի հայաբնակ բնակա-

<sup>5</sup> Չիլինգարյան (Մամիկոնյան) տոհմի պատմա-ազգագրական հասարակական կազմակերպության «Չիլինգար» պաշտոնաթերթ, 2013, թիվ 1:

վայրերում: Թանգարանային առարկաների ձեռքբերման, ազգագրական գիտարշավների կազմակերպման գործում իր վաստակն ունի հայոց ազգագրության ռահվիրա Յուրի Մկրտումյանը, որ մեզ սովորեցրել է ազգագրության հիմունքները, այբուբենը, ազգագրագետի աշխատանքի գաղտնիքներն ու նրբությունները: Նա սովորեցրել է մեզ դաշտային ազգագրական հավաքչական նյութ գրանցելիս վարվելաձևի կանոնները՝ ճիշտ մոտեցում բանասացի հետ աշխատելու ժամանակ: Յու. Մկրտումյանը ասում էր. «Պետք է այնպես անեք, որ բանասացը վստահի ձեզ: Երբ բանասացը շեղվում է բուն հարցի պատասխանից, չի կարելի նրան կոշտ ձևով ընդհատել, այլ նրբորեն հարցադրումը ուղղել նպատակակետին»: Դեռ ուսանողական տարիներից նա մեզ սովորեցնում էր սիրել թանգարանը, կապվել ու ներգրավվել թանգարանային առօրյային՝ մասնակից դառնալ ցուցահանդեսների աշխատանքներին, հանդիպել, շփվել օտարերկրյա ազգագրագետների հետ, ունկնդրել ազգագրության վերաբերյալ գիտաժողովների ժամանակ հնչած գեկուցումները: Ընկեր Մկրտումյանը ասում էր. «Ազգագրագետը պետք է հաճախ դաշտում լինի և գրառի իր տեսածն ու լսածը, հետո նոր վերլուծի նյութը»: Որպես ազգագրագետ՝ հպարտ եմ, որ կրթվել եմ «մկրտումյանական դպրոցի» ոգով, ավանդական ազգագրության կողմնակից եմ՝ ավանդականի հենքի վրա նորույթն ընդունող, այնպես, որ ավանդականի արմատը չխարխլվի: Շատ կարճ ժամանակահատված ընկեր Մկրտումյանի հետ աշխատել ենք Հայաստանի ազգագրության պետական թանգարանում: Ինչպես ինքն էր հպարտանում իր սաներով, այնպես էլ այսօր մենք՝ նրանով:

Տավուշում թանգարան բացելու նպատակով ՀԱՊԹ-ն կազմակերպել է երկու ազգագրական գիտարշավ՝ առարկաներ ձեռք բերելու նպատակով: Այդ գիտարշավներից մեկը՝ 1984 թ. հուլիսի 6-27-ը, ղեկավարել է Յու. Մկրտումյանը: Դաշտային ազգագրական հավաքչական աշխատանքը շատ արդյունավետ էր: Արդյունքում ձեռք է բերվել 128 առարկա՝ երկրագործական աշխատանքային գործիքներ, գորգագործական առարկաներ, ասեղնագործության նմուշներ, արհեստավորի գործիքներ: Երկրորդ գիտարշավը կազմակերպվել է 1989 թ. հուլիսի 18-25-ը (ղեկավար՝ Թ. Ստեփանյան), ձեռք է բերվել 169 մշակութային արժեք:

Յոնդում պահպանվում են նաև թանգարանի կողմից կազմակերպված և այլ երկրներից հրավիրված ցուցահանդեսների (թվով՝ 105) վերաբերյալ նյութեր: 2008թ.-ից մինչ այսօր թանգարանում կազմակերպվել են 38 ժամանակավոր ցուցահանդեսներ: ՀԱՊԹ-ն ունեցել է բազմաթիվ շրջիկ ցուցահանդեսներ՝ գյուղական ակումբներում, դպրոցներում, քաղաքային գրադարաններում, նույնիսկ՝ գնացքներում:

1980-ական թթ. ժամանակավոր ցուցադրությունները կազմակերպվում էին եռազմբեթ, հազարաշեն ծածկ ունեցող կենտրոնական դահլիճում: Այս դահլիճում են ներկայացվել աշխարհի տարբեր երկրներից բերված ցուցահանդեսներ:

1980 թ. ՀԱՊԹ-ն հյուրընկալեց Հարավսլավիայից բերված «Վաղ երկրագործների արվեստը Հարավսլավիայի տարածքում Բ.ա. 6-3-րդ հազարամյակներում» խորագրով ցուցահանդեսը:

«Օվկիանոսքի ազգագրությունը և արվեստը» (1981 թ.) ցուցադրությունը կղզիաբնակների նյութական մշակույթի անհետացման եզրին կանգնած թապայից (չգործած կտոր, որը ստանում էին թղթաթթենու, ֆիկուսի կամ հացի ծառի նրբակեղևից) պատրաստված առարկաների ցուցադրումն էր: Օվկիանոսքի ցուցադրության առանցքը ոչ միայն աշխատանքային գործիքներ էին, այլև ռուս նկարիչ Ն. Միշուտուշկինի՝ մելանեզացիների կենցաղի մասին պատմող կտավներն ու լուսանկարները:

1984 թ. Հունգարիայից բերված ցուցադրությունը նվիրված էր հունգարական ժողովրդական դեկորատիվ կիրառական արվեստին: Աշխատանքներում գերիշխում էր ազգային ոճը:

1984 թ. թանգարանում բացվել է Աֆրիկայից բերված «Տանգանիայի, Գվինեայի ժողովրդական արվեստը» խորագրով ցուցահանդեսը, որը ներկայացնում էր այդ երկրների ժողովուրդների նիստ ու կացը:

Լատինա-ամերիկյան հայտնի նկարիչ Օ. Գուայասամիի աշխատանքները շրջել են աշխարհով մեկ: 1982 թ. «Օսվալդո Գուայասամիի 1000 գծանկարների» ցուցահանդեսը Էկվադորից հանգրվանել է Տրեսյակուվյան պետական պատկերասրահում, այնուհետև՝ Էրմիտաժում, որից հետո՝ 1986 թ. ցուցադրվել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում:

1987 թ. «Մերձվոլգյան և Մերձուրալյան ժողովուրդների զարդերն ու տարազը» ցուցահանդեսը (260 ցուցանմուշ) ներկայացնում էր ուղմուրտների, մորդվաների՝ Էրզյաների և մոկչաների, չուվաշների, բաշկիրների, թաթարների, մարիների, կոմի-գիրյանների, կոմի-պերմյակների և այլ ժողովուրդների կենցաղը: Այցելուն ծանոթացավ յուրօրինակ, պարփակ կենցաղով ապրող այս էթնիկ հանրությունների կենցաղային առանձնահատկություններին, նիստ ու կացին, տարազին ու զարդերին: Այս ցուցահանդեսը մի նոր բացահայտում էր վերը նշված ժողովուրդների մասին, քանի որ հայաստանյան հանրությունը նրանց մասին կցկտուր տեղեկություն ուներ:

1987 թ. թանգարանը հյուրընկալել էր Պետրոզվարեցից բերված «Ռուսական և արևմտաեվրոպական կիրառական արվեստը XIX դ. վերջին - XX դ. սկզբին» (194 ցուցանմուշ) ցուցահանդեսը: Ցուցահանդեսը ներկայացնում էր ռուսական ապակու, հախճապակու արտադրանքի մշակույթը: Ցուցանմուշների մեծ մասը Սանկտ Պետերբուրգի «Թագավորական ապակու գործարանի» (հիմնված 1738 թ.) և «Թագավորական հախճապակու գործարանի» (1744 թ.) արտադրանքներն էին: Ցուցադրությունում ապակուց ու հախճապակուց բացի ներկայացված էին քանդակներ, թանկարժեք մետաղներից պատրաստված առարկաներ, գործվածք, կենցաղային իրեր, ինչպես նաև կահույք:

1988 թ. հունվարի 12-ից փետրվարի 20-ը ՀԱՊԹ-ում ցուցադրվել է «Քաշմիրի արհեստները» ցուցահանդեսը՝ Հնդկաստանից, որը կրում էր «Փոշիանա» (թարգմ.՝ «Օադիկների աշխարհ») անունը: Ցուցահանդեսում ներկայացվել են Քաշմիրի ամենատարածված արհեստները՝ գորգագործություն, պղնձագործություն, շալագործություն, արծաթագործություն, թղթազանգվածե իրերի (պապյե-մաշե) պատրաստում: Այս բոլոր արհեստներն ունեին աչքի ընկնող մեկ ընդհանրություն՝ գեղազարդումը կատարված էր ծաղկանախշերով: «Փոշիանա» ցուցահանդեսը մի փոքրիկ ծաղկեփունջ էր Քաշմիրի ծաղիկների գունագեղ աշխարհից:

ՀԱՊԹ-ն ոչ միայն հյուրընկալողի դերն է ստանձնել, այլև գեղեցիկ ցուցադրություններով ներկայացել միջազգային հանրությանը. Արգենտինայում 1985-1986 թթ. ներկայացվել է «Հայկական դեկորատիվ արվեստը» ցուցադրությունը, թվով՝ 142 ցուցանմուշ (հայկական գորգեր, գորելեններ, զարդեր և այլն):

1986 թ. Ուստ-Կամենագորսկում «Հայաստանի դեկորատիվ-կիրառական արվեստը» ցուցադրությունը ներկայացրել է ՀԱՊԹ-ի ֆոնդերից ընտրված 76 ցուցանմուշ (50՝ գորգեր, կարպետներ, վարագույրներ, անկողնապարկեր, բարձեր և այլն), «Ազգագրություն և կենցաղ» ֆոնդից՝ կաթսաններ, խնկաման, սափրիչի թաս, կովկիթներ, սափորներ և «Հոգևոր մշակույթ» ֆոնդից՝ հայկական ժողովրդական նվագարաններ՝ դուդուկ, շվի, գուռնա, ինչպես նաև «Թանկարժեք մետաղ»-ից՝ արծաթե կրծքազարդեր, ապարանջաններ, հյուսածո պայուսակներ: 2007 թ. հունվար-փետրվար ամիսներին Մարսելի (Ֆրանսիա) «Արվեստի և արհեստների» տանը կազմակերպված ցուցահանդեսին ՀԱԹ-ը ներկայացել է թանգարանային արժեքավոր 214 առարկաներով: Ցուցադրվող հավաքածուում իրենց ուրույն տեղն ունեին հնագիտական թանգարանային եգալի նմուշներ՝ «Օիսական շերեփ» (Լոռի բերդ, Ք.ա. XIV-XIII դդ., բրոնզ), «Տղամարդու կուռք սվաստիկայով» (Նոյեմբերյան, Ք.ա. X-IX դդ.) և այլ արժեքավոր առարկաներ, որոնք շրջել են աշխարհով մեկ Հայաստանի մշակույթը ներկայացնող միջազգային ցուցահանդեսներում:

Թանգարանի եռախորան դահլիճում ներկայացվել են «Հայկական գեղարվեստական գործվածք», «Քաղաքակրթությունների խաչմերուկ. աշխարհի և մենք» ցուցահանդեսները: Վերջին ցուցահանդեսում ներկայացվել են աշխարհի 25 պետությունների և ժողովուրդների մշակութային հավաքածուները՝ 274 թանգարանային առարկա, որոնք պահպանվում են ՀԱԹ-ի ֆոնդերում: Ուշագրավ են «Բնության ցլքերը», «Հայտնու հմայքը», «Գիրը և գրի մոգական դերը», «Շուշին՝ արհեստների, արվեստների քաղաք, գիտամշակութային կենտրոն», «Էրգրի մասունքները» խորագրերով ցուցահանդեսները:

«Փաստաթուղթ» հիմնական ֆոնդում պահպանվում են հայ ազգագրագետների, հնագետների և արվեստաբանների գիտական մշակումները, ուսումնասիրությունները և աշխատությունների աշխատանքային օրինակները. Մանյա Ղազարյանի «Հայկական գորգ. մատենագրություն» մենագրության աշխատանքային էջերը (1984 թ.) և «Փայտի գեղար-

վեստական փորագրությունը Հայաստանում» ուսումնասիրությունը, Վարդ Բոդյանի «Գոմասենյակները պատմական Հայաստանում» մենագրության աշխատանքային էջերը (1972 թ.), Լ. Բարսեղյանի «Հայ ժողովրդի ծագման և ձևավորման հարցերը պատմագրության մեջ», Վ. Աբրահամյանի «Ոսկերչական արվեստը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատությունները:

Հավաքածուում ընդգրկված են փաստաթղթեր 1980-ական թթ. մշակութային տարեգրության վերաբերյալ՝ թատրոնի և «Հայ համերգ»-ի մեծաքանակ ազդագրեր, գիտական նստաշրջանների ծրագրեր: Դրանցից են՝ Երևանի Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի, Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի, Հ. Ղափլանյանի անվան Երևանի դրամատիկական թատրոնի, Երևանի Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնի, Մոսկվայի Վլ. Մայակովսկու անվան թատրոնի և այլ թատրոնների ազդագրեր, ինչպես նաև գիտական, ուսումնական հաստատությունների մեծաթիվ ծրագրեր:

Հիմնական հավաքածուում իրենց ուրույն տեղն ունեն 160-ից ավելի հրավիրատուներ, որոնցից 45-ը՝ հարսանյաց, 109-ը՝ թատրոնի և այլ միջոցառումների: Հարսանյաց հրավիրատուները արժեքավոր տեղեկություն են պարունակում ազգատոհմի պատմության, մասնավորապես՝ ազգանունների վերաբերյալ: Օրինակ՝ տեղեկանում ենք, որ ամուսնացողները կրել են և՛ հայրական և՛ մայրական ազգանունները միաժամանակ՝ Աննա Հովակիմյան-Խոջաբեկյան: Ուշագրավ պատմություններ ունեն 1896 թ. Դոնի Ռոստովի, 1898 թ. Արմավիրի, 1903 թ. Բանանցի (Արցախ) հրավիրատուները, որոնք տեղեկացնում են եկեղեցու, պսակադրության ժամի, հարսնախնջույքի տեղի, հարսանիքի օրերի, հարսանյաց հրավերքի վարվելակարգի (էթիկետի) և այլ մանրամասների մասին: Հավաքածուի շարքը լրացնում են մեծարման երեկոների և այլ միջոցառումների, օրինակ՝ Սարդարապատի հերոսամարտի մասնակից, գնդապետ, հետագայում՝ թարգմանիչ-արձակագիր Վահան Տեր-Առաքելյանի (1883-1941) ծննդյան 100-ամյակի (Երևան, 1984 թ.), Ներսիսյան դպրոցի շրջանավարտների հավաքների (Երևան, 1958 թ.) և բազմաբովանդակ այլ հրավիրատուները:

Հավաքածուում ներառված են նաև բազմատեսակ վկայականներ՝ այսօր արդեն մասունքի արժեք ստացած. Երեմիա Ալխազյանցի ծննդյան (Թիֆլիս, 1888 թ.), ազգագրագետ, «Մասնա ազգագրություն» գրքի հեղինակ Վարդան Պետոյանի մկրտության, (Մուշ, 1913 թ.), քամանչահար Ս. Օգանեզաշվիլու ամուսնության (Թիֆլիս, 1913 թ.), կրթության (Քարվանսարա, 1883 թ.), 1908-1909 թթ. ուսումնական տարվա, լավ վարքի (Սիրիա, 1919 թ.), զինծառայության (Լոր Նախիջևան, 1887 թ.), բժշկական ծաղկապատվաստման (Թիֆլիս, 1900 թ.), Սարդարապատի հերոսամարտի մասնակից, եզդիական աշխարհագորային գնդի հրամանատար Ջհանգիր Խատիֆովի (1874-1943 թթ.) մահվան 1960թ., ա-

գաթ հայտնաբերելու համար երկրաբան Գ. Մուրադյանին տրված (Թիֆլիս, 1937 թ.) վկայականներ:

Ուշագրավ են անձի, նրա մասնագիտության մասին պատմող փաստաթղթերը՝ 34 այցետոմսեր, կուսակցական, արհմիութենական անդամության տոմսեր, անձնագրեր, սիրային և պատերազմից ուղարկված նամակներ, որոնցից ուշագրավ են բժիշկ Ալեքսիանոս Գալարեան Տեր Օհանյանի (Եկատերինոդար, XX դ. 2-րդ կես) և քամանչահար Ս. Օգանեզաշվիլու այցետոմսերը (Թիֆլիս, XIX դ. վերջ), «Եկատերինյան» իգական զիմնագիայի տեսուչ Հովակիմ Թիքիջի Խամբարովի անձնագիրը (Նոր Նախիջևան, 1900-1917 թթ.):

Պատմական ժամանակաշրջանի մասին կարևորագույն տեղեկություններ են պարունակում մեծագույն մարդկանց բնօրինակ նամակները, օրինակ՝ «Մուսա լեռան 40 օրը» գրքի հեղինակ Ֆրանց Վերֆելի ձեռագրով (գերմաներեն, Վիեննա, XX դ. սկիզբ) գրված նամակը: Կան նաև սիրային նամակներ: Նամակում չորացած վարդ է, և գրված է՝ «Հիշատակ Կարպ Չարդարովից՝ Մարիա Բավելային» (Նոր Նախիջևան, 1906թ.), մեկ այլ նամակ էլ Դավիթ Գաբրիելի Գյուրջյանից է՝ ուղղված Նոր Նախիջևանի բնակչուհի Սոնյային: Նամակում նշվում է Պյատիգորսկում կայանալիք հարսանիքի հրավերքի մասին (Պյատիգորսկ, 1906թ.):

Մի առանձին թղթապանակում պահվում են բնօրինակ արժեքավոր փաստաթղթեր՝ բնակություն հաստատելու (Աղղամ, 1861 թ.), քաղաքային կառուցապատման (Թիֆլիս, 1871 թ.), այգի վաճառելու (Քարվանսարա (Իջևան), 1903 թ.), հողի բաժանման (Քարվանսարա (Իջևան), 1907 թ.), ունեցվածքի (Մուսալեռ, 1922 թ.) մասին, ինչպես նաև մուրհակ (Վան, 1913 թ.) և Լազարյան ճեմարանի հատակագիծը (Մոսկվա, 1893-94 թթ.):

Ուշագրավ է Ալեքսանդրապոլի իգական Օլգինյան զիմնագիայի վարիչի կողմից տրված 513 գրությունը ուսուցչուհի Անահիտ Աղաբեկի Ամիրյանին (Ալեքսանդրապոլ, 1918 թ.): Օրիորդաց դպրոցը հիմնվել է 1905-ին ոռուսական կայսր Նիկոլայի դստեր՝ Օլգայի պատվին, կառուցման նախաձեռնողն է եղել Օլիմպիադա Բոգդանյանը: 521 գրությունով Ալեքսանդրապոլի Օլգինյան դպրոցի վարիչը խնդրով դիմում է Թիֆլիսի դիվանագիտական ներկայացուցչին, որ աշխատավարձին ավելացվող նպաստը ստանան (Ալեքսանդրապոլ, 1918 թ.), իսկ 82 գրությունով Գևորգյան հայկական իգական զիմնագիայի տեսուչը դիմել է Եկատերինյան իգական զիմնագիայի մանկավարժական խորհրդին (Նոր Նախիջևան, 1898 թ.):

Հավաքածուում ներառված են քարտեզներ, որոնք տպագրվել են տարբեր ժամանակներում և շատ կարևոր տեղեկատվություն են պարունակում Հայաստանի մասին: Հայաստան աշխարհը, որպես էթնոաշխարհագրական, բնաշխարհագրական, քաղաքաշխարհագրական միավոր, հայտնի է եղել քաղաքակիրթ աշխարհին դեռևս Ք.ա. առաջին հազարամյակից և քարտեզների վրա նշված է տարբեր՝ Նաիրի, Արմենիա, Էրմենիա, Մոմխեթի և այլ անուններով: Քարտեզները արտացոլում են Հայաստանի այս կամ այն

Ժամանակաշրջանի հետ կապված իրականությունը և իրադարձությունը՝ ևս մեկ անգամ փաստելով Հայաստանի կարևոր դերը՝ պատմա-քաղաքական տարբեր ժամանակաշրջաններում ու իրավիճակներում: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «Վանի ազգային ազատագրական մարտեր»-ի և «Կովկասի երկրամասը XIX դարի 1-ին կեսին» (1870թ.) քարտեզները: Երկրորդ քարտեզում Հայաստանը ներկայացված է որպես վարչական միավոր՝ Հայկական մարզ:

Թանգարանային որոշակի հավաքածուներ նվիրատվություններ են հայ մշակույթը սիրող նվիրյալների կողմից: Այդպիսիք են հունահայ Հակոբ Ջելալյանը, ով թանգարանին նվիրել է՝ 431 առարկա, Գերմանիայում բնակվող մարաշցի Երանուհի Գեթինգ-Հայդոսյանը՝ 334, սիրիահայ Հակոբ Մոմջյանը՝ շուրջ 500, ֆրանսահայ Գևորգ Բաբրջյանը՝ 2 և ուրիշներ:

Հայոց մշակույթի նվիրյալ Հակոբ Ջելալյանը Աթենքից 1984 թ. ՀԱՊԹ-ին նվիրաբերել է 204 մշակութային արժեք՝ ապագա սերունդներին ժառանգություն թողնելու միտմամբ: Հետագայում Ջելալյանի ընծայած հավաքածուն համալրվել է ևս 97 առարկայով, արդյունքում ստացվել է սրբազան 301 թիվը, որը կապված է հայերի՝ քրիստոնեության ընդունման թվի հետ: Այդ բոլոր իրերը նա հավաքել է հայաբնակ 14 երկրներից: Ազգային մշակույթի գորացմանը հավատարիմ նվիրյալը հավատում է ազգային վերածննդին: Տարիներ անց՝ 2007 թ., Հ. Ջելալյանի տիկինը՝ Հայկանուշը, նվիրել է օտար վարպետների XVI-XX դդ. ընդգրկող 130 փորագրանկար գործեր<sup>7</sup>, որոնք զետեղվել են «Փաստաթուղթ» ֆոնդում: Վավերագրական արժեք ունեցող փորագրանկարների թեման Հայաստանն է, հայոց պատմությունը, կրոնը, տարազը, բնակավայրերը և այլն:

Պատմաքաղաքական մեծ արժեք ունեցող փաստաթղթերը հերթական անգամ փաստում են Հայաստանի կարևոր դերն ու տեղն աշխարհում՝ պատմական տարբեր դարաշրջաններում:

Հուսանք, որ ներկայացված մեծարժեք հավաքածուն անտարբեր չի թողնի տվյալ ժամանակաշրջանը ուսումնասիրողներին, որոնք գիտականորեն կարժևորեն այդ փաստաթղթերը, նոր շնչով, նոր տեսակետով կլուսաբանեն ուսումնասիրվող ժամանակաշրջանի իրադարձությունները, քանզի կա պարզ ու հստակ մի օրենք. փաստաթուղթը տվյալ ժամանակաշրջանի պատմության գլխավոր վկան է:

<sup>7</sup> Յակոբ Ճելալյանի նուիրատվությունների կատալոգ, Երևան, 2008, էջ 5:



## ГАЛЯ ГРИШАЕВНА ДАВИДОВА

Старший научный сотрудник Музея Этнографии армян  
эл. почта - Galya.davidova.60@gmail.com

### КОЛЛЕКЦИЯ ФОНДА «ДОКУМЕНТ» МУЗЕЯ ЭТНОГРАФИИ АРМЯН

#### Резюме

Коллекция фонда «Документ» музея этнографии армян результат сороколетней кропотливой работы научного персонала музея. Благодаря научному персоналу были спасены от потери реликвии, которые сегодня являются свидетелями исторических событий.

Цель данного доклада - представить широкой публике богатые и исторически ценные коллекции фонда «Документ», каждая из которых имеет свою легенду - историю. Это хранилище, которое станет началом новых достижений для научного сообщества: будет началом новых открытий. Эти ценные, неизданные документы заполнят белые страницы нашей истории.

Основной фонд насчитывает 46 наименований документов, которые классифицируются по темам. Ценные коллекции фонда «Документ» имеют исключительное значение в деле сохранения армянской культуры. Каждый документ коллекции должен быть изучен и опубликован.

Одним из сокровищ фонда «Документ» является первая армянская напечатанная Библия с гравированными изображениями. Библия была опубликована в Амстердаме в 1666 году. Она выставлена в основной экспозиции музея. По своей значимости Библия относится к классу редких музейных предметов.

В фонде «Документ» хранятся предметы, приобретенные во время экспедиций, организованных музеем совместно с кафедрой археологии и этнографии Ереванского государственного университета (руководитель-этнограф, кандидат исторических наук, доцент Юрий Мкртумян) и Институтом археологии и этнографии НАН РА. Научные экспедиции были организованы в Армении, в Арцахе, в Джавахке и в населенных армянами районах России. В приобретении музейных предметов и организации научных экспедиций внёс свой вклад Юрий Мкртумян, который научил нас основам и азбуке этнографии, секретам и тонкостям работы этнографа. Документы, представляющие большую историческую и политическую ценность, в очередной раз доказывают важную роль и место Армении в мире в разные исторические эпохи.

**Ключевые слова:** документ, фонд, коллекция, музей, материал, архив, выставка.



---



GALYA GRISHA DAVIDOVA

Senior researcher of the Museum of Armenian Ethnography  
e-mail: Galya.davidova.60@gmail.com

“DOCUMENT” COLLECTION OF THE  
MUSEUM OF ARMENIAN ETHNOGRAPHY

Summary

Items of the “Document” storage of the Museum of Armenian Ethnography were collected by the museum scientific staff within forty years. The collection is the result of the staff’s energetic and hard work. Lots of relics, which are nowadays vivid facts of some historical events, were saved due to the scientific workers.

The article aims to show the collection of the “Document” storage to the public. They are of rich historical and significant value, each of which has a unique legend-story. It’s a storehouse of achievements, which is going to be a place of revelations for the researchers. These valuable, unpublished documents will fill up the white pages of our history.

The main storage houses 46 types of documents, which are classified according to their themes. These valuable collections are of exceptional significance for the preservation of Armenian culture. We need to study and make each document popular.

One of the treasures of the “Document” storage is the first Armenian print “Bible”. It was printed in 1666 in Amsterdam, and it’s in the permanent exhibition of the museum. The “Bible” is one of the museum unique objects.

The “Document” storage houses some items, which were collected during joint expeditions by the Yerevan State University, Department of Archeology and Ethnography (headed by ethnographer, Ph. D, associate professor Yuri Mkrtumyan) and the Institute of Archeology and Ethnography, NAS, RA. The expeditions were held by the museum and they were held in Armenia, Artsakh, Javakhk and in the regions of Russia settled by Armenians. Yuri Mkrtumyan has his own contribution in collecting the museum items. He is the one who taught us the principles of ethnography, the secrets of the ethnographer’s work.

The documents of historical and political value prove once again that Armenia had its own important role in the world in different periods of time.

**Key words:** document, storage, collection, museum, item, archive, exhibition.



## ԱՐՄԻՆԵ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևան քաղաքի պատմության թանգարանի  
տնօրեն, պատմ. գիտ. թեկնածու  
Էլ. փոստ-yhmuseum@gmail.com

### ԵՐԵՎԱՆԻ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԸ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ- XX ԴԱՐԻ ՍՎԻՋԲ)

Բանալի բառեր. Քաղաքային դուամ, գետ Գետառ, թանգարանի լուսանկարներ, ջրա-օդային ներդաշնակություն:

Բնական աղետները՝ երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, մարդկությանն ուղեկցել են նրա ողջ պատմության ընթացքում: Դրանցից տուժել ու ամայացել են մեծ ու փոքր քաղաքներ, եղել են մարդկային բազմաթիվ զոհեր: Այս առումով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը, որն անցել է 1769 թ. ավերիչ երկրաշարժի ու տարբեր տարիներին տեղի ունեցած հեղեղումների միջով: Նայելով վիճակագրությունը, տեսնում ենք, որ պակաս աղետալի չեն եղել նաև մորելիսի հարձակումները, որոնց հետևել են սովը և մարդկային կորուստները: XVII-XVIII դդ. մորելիսը Երևանում հայտնվել է երեք անգամ՝ 1642, 1692 և 1713 թվականներին, որոնցից առանձնապես աղետալի է եղել վերջինը, որն ավարտվել է բազմաթիվ մարդկային զոհերով<sup>1</sup>:

Ներկա հաղորդման մեջ մենք փորձել ենք ներկայացնել XIX-XX դդ. Երևանում աղետներից առավել հաճախ տեղի ունեցողների՝ հեղեղումների ընդհանուր պատկերը, որոնք իրենց կնիքն են դրել ոչ միայն քաղաքի ընդհանուր տեսքի, այլև բնակչության ու նրա կենցաղի վրա: Նշված ժամանակահատվածում Երևանը մշտապես ենթակա էր Գետառի (Կրիս Բուլախ) հեղեղումներին:

XIX դ. Երևանին առանձնապես խոշոր վնաս են հասցրել երկու խոշոր հեղեղները, որոնք առաջացել են ուժեղ անձրևի ու կարկուտի հետևանքով: Դրանցից մեկը գրանցվել է 1860թ. հունիսի 19-ին<sup>2</sup>, երբ վարարած Գետառն, իր հետ բերելով հսկայական քարեր ու ցեխ, ավերում է շատ տներ, ծածկում այգիներ ու բանջարանոցներ: Նահանգական վարչության ամենամեղմ հաշվարկներով վնասի չափը հասնում է 14 000 ռուբլու<sup>3</sup>: Այդ ժամանակ ամենամեծ վնասը կրում է Երկաթ աղբյուր (Դամիր Բուլաղ) թաղը: Երկրորդ մեծ հեղեղումը եղել է 1873 թ. օգոստոսի 14-ին, որն ավերումներից բացի, պատճառել է նաև մարդկային զոհեր<sup>4</sup>: Քաղաքի բնակչությունը հեղեղների դեմն առնելու համար փորձել է

<sup>1</sup> Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1500-1800 թթ., Երևան, 1971, էջ 273-274:

<sup>2</sup> Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1801-1879թթ., Երևան, 1959, էջ 576-577:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 577:

<sup>4</sup> Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1801-1879 թթ., էջ 577:

Գետառի ափերին որոշակի կառուցապատումներ անել, որոնք սակայն օգուտ չեն տվել: Իսկ Քաղաքային դուման ու վարչությունը խոստումներից զատ ոչինչ չեն ձեռնարկել:

1873 թ. օգոստոսի 14-ի հեղեղման մասին հիշատակվում է նաև «Մշակ»-ում, ըստ որի սաստիկ կարկուտի հետևանքով Գետառը դուրս է եկել ափերից՝ հեղեղելով ու քանդելով շատ տներ, ավերելով այգիներ, խեղդվել է 20 մարդ: Հեղեղումից փրկվել են միայն քաղաքի բարձրադիր մասերը՝ Կոնդն ու Նորքը<sup>5</sup>: 1876 թ. թիվ 2-ում նշվում է այդ տարի տեղի ունեցած հեղեղումների մասին, որոնցից տուժել է Պողոս-Պետրոս եկեղեցին:

Քաղաքի հերթական հեղեղումների մասին տվյալները վերաբերում են 1903 և 1908 թվականներին, որոնցից վերջինը Գետառի վարարման և ձնհալի պատճառով մարտի վերջերին զգալի վնաս է հասցրել<sup>6</sup>: 1903 թ. հեղեղի դեմ պայքարելու համար Երևանի նահանգապետն առաջարկում է հրավիրել Քաղաքային Դումայի արտահերթ նիստ, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն քաղաքացիների գույքն ու կյանքը նման արհավիրքներից պաշտպանելու համար<sup>7</sup>: Հաջորդ հեղեղումը եղել է 1908 թ. մարտի 14-ին, երբ ձնհալի պատճառով Գետառը վարարելով ողողում է մեծ քանակությամբ տներ՝ հասնելով Նահանգական փողոց (այժմ՝ Հանրապետության): 1908 թ. սելավից հետո բնակիչները համապատասխան փաստաթղթով դիմում են քաղաքապետին՝ առաջարկելով Գետառի հունը բերել նախկին տեսքի, կառուցել ափամերձ ամրություններ, լայնացնել այն, որովհետև քաղաքի որոշ բնակիչների կողմից անօրինական այգիներ ու տներ կառուցելու պատճառով նեղացել էր գետի հունը: Բացի այդ, առաջարկվում է նաև խորացնել այն, որովհետև տարբեր տարիների սելավներից հետո այն լցվել էր տիղմով ու ավազով<sup>8</sup>: Սյուտեղ հետաքրքիր է նշել, որ քաղաքի ինժեներ-հիդրավիկը քաղաքապետին առաջարկում է ձնհալի շրջանում վարձավճարով ընդունել հսկիչ և ձիավոր պահակ, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերջիններս արագ կապ և տեղեկատվություն ապահովեն:

1908 թ. հեղեղումների վնասը ճշտելու համար Քաղաքային վարչության 2-րդ կարգի գործադիր չինովնիկը ուսումնասիրում է Գետառի երկու ափերի վիճակը, արձանագրելով, որ ավերվել են 7 քաղաքացու այգիները, և վթարային վիճակում է Նորք (Չոլմաքչի) տանող կամուրջը: Վերոհիշյալ պաշտոնատար անձը հեղեղման հիմնական պատճառը համարում է ափամերձ հատվածների հաշվին այգիների ընդարձակումը, ինչի հետևանքով նեղացել է գետի հունը, գտնելով, որ տուժած քաղաքացիներն իրենք են պարտավոր վերականգնելու գետի նախկին հունը, իսկ դուման պետք է արագ միջոցներ ձեռնարկի կամուրջը վերանորոգելու համար, այլապես հաջորդ սելավի ժամանակ այն ամբողջովին կքանդվի:

<sup>5</sup> «Մշակ», 1873թ., թիվ 32:

<sup>6</sup> Հակոբյան Թ., Երևանի պատմությունը 1801-1879 թթ., էջ 374:

<sup>7</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 107, ցուցակ 1, գործ 1502:

<sup>8</sup> Նույն տեղում:

Հեղեղման վերաբերյալ մյուս հիշատակությունը վերաբերում է 1916թ. մայիսի 19-21-ին<sup>9</sup>, որտեղ Երևանի քաղաքային դումայի 1-ին կարգի գործադիր չինովնիկը հաղորդում է Գետառի երեք կամուրջների քանդվելու և Նահանգական, Տեր-Ղուկասովսկի, Մտարո-Կազարմենայա, Թարխանովսկայա փողոցների և Դեղատան փողոցի մի մասի ոչ պիտանի դառնալու մասին:

Չովմաքչի թաղի կամրջի քանդվելու մասին հաղորդում է նաև քաղաքային դումայի ձայնավոր (պատգամավոր) Տեր-Ավետիսովը, նշելով, որ բնակիչներն արդեն մեկ ամիս է Աստվածածնի փողոցի հատվածում Գետառն անցնելու համար քարից-քար են թռչում<sup>10</sup>: Հետագայում նման հեղեղումները կանխելու համար քաղաքագլխին առաջարկվում է ստեղծել հանձնաժողով և դրա մեջ ընդգրկել նահանգական ճարտարապետին, 2-րդ կարգի ինժեներ-հիդրավիկին, քաղաքային տեխնիկին և Երևանի ոստիկանապետին:

Քաղաքային դումային ուղղված իր մեկ այլ գրությամբ ձայնավոր Ա. Տեր-Ավետիսովը 1916 թ. մայիսի 19-ի ջրհեղեղի հետևանքով Չովմաքչի թաղի կամրջի քանդվելու վերաբերյալ կրկին անհանգստություն է հայտնում, ասելով, որ Երևանի վարչությանը թեև խորթ է արագ արձագանքելու աշխատառճը, սակայն ինքն իր պարտքն է համարում ամեն օր ահազանգել կամրջի վերանորոգման համար, որովհետև մի ամբողջ թաղ կտրված է քաղաքից, բացի այդ, բնակիչները չեն կարողանում իրենց այգիներից ու բանջարանոցներից բերքը արաբայով կամ ձիով տեղափոխել իրենց տները<sup>11</sup>: Նույն անձը առանձնակի համառությամբ գրություն-գրության ետևից է ուղարկում քաղաքային վարչությանը՝ հետաքրքիր ձևով անդրադառնալով քաղաքացիների բնավորությանը: Այսպես. «Ամեն տարի քաղաքում օգոստոսի 14-ին տոնվում է Մարիամ Աստվածածնի տոնը, և այդ առիթով հավաքվում է քաղաքի բնակչությունը: Բացառություն չի լինելու նաև 1916 թվականը: Այդ առիթով ես դիմել եմ վարչությանը՝ վերականգնելու կամուրջը և ճանապարհը: Կամուրջն ուներ շատ ամուր գերաններ, որոնք իմ խնդրանքով նվիրել էր Լիպարիտ Սրապյանցը: Ջրհեղեղը թշուրտարել է դրանք, որոնք հայտնվել են մի քաղաքացու այգում: Վերջինս դա համարում է երկնքից ընկած նվեր և չի ուզում վերադարձնել: Վարչությունը նրանից պետք է վերցնի գերանները և շտապ վերանորոգի կամուրջը»<sup>12</sup>: Վերոհիշյալ փաստաթղթում Տեր-Ավետիսովը նաև նշում է, որ «օգոստոսի 12-ին կամուրջը պետք է պատրաստ լինի, որովհետև քաղաքացիները տոնին մասնակցելու համար պետք է անցնեն Գետառը: Տղամարդիկ, թռչելով քարերի վրայով, մի կերպ կարող են անցնել, ինչը չի կարելի ասել կանանց մասին, որովհետև վերջին մողայի նրանց զգեստները հարմար չեն դրա համար» (խոսքը Չովմաքչի կամրջի մասին է):

1917 թ. մի փաստաթղթով, որն ունի *հրատապ* մակագրությունը, Երևանի քաղաքագլխին հերթական անգամ ահազանգվում է Գետառի հունը շտապ քարտեզագրելու և ա-

<sup>9</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 107, ցուցակ 1, գործ 1805:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում:

փերին պաշտպանական ամրություններ կառուցելու հրատապության մասին, քանի որ հեղեղումների հնարավորությունը շարունակում է լինել օրվա խնդիր: Ինչպես երևում է 1916 թ. մայիսի 24, 25, 30, 31 և հունիսի 1-ի ուսումնասիրությունների հիման վրա կազմված արձանագրությունից, որն ստորագրել են նահանգային ճարտարապետ-ինժեներն ու ինժեներ-հիդրավիկը և որտեղ արդեն մանրամասն առաջարկություններ կան Գետառնի ավերին ամրացնելու մասին, ոչինչ չի ձեռնարկվել, և 1917 թ., մեկ տարի անց, կրկին նույն պահանջով գրություն է ուղարկվում քաղաքագլխին: Դումայի ձայնավոր Ա. Տեր-Ավետիսովը 1916 թ. հուլիսի 25-ին իր կազմած դիմումի մեջ դարձյալ հստակ նշում է, որ մայիսի 19-ի ահել ջրհեղեղից հետո, որը մեծ վնասներ է հասցրել բնակչությանը՝ կրկնվելով նաև մայիսի 24-ին, վարչության հերթական նիստում այդ հարցն անգամ օրակարգում չի եղել:

Ինչպես վկայում են հիշատակումները, քաղաքն ավերող և բնակիչներին մեծ վնաս հասցնող հեղեղները, որոնց վտանգը մշտապես կար, ձնհալի ու հորդառատ անձրևների պատճառով, քննարկումներից այն կողմ չեն անցնում և որևէ գործնական լուծում չեն ստանում մի կողմից քաղաքային իշխանությունների անգործության, մյուս կողմից՝ մի շարք քաղաքացիների կողմից Գետառնի ավերին ասպորինի տներ ու այգիներ կառուցելու հանգամանքով պայմանավորված:

Քաղաքացիների և քաղաքային վարչության պահվածքի վերաբերյալ շատ հետաքրքիր նյութ է տպագրված Երևանյան հայտարարություններ թերթիկում. «Ձարմանալի անտարբեր մարդիկ ենք մենք. անտարբեր թե հասարակական գործերում, անտարբեր թե մեր անձնական գործերում... Երբ դժբախտությունը գալիս կանգնում ա մեր գլխին, այն ժամանակ ենք միայն սթափվում, մեր ծնկներին ու գլխներին խփում, զանազան մարդկանց կամ պաշտոնեաների մեղադրում, մեկին տասը վնասի մեջ ընկնում»<sup>13</sup>: Այստեղ խոսվում է Աբուհայաթ առվի հեղեղման մասին, որը տեղ-տեղ քանդվելով մեծ վնասներ է հասցրել քաղաքին ու այգիներին: Այն վերանորոգելու համար անհրաժեշտ է 4500 ռուբլի և եթե առուն նորից «պատովի», վնասը կհասնի տասնյակ հազարների: Նյութում խոսվում է նաև քաղաքային վարչության անգործության մասին, թեև վարչությունը օգտվում է առվի ռոտգումից 7/30 չափով:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ նշված ժամանակաշրջանում պարբերաբար տեղի էին ունենում Գետառնի հեղեղումներ՝ մեծ վնաս հասցնելով քաղաքին ու բնակչությանը: Դրանք հիմնականում լինում էին ձնհալի և առատ անձրևների շրջանում: Պարադոքսն այն է, որ քաղաքային իշխանությունները և բնակիչները բողոքներից բացի, գրեթե որևէ գործնական քայլ չէին ձեռնարկում մշտապես այդ աղետներից պաշտպանվելու համար:

<sup>13</sup> Эриванские объявления, 1910, № 39:

Ներկա հաղորդման մեջ համապատասխան նյութերի առկայության հիման վրա մենք անդրադարձել ենք այն հեղեղումներին, որոնք իրենց մասշտաբայնությամբ և վնասի չափով արձանագրվել են քաղաքի պատմության էջերում:

XX դարի առաջին կեսի ամենավտանգավոր հեղեղը տեղի է ունեցել 1946 թ. մայիսի 26-ին, որի մասին վկայում են Երևան քաղաքի պատմության թանգարանում պահվող լուսանկարները: Այն մեծ ավերածություններ ու մարդկային զոհեր է պատճառել: Այս մասին վկայում է նաև ականատես Ռիմա Թորգոմի Մարտիրոսյանը, որի հետ անձնական գրույցի ընթացքում վերջինս ներկայացրեց այդ պատուհասը, զարմանալիորեն հիշելով հեղեղի ճշգրիտ օրն ու ժամը: Ըստ ականատեսի, մայիսի 26 -ին երեկոյան ժամը 9-10-ից հորդառատ անձրև է սկսվում, «կարծես ջուրը թափվում էր դուլյերով»: Շատ արագ ջուրն սկսում է լցվել տները: Ականատեսն ու նրա փոքրիկ քույրն ու եղբայրը սկսում են բարձրաձայն լաց լինել, նրանց ձայնից վրա են հասնում մոտակա ուսումնարանի տղաները և երեխաներին փաթաթելով վերմակների մեջ մի կերպ հանում են տանից (տունը գտնվում էր ներկայիս կինոտան մոտ): Ականատեսն իր պատմածին հավելում է նաև իր մոր տեսածը, ով հեղեղի ժամանակ Նալբանդյան փողոցով վերադառնում էր տուն: Վերջինս նկարագրում է, որ Նալբանդյան փողոցով գետ է հոսում, իր հետ բերելով մարդկանց իրերը, մեքենաներ: Ջուրը ամենաշատը հոսել է նաև Ալավերդյան փողոցով՝ հեղեղելով շրջակա տները: Ռիմա Մարտիրոսյանի մայրը պատմում է նաև հոգեբուժարանի հիվանդներին փրկելու մասին, որոնցից, սակայն, մեկ կին խեղդվում է: Բանասացն այնուհետև հիշում է, որ կառավարությունից հանձնաժողով է գալիս, ժողովրդին հագուստներ են բաժանում և ճշտում վնասի չափը: Տները մի քանի ամսից նոր չորանում են, որովհետև հիմնականում կավացեխից էին սարքված, և դրանցում ապրելն անվտանգ չէր, ու բոլորը վթարային էին դարձել: Ականատեսի վերոհիշյալ պատմածը լիովին հաստատում են թանգարանում պահպանվող լուսանկարները:

Ավարտելով Երևանի հեղեղումների մասին շարադրանքը՝ պետք է ասել, որ 1946 թ. այդ հեղեղից հետո մինչ օրս նման մասշտաբայնությամբ հեղեղներ կարծես թե այլևս չեն եղել, արխիվային փաստաթղթերում չկա որևէ հիշատակում: Այստեղ թերևս կարելի է նշել 1952 թ. սելավը, որը ողողել էր Երևան քաղաքի պատմության թանգարանի ցուցարահներն ու աշխատասենյակները, որն այն ժամանակ տեղակայված էր պարսկական Կապույտ մզկիթում, և աշխատակիցները վկայում են, որ ցուցարահներում ու աշխատասենյակներում 50 սմ և ավելի ջուր էր լցվել:

XX դարի 80-ական թթ. Գետառի հեղեղումները կանխելու համար գետի հունը զրեթե ամբողջությամբ ծածկվեց, ինչը թեև կանխեց գետի վարարումները, սակայն էկոլոգիական տեսանկյունից խախտեց մայրաքաղաքի ջրա-օդային ներդաշնակությունը, որի հետևանքը վերջին տարիներին ջերամաստիճանի անընդհատ բարձրացումն է:

АРМИНЕ ХОРЕНОВНА САРГСЯН

Директор Музея истории города Еревана,  
кандидат исторических наук  
эл. почта- yhmuseum@gmail.com

НАВОДНЕНИЯ В ЕРЕВАНЕ  
(КОНЕЦ XIX В. - НАЧАЛО XX В.)

Резюме

В настоящей статье сделана попытка представить общую картину, связанную с наводнениями в Ереване конца XIX- начала XX в., оставившими свой отпечаток на общий вид, быт и население города. В указанный период, река Гетар время от времени выходила из берегов и наводняла город, причиняя не только материальный ущерб, но и становясь причиной гибели людей. Одно из сильных наводнений произошло в 1860 г., второе, ставшее причиной гибели множества людей, в 1873 г. Об этом писали в печати («Мшак») и в протоколах заседаний Городской Думы. С разрушительными наводнениями, которые имели место также в 1903, 1908, 1916 и 1917 гг., разными способами боролись и Городская Дума и население. Самое страшное наводнение XX в. произошло 26 мая, 1946 г., о чем свидетельствуют фотографии, хранящиеся в Музее истории Еревана. В 80-ые гг. XX в. с целью предотвращения новых наводнений, русло реки Гетар было почти полностью перекрыто. Хотя эти мероприятия и спасли город от наводнений, однако нарушили водно-воздушный баланс, что в последние годы стало причиной постоянного повышения температуры воздуха.

Ключевые слова: Городская Дума, река Гетар, фотографии музея, водно-воздушный баланс.





---



ARMINE KHOREN SARGSYAN

Director of the History museum of Yerevan, Ph.D.

yhmuseum@gmail.com

YEREVAN FLOODS  
(THE END OF THE XIX CENTURY -  
THE BEGINNING OF THE XX CENTURY)

Summary

In the following report an attempt is made to present the overall picture of the floods taking place in Yerevan in XIX -XX centuries, which put its stamp on the appearance, population and household of the city. During this period Getar from time to time overflowed, causing human casualties and destruction to the city. One of the largest floods occurred in 1860. The second largest flood that caused human casualties was in 1873. The disasters were mentioned at the time press ("Mshak") and in the minutes of the sessions of the City Duma. There were devastating floods in 1903, 1908, 1916 and 1917, against which the City Duma and population fought by various means. The most dangerous flood of the XX century occurred on May 26 in 1946, which is evidenced by the photos kept in the Yerevan History Museum. To prevent floods in the 1980s of the XX century, the riverbed was almost completely covered, which saved the city from new floods but disrupted the capital's water and air quality, which could be attributed to the constant rise in air temperature in recent years.

**Key words:** City Duma, river Getar, museum's photos, water and air quality.



## ԷՄԹԵՐ ՀԱՅԿԻ ԽԵՄՉՑԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող  
բանասիրական գիտությունների թեկնածու  
Էլ. փոստ - ekhemchyan@yandex.ru

### ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱԲԱՍՅԱՆ ՍՅՈՒԺԵՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

Բանալի բառեր. սյուժե, ավանդույթ, մոտիվ, դեպք, գրույց, ականատես, կրոն, հանդուրժողականություն, աշխարհաստեսություն:

Շահաբասյան պատմամենին առաջացել և ձևավորվել են պատմական այն ժամանակահատվածում, երբ Շահ Աբաս Մեծը ծավալում էր իր ռազմաքաղաքական ու տնտեսական գործունեությունը: Պատմականորեն շահաբասյան սյուժեները կարելի է բաժանել երկու խմբի. ա) իրական պատմական դեպքերի հիման վրա առաջացած պատմամենի և բ) պատմական Շահ Աբասի մուտքը վիպական սյուժեներ և ձևավորումը որպես վիպական հերոս: Երկրորդ խմբի սյուժեներում Շահ Աբասը տիպիկ բանահյուսական հերոս է՝ վիպական հերոսին բնորոշ գործելակերպով, թեև նրա պատմական նախատիպի բնավորության և պահվածքի որոշ գծեր մտել են պատմամենի համատեքստ և որոշակի գունավորում ու մթնոլորտ ստեղծել վիպական պատումի կառուցվածքում:

Շահ Աբասի գործունեության հետ կապված տարբեր դեպքեր և միջադեպեր ժամանակին լայն արձագանք են գտել և նախապես իրապատում գրույցների տեսքով շրջանառվել նրա տերության սահմաններում: Շահ Աբասի գործունեությունը բացահայտող պատմությունները շարադրվել են նրա կենսագիրների՝ կողմից՝ բնականաբար նրան վերագրելով բազմաթիվ դրական հատկանիշներ: XVII դարի հայ պատմագիրներն ու ժամանակագիրները նույնպես որպես ականատեսներ, տեսնելով «զաւերս Հայաստան աշխարհին», Շահ Աբասի իրագործած բռնագաղթը, ունեզրկումն ու կոտորածները, մարդկային ու բարոյական նորմերի անկումը, ժողովրդի հուսահատական ու թշվառ վիճակը, յուրաքանչյուրն իր կարողության սահմաններում շարադրել է այդ դժնդակ ժամանակահատվածի պատմությունը:

Շահաբասյան ժամանակաշրջանի գլխավոր վավերագրողը՝ Առաքել Դավրիժեցին, իր պատմությունն այսպես է սկսում. «Պատմություն այն տառապանքների ու անցքերի, որ պատահեցին հայոց աշխարհին վերջին ժամանակներս Շահ Աբաս կոչված թագավորի և նրա ազգի՝ պարսիկների կողմից»<sup>1</sup>: Առաքել Դավրիժեցին, շրջագայելով ու ի մի բերելով իր և տարբեր ականատեսների գլխով անցած դեպքերն ու իրադարձությունները,

<sup>1</sup> *Հովհաննիսյան Ա.*, Հայաստանի քաղաքական վիճակը սեֆյան Իրանի և օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ. - Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 98-100:

<sup>2</sup> *Առաքել Դավրիժեցի*, Պատմություն, Երևան, 1988, էջ 17:

շարադրել է XVII դարի պատմությունը, որը կարևոր աղբյուր է հայ ժողովրդի կյանքի բուրն կողմերը ներկայացնող այդ ժամանակահատվածի մասին: Բանագիտության տեսանկյունից նույնպես Առաքել Դավրիժեցու երկն անգնահատելի սկզբնաղբյուր է: Այս հանգամանքը ժամանակին նկատել է Մանուկ Աբեղյանը. «...Առաքելի պատմությունը կարելի է համարել զանազան գրույցների անմշակ ժողովածու, որոնք ծերերի բերանին շատ անգամ պատմվել են, և ինքը գուցե ուրիշներին, և պատմվելով արդեն մի որոշ ձև ու կերպարանք են ստացել»<sup>3</sup>: Անշուշտ Առաքել Դավրիժեցին այդ իրապատում գրույցները գտել է ավելորդաբանություններից և թողել է այն, ինչը պատմական իրողություն է և ինչը կարևորել է իր պատմության համար:

XVII դարի պատմագիրների մեջ Ջաքարիա Սարկավազը (Քանաքեռցի), որպես շահաբայան պատումների շարադրող, առանձնանում է իր ինքնատիպությամբ: Իր առջև նպատակ դնելով պատմություն շարադրել՝ նա թռուցիկ թվարկում է հայ-պարսկական փոխհարաբերությունների և հայոց արքայատոհմերի պատմությունը՝ այն հասցնելով մինչև Շահ Աբաս: Նրա պատմությունը կարծես Առաքել Դավրիժեցու պատմության օրգանական շարունակությունն է որպես ժողովրդական գրույցների ժողովածու: Նա նյութերին ընտրության մեջ խտրություն չի դրել, գրառել է այն ամենը, ինչ լսել է և ինքն էլ կասկածի տակ է դրել դրանց հավաստիությունը. «Ձտրա ամենայն գործ գրեալ է Առաքել պատմագիրն՝ անպակաս զամենայն: Ո՛վ որ կամիցի գիտել զստոյգն, ընթեռնուցու զայն, և ի նմանէ ուսուցի: Այլ ես գոր ինչ լուեալ եմ վասն այս Շահ Աբասիս, թե՛ սուտ և թե՛ առասպել, և թե՛ ճշմարիտ և իրաւ, զամենն գրեմ, թե պարսաւանաք և նախատինք լինի(ս) և թե՛ գոհութիւնք և գովութիւնք լիցի(ս), նոցա լիցի՝ որոց պատմեցին մեզ: Քանզի նոքա՝ որք ականջաւորք էին վեր ի վերոյ ասացին, սակայն մեք գոր լուաք, զնոյն պատմեսցաք՝ թե սուտն և թե՛ իրան»<sup>4</sup>:

Մ. Աբեղյանը, ճշգրտելով ու գնահատելով Ջաքարիա Սարկավազի տեղը և դերը հայ պատմագրության մեջ, նկատում է, որ նրա երկը թեև պատմական հիմք ունի, սակայն կազմված է ժողովրդական գրույցներից ու երգերից, և նրա տեղը ոչ թե պատմագիրների շարքում է, այլ ժողովրդական բանահյուսություն հավաքողների շարքում. «...Ջաքարիան, այս միամիտ մարդը, անգիտակցորեն, իր պարզամտության պատճառով, հանդիսացել է հայոց ֆոլկլորի-ժողովրդագիտության առաջին հավաքողը Խորենացուց հետո, բայց և Խորենացուց ավելի հարուստ ու հարազատ կերպով, քանի որ նա, հավատացած լինելով, թե պատմություն է տալիս, մեզ ժողովրդական անգիր բանահյուսության օրինակներ է տալիս...»<sup>5</sup>:

Այս առումով Ջաքարիայի պատմական հիմք ունեցող «Պատմագրութիւնը» հրաշալի նյութ է հետագա դարերում բանավոր ճանապարհով ավանդված բանահյուսական

<sup>3</sup> Աբեղյան Մ., Երկեր, Դ հատոր, Երևան, 1970, էջ 524:

<sup>4</sup> Ջաքարեայ Սարկաւազ, Պատմագրութիւն, հ. I, Էջմիածին, 1870, էջ 15:

<sup>5</sup> Աբեղյան Մ., նշվ. աշխ., էջ 527:

նյութերին համադրելու և գնահատելու համար այն ճանապարհը, որ անցնում է իրապատում դեպքը ժողովրդական հասկացության սահմաններում: Այն բանահյուսաստեղծ տարրերի ազդեցության տակ վերածվում է հեքիաթի, գրույցի, ավանդության և դադարում ընկալվել որպես պատմական իրողություն: Երբեմն պատմական դեպքն այնպես է սքողված պատումների մանվածապատ ցանցում, որ այն ընկալելու համար պետք է լինում բանագիտական լուրջ քննության ենթարկել բանահյուսական նյութը: Շահաբասյան սյուժեների առումով բանագիտական վերլուծություններն ավելի դյուրին են, որովհետև ոչ միայն պատմական իրողությունները ժամանակագրորեն ավելի թարմ են, այլև ձեռքի տակ են պատմագիրների սկզբնաղբյուրները, որոնք նպաստում են վերականգնելու պատմական այն հիմքը, որի վրա կառուցվել է քննության ենթարկվող պատումը:

Շահ Աբասը պարսիկ պատմագիրների կողմից ներկայացվել է որպես իմաստուն և աշխարհաշէն, իսկ Ադամ Օլեարուսը նրան բնորոշել է այսպես. «Նա իմաստուն էր և քաջ, նա բարձրացրեց Պարսկաստանի փառքը իր տարած հաղթություններովն ու ընդարձակեց տերության սահմանները»<sup>6</sup>: Շահ Աբասի անձն ու պետական-քաղաքական գործունեությունը գնահատվել է որպես քաղաքական անհրաժեշտություն. «...լու բռնապետական քմահաճույք չէր, այլ բռնապետական ըմբռնումով, անհրաժեշտ միջոց՝ մեծ քաղաքական և շինարարական նպատակների համար»<sup>7</sup>:

Իր գործունեության շնորհիվ՝ Շահ Աբասը տակավին իր կենդանության օրոք իդեալականացվել էր և դարձել ժողովրդական գրույցների հերոս: Հայ բանահյուսական ժառանգության մեջ պահպանված շահաբասյան ստվարածավալ սյուժեների մի զգալի մասում առկա են պատմական-իրական դեպքերի հիման վրա կառուցված պատումներ, որոնք ներկայացնում են հետևյալ պատմավիպական մոտիվները.

- ա) Շահ Աբասի ծպտված շրջագայությունը կամ աշխարհատեսությունը<sup>8</sup>,
- բ) կրոնավորության նպատակով հայերին սիրաշահելն ու հովանավորելը,
- գ) քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողականությունն ու կրոնանպաստ վարքագիծը,
- դ) իմաստուն խոսքին ունկնդիր լինելու և հետևություն անելու հատկությունը,
- ե) ժողովրդի ցածր խավերից պետական պաշտոնյա ընտրելը,
- զ) միայն իրեն հատուկ անգութ հարկահանությունը և այլն:

Պատմական հիմք ունեցող բանահյուսական սյուժեների ժանրային պատկերն ամփոփված է տեղական ծագում ունեցող ավանդություններում, իրապատում հեքիաթներում, գրույցներում, զվարճախոսություններում: Վերջինս հաճախ խախտում է չափավորության սահմանները և վերածվում է բամբառակ պատումի: Բայց պետք է նկատել, որ

<sup>6</sup> Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, Վիեննա, 1911, էջ 74 (մեջբերումն արված է Ա. Օլեարուսից):

<sup>7</sup> Լեռ, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1946, էջ 229:

<sup>8</sup> Մոտիվը հանգամանորեն քննության է ենթարկվել Է. Նեմյանի «Թագավորի աշխարհատեսության մոտիվը հայ բանահյուսության շահաբասյան սյուժեներում» հոդվածում: Հոդվածը լույս է տեսել. Բաների հայագիտության, հայագիտական միջազգային հանդես, №2, 2017, էջ 151-168:



երկխոսությունները, որոնք ամբողջացնում են զվարճախոսության իմաստը, միանգամայն բնական և կոպիտ հակազդեցությունն են Շահ Աբասի նույնքան կոպիտ, աննրբանկատ և անպատշաճ հարցադրմանը («Թումբանսըզ խարսը»<sup>9</sup>, «Հայ ծաղրածուն ու շահի կնիկը»<sup>10</sup>): Բանահյուսական նյութերում ազատ դրսևորվում է ժողովրդի վերաբերմունքը Շահ Աբասի նկատմամբ, որը պատումի ներքին տրամաբանությամբ պայմանավորված՝ կարող է լինել դրական, կարող է լինել բացասական: Այս հանգամանքը ևս դեր է խաղացել Շահ Աբասի կերպարի երկակիության համար:

Բանահյուսական շահաբաայան մի շարք պյուծեների հիմքում ընկած է կրոնական տարակարծությունը, քրիստոնյաներին կրոնափոխ անելու, անարգելու, նվաստացնելու թեման: Շահ Աբասի երկդիմի ու խորամանկ քաղաքականությունը, առերես բարեհաճ վերաբերմունքը հայ քրիստոնյաների նկատմամբ պայմանավորված էր արհեստագործությունը, գյուղատնտեսությունը և առևտուրը զարգացնելու, Իրանը տնտեսապես հզորացնելու նպատակով: Նրա նպատակները հեռահար էին և, ինչպես բնորոշում է Առաքել Դավրիժեցին, «...Շահ Աբաս թագավորը բազմահանձար, խելացի, կանխատես մարդ էր. Հայոց ազգի համար հնարեց բազում ու տեսակ-տեսակ հնարավորություններ, որպեսզի մնան Պարսկաստանում»<sup>1</sup>, ուստի հայերին շնորհեց բազմաթիվ արտոնություններ: Առաքել Դավրիժեցին, քննելով Շահ Աբասի վարքը, նրա սրտահաճ ու բարյացակամ խոսքերի ու դեպի իրեն տրամադրելու համար տրված արտոնությունների հետևում կռահում է նրա՝ հայ ժողովրդի համար չարագույժ ու կործանարար մտադրությունները. «Իսկ վիշապն անդնդային Շահաբաս՝ որ ի սկզբանե բարս օձի ունի բնաւորեալ, յինքեան ընդդեմ քրիստոնէից՝ մախայր և զգայսեր ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել զնոսա: Բայց առժամն ծածկեալ զթոյնսն առերեսս սրտահաճուկ լինէր»<sup>2</sup>: Դավրիժեցին պատմական դէպքերի ֆոնի վրա ստեղծել է դաժան, նենգ, կեղծավոր ու խորամանկ միապետի կերպարը, որը նպատակասլաց, անողորք ու աննահանջ, քայլ առ քայլ իրագործել է իր մտադրությունները: Գրավոր աղբյուրներում ներկայացված Շահ Աբասի կերպարը գրեթե նույնությամբ փոխանցվել է նաև բանավոր ճանապարհով՝ ընդգծելով Շահ Աբասի երկակի բնույթը: Ժողովրդական բանավոր գրույցներում պատմվում է, թե բռնագաղթից հետո ինչպես է Շահ Աբասը կրոնավորների գաղտնի ժողով հրավիրում և պատվիրում ամեն ջանք գործադրել հայերին Պարսկաստանում պահելու համար, որովհետև ըստ նրա բնորոշման. «Հայ ժողովուրթն որ կա, շատ զարգացած միլլաթ ա: Նման ա մղրաճանջու, որ չղեն ծաղեզներից մըղըր ա սրքիլիս: Հայըըը շատ արհեստներն զիղալիս, քարից հաց ըստեղծըմ, տոն դիրիս, ապրուստ ստեղծըմ: Մըր ժողովուրթըը շատ-շատ

<sup>9</sup> Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ) FFI: 1639,01-1639,01, բանահավաք Գեղամ Թարվերդյան, 1930 թ., Սալմաստի բարբառով:

<sup>10</sup> Արագ Կարապետյանի ֆոնը, «Նախիջևանի ինքնավար մարզի Շահբուգի և Օրդուբադի շրջանների հայ ժողովրդական բանահյուսությունից», 1975 թ., էջ 61-62, բանասաց Բագրատ Առաքելյան:

<sup>1</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 61:

<sup>2</sup> Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Էջմիածին, 1896, էջ 52-53:

բեներ կա, որ պետք ասըվըրն հայերից: Հայերեն հետև պետք ասպահովություն ըստեղծենք, որ մնան, մըռանան իրանց վեղը, տոն դիրն մըր վըղըմը, մընք ալ օգտվենք ընդուր շնորթից, արհեստներից, ապրելակերպից»<sup>3</sup>: Ուստի, Շահ Աբասը, հիմնվելով իր ժողովրդի մոլեռանդության ու կրոնամոլության վրա, հոգևորականներին պատվիրում է իր ժողովրդին քարոզել, թե իբր Ղուրանում գրված է. «Հայեն հացը, հայեն ունեցածը հարամ ամահմեդական ժողովուրդին հետև»<sup>4</sup>, հետևաբար պետք է խուսափել խնդիրների մեջ մտնել հայերի հետ, և արգելքը խախտողը «...իրան օխտը պորտավ, Ալլահի կամքավ ջհաննամի փայ կըրոնի: Ջաննաթեն դուրքն ալ կարիչի տըսնի»<sup>5</sup>:

Շահ Աբասը տարատեսակ միջոցներով կանխում է գաղթական հայերի նկատմամբ տեղացիների բռնությունները, թալանը, մարդասպանությունը: Նրա հանդուրժողականությունը քրիստոնեության նկատմամբ նույնպես պայմանավորված էր հեռահար նպատակներով, որի բուն շարժառիթները բացահայտում է Առաքել Դավրիժեցին. «Դուք այդ դատարկ սիրալիրության համար, որ տածում եմ քրիստոնյաների հանդեպ, մի վշտանաք ու ինձ մեղադրեք, որովհետև ես ծախսերով, ջանքով ու հնարներով հագիվ կարողացա նրանց այս երկիրը բերել: Ես նրանց չբերեցի իրենց օգուտի համար, այլ որպեսզի մեր երկիրը շենացվի ու մեր ազգը ավելանա»<sup>6</sup>: Շահ Աբասի վերջնական նպատակը միտված է հայերի կրոնափոխությանը, որով բոլոր հարցերը կլուծվեին:

Ըստ ժողովրդական իրապատում գրույցի՝ Շահ Աբասը պատվիրում է մահմեդական կրոնավորներին՝ ամեն միջոց գործադրել, որ հայերը կամավոր մահմեդականություն ընդունեն: Մի մոլլա երկու նկար է պատվիրում. մեկում Մուհամեդը փառահեղ հագնված, մյուսում՝ Քրիստոսը՝ մերկ և ձեռքին մի գազար: Ընդգծելով երկու նկարների հակադրությունը՝ մոլլան ցանկանում է համոզել հավաքված հասարակությանը, թե կրոնափոխությունն ինչ առավելություն է տալու նրանց. «Ա՛ հայեր, իս գարմանմ, թա հինչո՞ւ եք կպած էս չփլաղ Քրիստոսեն, բոք չեք գյոլիս: Տըսնալիս եք, որ նայե ջհանդամը՛ր տկլոր, քոդցած, զոռոավ մի գեզար աս ճարած ուտիլիս: ...Տըսնալիս եք Մհամադ ֆեյդամբարեն, առոք-փառոք նստած աս բեհեշտըմը, Քրիստոսեն ըսիս աս՝ հավատքդ թող, եք քի ալ պահեմ»<sup>7</sup>: Նա փորձում է ապացուցել մահմեդական կրոնի առավելությունները և սպառնալիքները, որոնց կարժանանան կրոնափոխ հայերը: Հասարակությունը լռությամբ է ընդունում մոլլայի քարոզը: Մի ձեռ գաղթական հայ խոսքի իրավունք է խնդրում Շահ Աբասից և հերքում մոլլայի փաստարկները. «...Շահն ապրած կենա, նկարեն դուզ նկարան, համա մալլան կրեցաչի տեղը-տեղեն դուզ բացատրի: Ղորթ աս, ասոր հայըրը գրկվածն իրաց վըղից, ջրից, տան-տեղից, գաղթական դըռած, կարոտ

<sup>3</sup> *Հովսեփյան Հ.*, ՀԱԻԲՍ, «Ղարադաղի հայերի հոգևոր գանձարանի գոհարները», Ձեռագիր գիրք VI, 1986-1987: «Մուսուլմանեն խեչը՛ն հայեն հացը ուտիլիս», էջ 118: Այս միտքը, հրահանգներն ու դրանց իրագործումը բազմաթիվ գրույցների միջոցով արձարծվել են XVII դարի հայ պատմագիրների երկերում:

<sup>4</sup> *Հովսեփյան Հ.*, նշվ. ձեռագիր, էջ 118:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> *Առաքել Դավրիժեցի*, նշվ. աշխ., էջ 62:

<sup>7</sup> *Հովսեփյան Հ.*, նշվ. ձեռագիր, «Հայ գաղթականն նա պարսիկ մոլլան», էջ 120:

մանցած իրաց սրփութուններից: Քրիստոսն ալ իրան ժողովրթեն էս ամեն նեղութիւնը տըսնալալ՝ ինքն ալ նեղութիւնու մաչէ յա: Ղորթ ա, Մհամադ Փեղդուբարեն գեցեն հագուստ կա, համա դէ ինքը Քրիստոսից ավելի շատ քողցած ա: Ձեռքը մըկնած ա՝ Քրիստոսեն խնթրիս, որ՝ բու ձեռքեն գիզարեն կեսն ալ տոր ինձ, իս օտմ, շատմ քողցած: Քրիստոսն ալ ըսիս ա. «Յավ, չոռ, զահմար տամ, օտըս ըստակա: Քու շահը գենցած ա իմ ժողովրթեն երգիրը բարութանդ արած, ժողովութիւնը հվաքած բերած ասիր արած, նի ածած չոլ-յաբան տեղարը, ամեն հինչից թողած հասարթ, լեց ինիս՝ բոլ չի՞, հալա իս ալ քի գեզար տամ՝ օտըս»<sup>8</sup>: Ժողովրդական գրույցն ավարտվում է. «Հայը միշտ էլ կմնա հայ» բանաձև-եզրակացությամբ, որը բնորոշում է հայի՝ մարտնչող, դժվարություններից դիմակայող, ազգային դիմագիծը պահպանող տեսակը:

Առաջադրված կրոնափոխության հարցն առաջ տանելու համար Շահ Աբասի գերագույն խնդիրն էր հայ ազգին և քրիստոնյա կրոնավորներին ապացուցել, որ քրիստոնեությունն անգոր կրոն է: Ըստ ժողովրդական գրույցներից մեկի՝ Շահ Աբասը Հայաստանը գրավելուց հետո գնում է Էջմիածնի կաթողիկոսի մոտ և ասում. «Ամենայն հայոց կաթողիկոս, ձեր կրոն շատ թույլ ա, ուժ չունի: Ձեր կրոն ուրացեք, մեր կրոնը ընդունեցեք»<sup>9</sup>: Կաթողիկոսը մերժում է շահի առաջարկը և հաստատում, որ քրիստոնեությունը գորավոր կրոն է, և պարսիկներն իրենք կարող են ուրանալ իրենց կրոնը և ընդունել քրիստոնեություն: Շահը փորձում է ոսկու և տարբեր արտոնություններ տալու միջոցով գայթակղել եկեղեցում աղոթող հավատացյալներին: Ոչ որ ուշադրություն չի դարձնում ոսկու սկուտեղով շրջող մուներտիկի վրա, միայն մի վարդապետ է արձագանքում և համաձայնվում ընդունել շահի հավատը: Շահին ուրախացնում է այն փաստը, որ ուրացողը հատկապես վարդապետ է, այսինքն, ըստ շահի մեկնաբանության, նա էլ հասկանում է, որ քրիստոնեությունը թույլ կրոն է: Կաթողիկոսը մեկ օր ժամանակ է խնդրում՝ խնդիրը պարզելու համար: Կաթողիկոսը հարցնում է, թե որտեղ է վարդապետի մայրը և իմանալով, որ նա մահացել է, շահին իր մարդկանցով հրավիրում է գերեզմանատուն և կարգադրում է փորել վարդապետի մոր գերեզմանը: Հանգուցյալին հանում են, և կաթողիկոսը աղոթքի ուժով հարություն է տալիս մեռած կնոջը և հարցնում, թե ով է վարդապետի հայրը. «Կինը ասավ.-Հայր սուրփ, աստուծուց ի՞նչ պահեմ, քեզանից ի՞նչ պահեմ, երբ Լենգթեմուրը<sup>10</sup> գրավեց Հայաստանը, նրա հրամանատարներից մեկը մեր տունը քանիմ

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> ՀԱԻԲԱ 1964, FVV: 1971,01-1977,00, «Շահ Աբասն ու Էջմիածնի կաթողիկոսը», բանահավաք՝ Ա. Կարապետյան, բանասաց՝ 90-ամյա Խաչատուր Ղազարյանը պատումը լսել է 50 տարի առաջ իր 120-ամյա պապից, Սպիտակի շրջան, Ջրաշեն գյուղ, 1964 թ.:

<sup>10</sup> Լենկ Թեմուրն իր սարսափելի ավերածություններով, կոտորածներով, գերեզմարություններով սոսկալի հետք է թողել ժողովրդի պատմական հիշողության վրա: Հայ բանահյուսական ավանդույթը պահպանել է բազմաթիվ ավանդություններ, գրույցներ և պատմություններ Լենկ Թեմուրի ասպատակությունների և սվազակաբարո գործողությունների մասին: Լենկթեմուրյան պոեմների մի մասը քննության է առնվել Է. Նուխյանի «Պատմափյակական պոեմները Արցախի բանահյուսության մեջ» հոդվածում (*Khmechyan E.H.* 2018, Plots of historic epic in the folklore of Artsakh, *Review of Armenian studies* (Yerevan), № 2(17), pp. 168-180):

ժամանակ ապրեց: Մի անգամ էլ մի բուռ օսկի տվեց ինձ, ես խափնվեցի, էս տղան նրանից է:

Կաթողիկոսը ըսավ.- Տեսա՞ր, շահ, որ նա մաքուր հայու արյուն չուներ, մահմեդականի էր, մաքուր հայը դավաճան չի եղի, չի եղնի»<sup>11</sup>:

Այս պատումի մեջ ժողովուրդը միավորել է հայ ազգի համար կարևոր մի քանի խնդիր, որ դարեր շարունակ ծառայել է ժողովրդի առաջ: Նախ հարևանների կրոնական անհանդուրժողականությունը և պայքարը քրիստոնեության պահպանման համար, ապա՝ դավաճանության խնդիրը, որը մեկնաբանվում է արյան ու ծագումնաբանության պղծությամբ և վերջապես՝ քրիստոնեության, հայ եկեղեցու ու սրբակրոն հոգևորականների հրաշագործ կարողությունները, որոնք, ի գործ դրվելով ըստ անհրաժեշտության, տեղի ու ժամանակի, ապահովում են ցանկալի ելք խնդրահարույց իրավիճակից: Զրույցում առկա հրաշապատում մոտիվը բնորոշ է միջնադարյան պատմագրության ու վարքագրության մեջ քրիստոնեության, հայ եկեղեցու պատմության, եկեղեցաշինության ու հոգևորականների մասին պատմվող գրույցներին: Հոգևոր դասի և ժողովրդական գանգվածների միջավայրում են սկզբնավորվել ու ձևավորվել հրաշապատում պատմությունները, որոնք հոգևոր դասի սրբակրոն ներկայացուցիչների (կաթողիկոս, քահանա, վարդապետ, ճգնավոր, տերտեր) գործառույթները հարստացրել են նշանակալից հրաշագործությունների շարքերով<sup>12</sup>, որոնց անվերապահորեն հավատացել են թե՛ հոգևորականները, թե՛ պատմագիրները և թե՛ հավատավոր ժողովուրդը: Բնչպես նախորդ պատմությունը, այս պատումը նույնպես ավարտվում է կարևոր եզրահանգմամբ, այն է՝ «անխառն», «մաքուր» հայը դավաճան չի կարող լինել: Փաստորեն հավատափոխությունը կանխելուն միտված այս գրույցները քրիստոնեական հավատի դերն ընդգծելուց բացի, նաև բարոյախրատական գործառույթ են իրականացնում: Այս գրույցներն իրական տարբեր դեպքերի արձագանքներն են ժողովրդական ստուգաբանությամբ ու մեկնաբանությամբ: Հատկանշական է, որ առաջին պատումում որպես քրիստոնեական հավատքի ու անարգվող Քրիստոսի պաշտպան հանդես է գալիս ծերունի գաղթական հայը, որի կերպարի մեջ խտացված է ողջ գաղթական հայությունը: Դառը փորձությունները չեն կոտրել ազգի ըմբոստ ոգին, ու թեև մահվան սպառնալիքն է կախված լուրջամբ մուլլայի քարոզը լսողների վրա, միննույն է՝ խոսափող ծերունու միջոցով արտահայտվում է բոլորի տեսակետը: Երկրորդ պատումում հավատքի պաշտպանն ու շատագովը կաթողիկոսն է,

<sup>11</sup> ՆԱԻԲԱ 1964, FFV: 1971,01-1977,00, «Շահ Աբաս ու Էջմիածնի կաթողիկոսը»:

<sup>12</sup> Հանգուցյալին հրաշագործությամբ կենդանացնելու առումով հատկանշական են Չարեքավանքի մասին ավանդությունները (երկու տարբերակ): Առաջին տարբերակում Սարգիս վարդապետը բժշկության գրքի ընթերցմամբ (հավանաբար՝ Նարեկ - Է.Խ.) և Քրիստոսի օգնությամբ հարություն է տալիս Ամիրայի միակ որդուն, որն իր հարստության մեկ քառորդը (չարեք) նվիրում է վարդապետի վանքին: Այնուհետև վանքը կոչվում է Չարեքավանք: Երկրորդ տարբերակում Սարգիս վարդապետը Լենկ թեմուրի ներկայությամբ կենդանացնում է մեռելին, որի դիմաց վարդապետի խնդրանքով Լենկ թեմուրը նվիրում է վանքի դիմացի ծմակը և մի մեծ հողամաս (Ղանալայան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 235-236, № 634 Ա և Բ, «Չարեքավանք»): Երկու դեպքում էլ հրաշագործությունը կատարվում է ի տես մահմեդական հակառակորդների, որոնք զինաթափվում են քրիստոնեական կրոնի գործության առջև:



որը ոչ միայն ի պաշտոնե, այլև իբրև սրբակրոն հոգևորական՝ հրաշագործությամբ ապացուցում և պաշտպանում է իր ազգային արժանապատվությունն ու քրիստոնեական կրոնի հզորությունը: Հրաշագործությունը ցնցում է Շահ Աբասին, և նա ասում է. «- Ախպեր, ձեր կրոն ձեզի հալալ էղնի, գացեք ձեր կրոն պաշտեցեք»<sup>13</sup>:

90-ամյա բանասացը հավատում է իր պատումի իսկությանը և թվարկելով հայ ժողովրդի պատմության ընթացքում Հայաստան արշաված բոլոր նվաճողներին, եզրակացնում է, որ եթե նրանցից յուրաքանչյուրը մի վեց-յոթ վարդապետի նմանին թողել է, ապա ազգը լցվել է անպետք, դավաճան մարդկանցով, որոնց պատճառով օտարները կարծել են, թե հայերը դավաճան են: Բանասացն իր խոսքը եզրափակում է. «Դե հո ամեն մարթ հայոց կաթողիկոս չի, օր գա ստուգի, տեսնի՝ էտ դավաճան ուստ ա, նրա հեր վերն ա»<sup>14</sup>:

Հոգևոր հայրերի աղոթքների հրաշագործ ուժի ու ներգործության բազում դրվագներ են ներկայացնում թե՛ Առաքել Դավրիժեցին և թե՛ Զաքարիա Մարկավազը: Այն պատմաները, որ նրանք ժամանակին գրառել են, շրջանառվելիս են եղել ժողովրդի բերանում և փոխանցվելով հատվածաբար հասել մինչև XX դար: Իրապատում գրույցներից մեկը ներկայացնում է Էջմիածնի «տեղափոխության» պատմությունը, որը ճակատագրական նշանակություն է ունեցել հայ ազգի համար:

Շահ Աբասը հայերին իր երկրին կապելու համար մի գարհուրելի ծրագիր է հղանում. «Այդ օձն դարանակալ... եղ ի մտի յուրում քակել գաուրբ Էջմիածինն ...բերել գաջն Լուսավորչին, և զքարինսն Էջմիածնի յԱսպահան, և անդ շինել նոր Էջմիածին ...որպեսզի այնու մնասցեն ազգն հայոց ի Պարսկաստան»<sup>15</sup>, որը կանխվում է խոջա Նազարի և Սպահանի հայության ջանքերով: Այս իրական դեպքը խորը կնիք է թողել ժողովրդի պատմական հիշողության մեջ: Զրույցը Դավրիժեցու պատումի համառոտ տարբերակն է: Պատումում պատճառահետևանքային կապը հստակ է: Գաղթական հայերը Սպահանում չեն հաշտվում իրենց վիճակի հետ, կարոտում են իրենց տուննուտեղին, սրբություններին: Շահը որոշում է քանդել Էջմիածինը և նրա քարերով նոր վանք շինել Սպահանում: Հայերը զոհողության են գնում, համաձայնվում են մնալ Սպահանում, միայն Էջմիածինը չքանդվի. «Խայերը տըսան, որ իրանց վանքը կքանդվի, փոշմանա: Մե մարթ միտք արեց, գնաց շայի մոտը, թե.- Ավելի ծախս մի՛ արա, որ խազարավոր դավեք օրոխկես, վանքը քանդես բերես ըստե. լավ կլնի, վանքի քարերից, հարաֆի յանից տասնութը քար խանես, բերես ըստե, քցես խիմ և վրեն շինես էտենց վանք, մենք կմնանք ըստե»<sup>16</sup>: Թե՛ Դավրիժեցու պատումում և թե՛ ժողովրդական գրույցում շահն ընդունում է ներկայացված պատճառաբանությունները և բավարարվում է Էջմիածնի վանքից քարեր հանելու և նրանցով եկեղեցի կառուցելու առաջարկով և հրամայում է այն իրագործել. «Այլ և գնասցես յԷջմիածին, և գնշանավոր քարինս Էջմիածնի քակեալ հանեսցես ի տե-

<sup>13</sup> ՀԱԻԲԱ 1964, ԲԲՎ: 1971,01-1977,00:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> *Առաքել Դավրիժեցի*, նշվ. աշխ. էջ 200:

<sup>16</sup> ՀԱԻԲԱ ԲԲԻ: 1993, 01-1994, 00, «Էջմիածնի տեղափոխությունը», բանահավաք՝ *Վարդ Բորյան*, բանասաց *Գրիգոր Մարգարյան* (պապերը խոյեցիներ են), Գյամրեզ:

դուզեն... զամենեսեան զոսա առաքեսցես զնալ ի քաղաքն Ասպահան», «...և զնշանաւոր քարինս Էջմիածնի քակեալ հանին ի տեղոյն ...ընդ ամեն տասն և հինգ քար»<sup>17</sup>: Դավրիժեցին մեկ առ մեկ գրում է, թէ որ քարը որտեղից է հանվել և ինչ նպատակով: Նա անձամբ տեսել է այդ քարերը և մանրամասն գրել: Ըստ ժողովրդական պատումի՝ 18 քար է հանվել եկեղեցու հարավային կողմից. «Ընչուր մկա էտ քարերի տեղը մալըմ կանի»<sup>18</sup>, իսկ ըստ Դավրիժեցու պատմության՝ քարերը տարբեր տեղերից են հանվել և գործառու-թային տարբեր նշանակություն են ունեցել, ինչպես օրինակ՝ սուրբ սեղանը, որի վրա սուրբ պատարագն էր մատուցվում, Քրիստոսի իջման տեղի քարը, չորս քար եկեղեցու չորս անկյուններից և այլն:

Էջմիածնի՝ քրիստոնեական հավատքի գլխավոր սրբատեղին քանդելու գաղափարը ժողովրդի կողմից դիտվում է որպես մեծագույն սրբապղծություն և հարված ազգային ինքնությանը: Ուստի, թե՛ ըստ պատմագրության և թե՛ ըստ ժողովրդական բանավոր ավանդության՝ հենց հայերն են կանխում շահի չար մտադրությունը՝ շեղելով նրա ուշադրությունը Էջմիածինը քանդելու մտքից՝ այն ներկայացնելով որպես աննպատակա-հարմար, անիմաստ և ծախսաշատ գործողություն, որը կարելի է փոխարինել նոր վանքի կառուցմամբ՝ հիմքում ունենալով Սուրբ Էջմիածնի քարերից, իսկ տաճարում՝ Լուսավորչի աջը, ոսկեկազմ ավետարանն ու արծաթյա խաչը:

Ժողովրդական բանահյուսության մեջ պահպանված իրական հիմք ունեցող պատմավիպական գրույցներն առանձին դրվագներ են XVII դարի շահաբասյան ժամանակա-շրջանի պատմությունից: Շահաբասյան սյուժեներն իրենց բնույթով պատմավիպական գրույցների շարքին են պատկանում: Շահ Աբասի վիպական կերպարն այս գրույցներում մտնենում է նրա իրական պատմական կերպարին. այն է՝ դաժան, խորամանկ, երկակի վարքագծով միապետ, որը միջոցների մեջ խտրություն չի դնում ճնշելու, հնազանդեց-նելու և ի նպաստ սեփական երկրի օգտագործելու գերեվարված հայերի ինչքը, մտավոր կարողությունները, ֆիզիկական ուժը, աշխատասիրությունն ու ստեղծելու կարողու-թյունը: Շահաբասյան պատմավիպական սյուժեներում պատմական իրողությունները տակավին չեն մթազանվել՝ շնորհիվ պատմական ոչ հեռավոր անցյալի և ժողովրդի հավա-քական հիշողության:

<sup>17</sup> Առաքել Դավրիժեցի, նշվ. աշխ. էջ 212:

<sup>18</sup> ՀԱԻԲԱ FFII: 1993, 01-1994, 00, Վարդ Բորչյանի ֆոնդ:

## ЭСТЕР ГАЙКОВНА ХЕМЧЯН

Старший научный сотрудник Института археологии  
и этнографии НАН РА, кандидат филологических наук  
эл. почта - ekhemchyan@yandex.ru

### ШАХАББАССКИЕ СЮЖЕТЫ С ИСТОРИЧЕСКОЙ ОСНОВОЙ В АРМЯНСКОМ ФОЛЬКЛОРЕ

#### Резюме

В армянской фольклорной традиции сохранился ряд шахаббасских сюжетов, который формировался на основе конкретных исторических событий. Начальные варианты этих сказов закрепились в произведениях армянских историографов (Аракек Даврижеци, Закария Саркаваг Канакерци, Хачатур Джугайеци, Степанос Ерец) и в рукописных записях летописцев. Сказы, созданные на основе исторических-реальных событий, устным путем передавались до XX века. В сюжетах с историко-эпическими мотивами (предание, бытовая сказка, сказание, анекдот) присутствуют темы маскированного странствования, вероотступничества, насилий, ограблений и унижений, религиозного разногласия и нетерпимости, угождение и присваивания привилегий армянам в политических целях. Оценив трудолюбие, беспрекословные умения владения тонкостей ремеслов, сельского хозяйства и торговли армян, Шах Аббас использовал все средства, чтобы закрепить их к своей стране, также использовать их положительные свойства во благо своей страны. По народным сказам для побуждения армян на вероотступничество мусульманские духовные лица и Шах Аббас пробуют доказать, что христианство является слабой религией и надо от него отречься. Армянский католикос силой молитвы воскрешает мать монаха-вероотступника и выясняет, что монах – потомок одного из полководцев Тамерлана. Посредством историко-эпических сюжетов подтверждается не только могущество христианской религии, но и нравоучительным выводом представляется национальный облик неподкупного и преданного своей вере чистокровного армянина. Армяне, насильно сосланные в Персию, чтобы предотвратить святотатственный и ужасный план Шаха Аббаса - разрушения церкви Святого Эчмиадзина и строительство с его камнями церкви в Исфахане, соглашаются остаться там. Эпический образ Шаха Аббаса в историко-эпических сюжетах приближается к его реальному историческому образу. Он жестокий, хитрый монарх, с двойственным поведением, который не проявляет разборчивость в средствах угнетения, покорения и использования имущества, умственных способностей, физической силы, трудолюбия, способность творения армянских пленных во благо собственной страны. В шахаббасских историко-эпических сюжетах исторические события все еще не омрачались, благодаря недавнему историческому прошлому и собирательной памяти народа.

**Ключевые слова:** сюжет, традиция, мотив, событие, сказание, очевидец, религия, терпеливость, странствование.



---



ESTER HAYK KHEMCHYAN

Senior researcher of the Institute of  
archaeology and ethnography NAS RA, Ph D  
e-mail: ekhemchyan@yandex.ru

SHAHABBAS SUBJECTS HAVING A HISTORICAL  
BASIS IN THE ARMENIAN FOLKLORE

Summary

In the Armenian folklore tradition, a number of Shah Abbas stories has been preserved, formed on the basis of specific historical events. The initial versions of these tales were registered in the works of Armenian historians (Arakel Davrizhetsi, Zakaria Sarkavag Kanakertsi, Khachatur Dzhughayetsi, Stepanos Yerets) and in manuscripts of chroniclers. Tales created on the basis of historical real events were transmitted orally through the 20th century. Stories with historical and epic motifs (legend, realistic tale, legend, joke) contain themes of masked wandering, apostasy, violence, robbery and humiliation, religious disagreement and intolerance, pleasing and conferring privileges on Armenians for political purposes. Assessing the unquestionable skills of Armenians in crafts, agriculture and trade, Shah Abbas used all means to attach them to their country, and also used their positive qualities for the benefit of his own country.

According to folk tales, to encourage Armenians to apostasy, Muslim priests and Shah Abbas are trying to prove that Christianity is a weak religion and it is necessary to renounce it. The Armenian Catholicos, by the power of prayer, resurrects the mother of the apostate monk and finds out that the monk is a descendant of one of the generals of Tamerlane. Through historical and epic plots, not only the power of the Christian religion is confirmed, but also the moral image of the incorruptible and faithful purebred Armenian is presented as a moral conclusion. The Armenians, forcibly exiled to Persia, to prevent the sacrilegious and terrible plan of Shah Abbas - the destruction of the Church of Holy Etchmiadzin and the construction of a church in Esfahan with its stones, agree to stay there.

The epic image of Shah Abbas in historical and epic plots approaches his real historical image. He is a cruel, cunning monarch, with dual behavior, who does not show legibility in the means of oppression, subjugation and use of property, mental abilities, physical strength, industriousness, the ability to create of the captive Armenians for the benefit of his own country. In the Shah Abbas historical epic plots, historical events were still not overshadowed by the recent historical past and the collective memory of the people.

**Keywords:** plot, tradition, motive, event, legend, eyewitness, religion, patience, wandering.

ՄԱՐԻՆԵ ՀԱՅԿԻ ԽԵՄՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող,  
բանասիրական գիտությունների թեկնածու  
Էլ. փոստ - mkhemchyan@yandex.ru

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ  
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՑԻ ՕՐԲԱՆ

**Բանալի բառեր.** բանահյուսություն, հեքիաթ, ժանր, բանասաց, բանահավաք, կեն-  
ցաղ, սովորույթ, հավատալիք:

Վանա լճի ավազանում տեղակայված Վասպուրական աշխարհը պատմական Հա-  
յաստանի կենտրոնական և ամենաընդարձակ երկրամասն էր, որի կազմում, ըստ «Աշ-  
խարհացույցի», ընդգրկված էր 35 գավառ<sup>1</sup>: Իր երկարատև գոյության ընթացքում Վաս-  
պուրական աշխարհի սահմաններն անընդհատ փոփոխության են ենթարկվել. որոշ  
գավառներ անջատվել են երկրամասից, սակայն Վան քաղաքն իր շրջակա գավառներով  
գրեթե միշտ պահպանել է իր ամբողջականությունը: Այսօր, անդրադառնալով Վասպու-  
րականի բանարվեստի խնդիրներին, հիմք ենք ընդունում XIX դարավերջի և XX դարա-  
սկզբի վարչատարածքային բաժանումը՝ Վան քաղաքը և շրջակա գավառները (Հայոց  
Ձոր, Թիմար, Բզնունիք, Շատախ, Կարճկան, Ռշտունիք, Մոկս և այլն):

Վասպուրականի գավառները միմյանց հետ կապված էին վարչական, տնտեսա-  
կան, բարեկամական կապերով, ուստի տարածաշրջանում բանահյուսական նյութերի  
ներքին փոխներթափանցումներն ու ազդեցություններն ավելի ակտիվ էին գործում: Տա-  
րածաշրջանի գավառների թե՛ բանահյուսական երկացանկը և թե՛ ազգագրական սովո-  
րույթներն ու հավատալիքները (ներառյալ կենցաղը) բազմաթիվ ընդհանրություններից  
բացի ենթակա էին նաև Վան քաղաքի անմիջական ազդեցությանը: Վան քաղաքը, լինե-  
լով նահանգի կենտրոն և ունենալով հազարամյակներով ձևավորված առանձնահատուկ  
հոգևոր ու բանահյուսական մշակույթ, մարդկանց ծայրագավառներից դեպի իրեն էր  
ձգում ոչ միայն սոցիալական և տնտեսական պայմանների թելադրանքով, այլև հոգևոր  
պահանջմունքների դրսևորման համար համապատասխան միջավայրի առկայությամբ:  
Վանը տարածաշրջանում ուներ առաջատարի դեր և ենթակա էր ընդօրինակման: Վա-  
նեցիների դիտողականությունն ու սրամտությունը, աննշան դիպվածներից հետևություն  
անելու կարողությունն ու բարբառային դիպուկ ձևակերպումները, համով-հոտով պա-  
տումներ ստեղծելն ու անմիջապես տարածելը բնորոշում էր նրանց բանահյուսական ա-  
նուրանալի օժտվածությունը:

<sup>1</sup> *Անանիա Շիրակացի*, Մատենագրություն, Երևան, 1979, էջ 294:

XIX դարավերջին և XX դարասկզբին Վասպուրականը բազմադարյան հոգևոր մշակույթի շտեմարան էր, որի անքակտելի մասը կազմող բանավոր մշակույթը իր բազմազանությամբ, դրսևորումների ինքնատիպ առատությամբ, հյութեղ արտահայտչամիջոցների, վանեցու կերպարային անկրկնելի նկարագրի ու բնավորության, հազարամյակների պատմության ու տեղական բնաշխարհի երևույթների միախառնման մի ամբողջություն էր: Այն ոչ միայն լիովին բավարարում էր տեղական հանրության հոգեկան պահանջումները, այլև շարունակաբար թարմացվում և համալրվում էր նորանոր պատումներով ու երանգներով:

Վասպուրականի բանավոր մշակույթի արմատները թաքնված են տարածաշրջանի հարուստ պատմական անցյալում: Վանա լճի ավազանի բազմաթիվ հուշարձանների, հայերի ազգածագման ու կրոնահավատալիքային ակունքների հետ են կապված առասպելների ու ավանդությունների ինքնատիպ տարբերակները, որոնց լուսաբանումը լույս է սփռում պատմական անցյալի վրա, վեր է հանում ծիսապաշտամունքային և հավատալիքային այն գործոններն ու միջավայրը, որոնց ժառանգորդներն ու կրողներն էին Վասպուրականի հնօրյա տերերը՝ հայերը:

XIX դարի երկրորդ կեսին Վասպուրականի հոգևոր մշակույթը գրավեց հետազոտողների ուշադրությունը: Տոհմիկ վանեցի Գարեգին վրդ. Սրվանձտյանցը կոչումի բերումով որպես նվիրակ շրջելով Արևմտյան Հայաստանի հայաբնակ վայրերում՝ իր հոգևոր գործունեությանը զուգահեռ զբաղվում է ժողովրդի բառուբանի, նիստուկացի, վարքուբարքի ուսումնասիրությամբ և գրառում է բանահյուսական ու ազգագրական արժեքավոր նյութեր, որոնք հրատարակում է նախ «Մասիս», «Արևելյան մամուլ», «Կռունկ հայոց աշխարհի», «Մեղու Հայաստանի» պարբերականներում: 1874 թ. լույս է տեսնում նրա «Գրոց և Բրոց» զիրքը<sup>2</sup>, որում Գարեգին Սրվանձտյանցը ներկայացնում է ոչ միայն Վասպուրականի ժողովրդական բժշկության, հարսանեկան սովորույթների, տոների, բուժիչ աղբյուրների, սրբացված ծառերի մասին նյութեր, այլև իր գրառած «Մասնա ծռեր» էպոսի անդրանիկ տարբերակը, ինչպես նաև, ինչպես ինքն է ներկայացնում՝ «բրդուճ մը Վանայ ժողովրդական անգիր բանահյուսութենէն»: Այնուհետև լույս են տեսնում «Մանանայ»<sup>3</sup> և «Համով-հոտով»<sup>4</sup> գրքերը, որոնցում բանահյուսական և ազգագրական հարուստ նյութն ուղեկցվում է գրքերի առաջաբաններում կատարված նրա բնութագրումներով, ընդհանրացումներով ու վերլուծություններով: Այսպես օրինակ՝ «Մանանայի» «Հայրենեաց վէպը և գրոյցը» բաժնի ներածական խոսքում նա ասում է. «Վէպն ու գրոյցը, որ ժողովրդեան բերնով «հէքեաթ» է, յօրինուած կը լինի բարոյական խրատու համար. և իբր դիւցազներգութիւն՝ քաջաց քաջութիւն հռչակելու կամ այլոց օրինակ տալու համար: Հէքեաթներու շարադրութեան մէջ միշտ կարգ մը կայ. ուղևորութիւն. հեռաւոր և անծանօթ աշխարհները. հրաշալի և ահռելի նկարագրութիւնք վայրաց և անձանց. դիպուածք. արկածք ի նեն-

<sup>2</sup> *Մրուանձտեանց Գ.*, Գրոց ու Բրոց և Սասունցի Դաւիթ կամ Միերի դուռ, Կ. Պոլիս, 1874:

<sup>3</sup> *Մրուանձտեանց Գ.*, Մանանայ, Կ. Պոլիս, 1876:

<sup>4</sup> *Մրուանձտեանց Գ.*, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884:

գութենէ ընկերաց կամ եղբարաց, երբեմն ևս ի ծնողաց»<sup>5</sup>: Այս խոսքերը վկայում են, որ Գ. Սրվանձտյանը սկիզբ է դրել ոչ միայն հեքիաթների գրառմանն ու հրատարակությանը, այլև ուսումնասիրությանը:

Գարեգին Սրվանձտյանցի գործունեությունն ազդակ է դառնում ժողովրդական բառ ու բանի գրառման և հրատարակության համար: Արխատակես վարդապետ Մեղրակյանը մշեցիներից և վանեցիներից գրառել է մինչ այդ չհրատարակված ժողովրդական երգեր («Մննդեան երգ», «Ի ւ. Կարապետն Գլակայ Վանից», «Քարոզ խաչ», «Հոզի և մարմին» և այլն)<sup>6</sup>: Գրքույկի առաջաբանում նա գրում է. «Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ Մշեցւոց և Վանեցւոց ժողովրդական երգերը դեռ ոչ մի երգարանի մէջ առնուած չեն, այդպիսի աշխատութիւն մի՞ թէ և կարի թեթև ինձ բաժին համարեցի, և ահաւասիկ չորս տարուան ընթացքի մեջ մուրացիկ Մշեցիներէն և Վանեցիներէն զգուշութեամբ ժողոված այս սակաւթիւ երգերս կուզեմ հրապարակական առնել, գուցէ և այս փոքրիկ տետրակովն յաջողած լինեմ կարծել տալու բանասիրաց որ Հայերէն գրաբառ լեզուն երկար ժամանակ պահպանուած է եղել երբեմն նշանաւոր, իսկ այժմ ոտնակոխ եղած գաւառաց մէջ»<sup>7</sup>: Այդ տարիներին՝ 1875 թ., Կ. Պոլսում հրատարակվում է ծագումով վանեցի Տեր-Սարգսենց գերդաստանի (Երեմիա, Արիստակես, Մեղրակ եղբայրներ) ներկայացուցիչ Արիստակես վարդապետ Տեկանցի «Պանդոլխտ վանցին» ժողովածուն<sup>8</sup>, որում տեղ են գտել վասպուրականյան ժողովրդական երգեր և առածներ:

Ժամանակագրորեն հաջորդ բանահավաքը Գևորգ Շերենցն է: Գիտակցելով ժողովրդական բառուբանի պահպանման կարևորությունը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ՝ նա հավաքել է Վասպուրականի ժողովրդական երգեր, հեքիաթներ, առածներ, հանելուկներ, օրհնանքներ ու անեծքներ և 1885 թվականին ձեռնամուխ եղել «Վանայ սագ» ժողովածուի հրատարակությանը<sup>9</sup>: Ժողովածուի երկրորդ մասի (1899)<sup>10</sup> նախաբանում նա գրում է. «Երբ 1885 թուականին «Վանայ Սագի» առաջին մասը հրատարակուեց Տփլիսի Հայերէն գրքերի հրատարակչական ընկերութեան շնորհիւ՝ ես մեծ մխիթարութիւն և քաջալերութիւն զգացի, յուսալով որ մօտիկ ապագայում կյաջողուի ինձ նորա երկրորդ մասն ևս ի լոյս ընծայել, դարձեալ նոյն բարեջան ընկերութեան շնորհիւ: Սակայն ցաւօք սրտի յայտնում եմ, որ մի ամենասոսկալի պատահար յապաղեցրեց, յետաձգեց իմ այդ դոյզն աշխատութիւնը ի լոյս հանելու»<sup>11</sup>:

<sup>5</sup> Մրուանձտեանց Գ., Մանանայ, էջ 149:

<sup>6</sup> Մեղրակեան Ա., Քնար մշեցուց և վանեցուց (մինչև այժմ չհրատարակված երգեր), Ի Վաղարշապատ, 1874:

<sup>7</sup> Մեղրակեան Ա., նշվ. աշխ., էջ 3-4:

<sup>8</sup> Տեր-Սարգսենց Ա., Պանդոլխտ վանցին: Նամակներ, երգեր, առածներ, առեղծվածներ, Կ. Պոլիս, 1875:

<sup>9</sup> Շերենց Գ., Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների: Առաջին մաս (Տեղական բարբառով), Թիֆլիս, 1885:

<sup>10</sup> Շերենց Գ., Վանայ սագ, Հաւաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների, հանելուկների, օրհնութիւնների և անեծքների: Երկրորդ մաս (Տեղական բարբառով), Թիֆլիս, 1899:

<sup>11</sup> Շերենց Գ., նշվ. աշխ., էջ 5:

Վասպուրականյան բանահյուսական ժառանգության հավաքման և հրատարակության գործում մեծ ավանդ ունեն Մարգիս Հայկունին և Գարեգին Հովսեփյանը: Նրանք, ծնունդով չլինելով վասպուրականցի, աշխատանքի բերումով վասպուրականցիներից հավաքել և հրատարակել են բազմաժանր բանահյուսական նյութ<sup>12</sup>:

Հատկապես հայ ժողովրդական վեպի մոկաց պատումների տարբերակների<sup>13</sup> գրառումը և հրատարակումը թափ հաղորդեց «Մասնա ծոերի» նոր տարբերակների հայտնաբերման, գրառման և հրատարակման գործին: Նախախորհրդային տարիներին «Մասնա ծոերի» նոր պատումներ են գրառել նաև Մանուկ Աբեղյանը (1986 թ.), Բագրատ Խալաթյանը (1898 թ.), Արտաշես Աբեղյանը (1899 թ.), Հարություն Գիլանյանը (1911 թ.):

Վասպուրականի հոգևոր ու նյութական մշակույթը մի ամբողջություն է դիտարկել նաև Ե. Լալայանը: Երվանդ Լալայանն իր վասպուրականյան ուղևորություններն ու ուսումնասիրությունները սկսել է 1910 թ.: Նա շրջել է Վանի, Տոսպի և Հայոց Ձորի գավառներում, այնուհետև իր գիտարշավները շարունակել է 1911-1912 թթ.: Այդ տարիներին Երվանդ Լալայանը շատ արժեքավոր ազգագրական և բանահյուսական նյութ է տպագրում «Ազգագրական հանդեսի» XXI, XXII և XXIII գրքերում<sup>14</sup>: Գիտակցելով ազգագրական և բանահյուսական նյութի անվերադարձ կորստյան վտանգը՝ նա գրում է. «Քանի որ ուսումնասիրություններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու, մինչդեռ եթե մի քառորդ դար էլ անտարբեր գտնուենք հայկական նիւթերը հաւաքելու՝ շատ ու շատ նիւթեր բոլորովին անհետանալու են, ուստի իմ անմիջական նպատակը ոչ թե ուսումնասիրութիւն տալն է, այլ երտպական ուսումնասիրութեան լուսով հայկական նիւթերը որոնել, գտնել և կորստից ազատել»<sup>15</sup>: Երվանդ Լալայանը նպատակ է ունեցել համապարփակ ուսումնասիրել Վասպուրականի հոգևոր և նյութական մշակույթը, որը բնօրրանում ընդհատվել է ցեղասպանության պատճառով, ապա շարունակվել է բռնի տեղահանված և Արևելյան Հայաստանի ու Կովկասի բնակավայրերում ապաստանած գաղթականների միջավայրում: Երվանդ Լալայանի ղեկավարությամբ գիտարշավի (անդամներ՝ Արտաշես Բարսեղյան, Երվանդ Պեգազյան, Մենեքերիմ Շալչյան, Նազարեթ Մար-

<sup>12</sup> *Յովսէփեան Գ.*, Փշրանքներ ժողովրդական բանահյուսութենից, Թիֆլիս, 1892: *Յովսէփեան Գ.*, Ռոստամ Զալ. Ժողովրդական վեպ (Մոկաց բարբառով)․-Ազգագրական հանդես, VII-VIII գրքեր, 1901, 205-254: Էմիլյան ազգագրական ժողովածուի Զ հատորում տպագրվել են Մարգիս Հայկունու հավաքած երգեր (կրոնական, հարսանյաց, օրորոցային, աշխատանքային, պարերգեր, վիճակի երգեր և այլն), առած-ասացվածքներ, աղոթքներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, շուտասելուկներ, հանելուկներ և այլն:

<sup>13</sup> *Յովսէփեան Գ.*, Մասնայ ծոեր, Մասունցի Դաւիթ. Ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով), Թիֆլիս, 1892: *Հայկունի Ս.*, Մանասնար և Բաղդասար (Մոկաց ճիւղ), Էմիլյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 3-14, *Հայկունի Ս.*, Դաւիթ և Մհեր (Մոկաց ճիւղ), Էմիլյան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1901, էջ 19-50: *Հայկունի Ս.*, Դաւիթ և Մհեր (Շատախի ճիւղ), Էմիլյան ազգագրական ժողովածու, հ. Դ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 367-398:

<sup>14</sup> Ազգագրական հանդես, գիրք XXI, Թիֆլիս, 1911: Ազգագրական հանդես, գիրք XXII, Թիֆլիս, 1912: Ազգագրական հանդես, գիրք XXIII, Թիֆլիս, 1912:

<sup>15</sup> *Լալայան Ե.*, Օրհնական կարգերը հայոց մէջ (165-199)․-Ազգագրական հանդես, գիրք XXI, էջ 165:



տիրոսյան, Շահեն Կուժիկյան, Մարտիրոս Դաբաղյան, Եղիշե Վարդանյան և ուրիշներ) ընթացքում ցեղասպանությունից մազապուրծ վասպուրականցի գաղթականներից գրի է առնվել մեծաքանակ վասպուրականյան բանահյուսական նյութ, որի մի մասը տպագրվել է «Ազգագրական հանդեսի» XXIV, XXV, XXVI գրքերում<sup>16</sup>, իսկ մի ստվար մասն էլ պահվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (ՀԱԻԲԱ): ՀԱԻԲԱ-ում պահվող բանահյուսական նյութի հեքիաթների մի մասը տպագրվել է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական մատենաշարի XIV, XV, XVI և XVII հատորներում<sup>17</sup>, իսկ բանահյուսական մյուս ժանրերի մի մասն էլ (ավանդություններ, էպոս, քնարական և ասույթաբանական ժանրեր և այլն) «Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը» ժողովածուում<sup>18</sup>: Այդուհանդերձ՝ Երվանդ Լալայանի խմբաբաշխվի կողմից գրառված նյութերի մի ստվար մասը մնացել է անտիպ:

Երվանդ Լալայանից հետո՝ 1911-1912 թթ. Ռուսաստանի ակադեմիայի Պետերբուրգի բաժանմունքի կողմից Հովսեփ Օրբելին գործուղվել է Արևմտյան Հայաստան՝ հայագիտական ուսումնասիրություններ կատարելու համար: Նա իր ուշադրությունը կենտրոնացրել է Մոկսի բարբառի ուսումնասիրության վրա և այն կոնկրետ նյութով ամրապնդելու համար գրառել է որոշ քանակի բանահյուսական նյութ (10 առակ, 32 ծիծաղաշարժ պատմություն, 10 հեքիաթ, 2 բալլադ, 7 վիպական և աշխատանքային երգեր, 5 ուսանավոր, 163 առած-ասացվածք, 51 հանելուկ)<sup>19</sup>:

XX դարասկզբի բանահավաքներից հարկ է մանրամասնորեն անդրադառնալ Հայկ Աճեմյանին, որ վասպուրականյան բանահյուսական նյութ հավաքելուց գատ կատարել է նաև իր և այլ բանահավաքների գրառած վիպական երգերի ուսումնասիրություն<sup>20</sup>: Նա իր հավաքած երկու վիպական երգ, սիրային երգեր, առասպելներ, պարերգեր, հանելուկներ և այլ բանահյուսական նյութեր 1917 թվականին հրատարակել է «Ծաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան» ժողովածուի առաջին և միակ փնջում<sup>21</sup>: Ցավոք, մյուս փնջերը, տպագրության պատրաստ լինելով հանդերձ, նյութական միջոցներ չլինելու պատճառով չեն տպագրվել<sup>22</sup>: Հայկ Աճեմյանի հավաստմամբ՝

<sup>16</sup> Ազգագրական հանդես, գիրք XXIV, Թիֆլիս, 1913: Ազգագրական հանդես, գիրք XXV, Թիֆլիս, 1914: Ազգագրական հանդես, գիրք XXVI, Թիֆլիս, 1916:

<sup>17</sup> ՀժՇ հ. XIV, Վան-Վասպուրական, կազմող՝ Ղազիսյան Ա., Երևան, 1999: ՀժՇ հ. XV, Վան-Վասպուրական, կազմող՝ Մվաղյան Վ., Երևան, 1998: ՀժՇ հ. XVI, Վասպուրական, կազմողներ՝ Նազիսյան Ա. և Ղազիսյան Ա., Երևան, 2009: ՀժՇ հ. XVII, Մոկս, կազմող՝ Հայրապետյան Թ., Երևան, 2012:

<sup>18</sup> Մոկս. հայոց բանահյուսական մշակույթը, կազմողներ՝ Հարությունյան Ս., Խենյան Է., Խենյան Ս., Պաղտյան Ա., Երևան, 2015:

<sup>19</sup> Օրբելի Մ., Избранные труды, в двух томах, том II, Ереван, 2002.

<sup>20</sup> Աճեմյան Հ., Մոկսից Միրզա-Արարատ, պաշտոնական ամսագիր Հայրապետյան աթոռոյ Ս. Էջմիածնի, համար Զ-Է, Ս. Էջմիածին, 1917, էջ 543-557: Աճեմյան Հ., Կարոս Խաչ-Արարատ, պաշտոնական ամսագիր Հայրապետյան աթոռոյ Ս. Էջմիածնի, համար Զ-Է, Ս. Էջմիածին, 1917, էջ 557-568:

<sup>21</sup> Աճեմյան Հ., Ծաղկաբաղ Վասպուրականի հայ ժողովրդական բանահիւսութեան, Առաջին փուլը, Ս. Էջմիածին, 1917:

<sup>22</sup> Թե ինչ ճակատագրի են արժանացել «Ծաղկաբաղի» հաջորդ փնջերի հրատարակության համար Հայկ Աճեմյանի գրառած բանահյուսական նյութերը, մեր պրպտումները դեռևս չեն պարզել: Հնարավոր է՝ այդ նյութերը նա իր Պարսկաստանում ապրած տարիներին հրատարակել է, այնպես, ինչպես գրառել և տպագրել

վասպուրականյան մեծաքանակ բանահյուսական և ազգագրական նյութ են հավաքել Մեսրոպ քահանա Ճանիկյանը, Խաչատուր Լևոնյանը, Հովհաննես Բարաղամյանը, Տիգրան Չիթունին և ուրիշներ, որոնց արժեքավոր հավաքածուների մեծ մասը ոչնչացել է, ինչպես ինքն է նշում՝ «վերջին դեպքերում»<sup>23</sup>: Հայկ Աճեմյանը, կարևորելով վասպուրականյան բանահյուսության դերը հայ բանահյուսական ժառանգության մեջ, գրում է. «Վասպուրականի հայ բանահյուսութեան կեդրոնը, Վան քաղաքը կարելի է համարել, որմէ յետոյ ալ առաջնակարգ տեղ կը բռնեն Գաւաշ, Շատախ, Ոզմ և Մոկս գաւառները որոնցմէ մանաւանդ վերջինիս հայ ժողովուրդը շատ վառ ու գունագեղ երևակայութեան տեր և ստեղծագործող է: Այդ ժողովրդեան հոգու և վառ զգացումներու ակնադրիւրի արտադրութիւնն է ահա «Մոկաց Միրզա» սիրային-դիւցազնական և «Կարոս Խաչ»՝ կրօնական պօեմաները, որոնց բոլորովին նոր վարիանդները ես այժմ հրատարակութեան կուտամ, իրենց արանդավէպերու և կարգ մը ծանօթութիւններու հետ միասին»<sup>24</sup>: Անդրադառնալով «Մոկաց Միրզայի» և «Կարոս Խաչի»՝ Արիստակես Մեղրակյանի, Գևորգ Շերենցի, Գարեգին Հովսեփյանի և Մանուկ Աբեղյանի տարբերակներին՝ Հայկ Աճեմյանը նկատում է, որ դրանցում թերի են ոչ միայն Մոկաց և Վանի բարբառներն ու հնչյունաբանությունը, այլև պատումների կառուցվածքը, ինչպես նաև կան տեղանունների ու անձնանունների անհամապատասխանություններ<sup>25</sup>:

Խորհրդային տարիներին վասպուրականցի գաղթականներից բանահյուսական նյութեր են գրառել Սենեքերիմ Շալչյանը, Արամ Ղանալանյանը, Վարդ Բրոյանը, Գեղամ Թարվերդյանը, Արագ Կարապետյանը, Էսթեր Խենյանը և ուրիշներ: Նյութերը պահվում են ՀԱԻԲԱ FAI:-FAVII: - Ե. Լալայանի, FFI:-FFXIII –խառը, FEI,FEII – Էսթեր Խենյանի և չմշակված ֆոնդերում: Հիշյալ տարածաշրջանի անտիպ բանահյուսական նյութեր կան նաև Մ. Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ինստիտուտի, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի, Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվներում:

Թվում է, թե Վասպուրականի բանահյուսական մշակույթը լավագույնս ուսումնասիրված և ներկայացված է, սակայն, երբ խորամուխ ենք լինում հարցի էություն մեջ, ի հայտ են գալիս տարերայնությունն ու միակողմանիությունը: Հավաքչական աշխատանքը հնարավորություն է տվել միայն կուտակել նյութերը և սպասել պատեհ ժամանակի: Վասպուրականի գավառների բանահյուսական մշակույթը հավասարաչափ չի ներկայացվել: Խորհրդային տարիներին ուշադրության է արժանացել միայն հեքիաթի ժանրը, մինչդեռ քնարական, ասույթաբանական ժանրերը, հավատալիքներն ու սովորույթներն

է ոգմեցի Ապան Ստեփանյանի հուշերը, որում ներկայացված են նաև Ոզմի տոները, նշանդրերն ու հարսանեկան ծեսը, ընտանեկան բարբերը, կենցաղը և այլ ազգագրական ու բանահյուսական նյութեր (Հայկ Աճեմյան, Ապան Ստեփանյանի հուշերը, Թեհրան, 1966):

<sup>23</sup> Աճեմյան Հ., Մոկաց Միրզա, նշվ. աշխ., էջ 543:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 543-544:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 544, 557:

անտեսվել են: Այդ ժանրերը ներկայացվել են միայն հետխորհրդային տարիներին՝ «Մոկս. հայոց բանահյուսական ժառանգությունը» ժողովածուում:

Ինչ վերաբերում է վասպուրականյան բանահյուսական նյութի ուսումնասիրությանը, ապա կարող ենք ասել, որ վերջին տասնամյակում հողվածներով և գիտաժողովներում զեկուցումներով հանդես են եկել բանագետներ Վ. Սվազյանը, Թ. Հայրապետյանը, Է. Խեմչյանը, Ա. Սարգսյանը, Մ. Խեմչյանը, Ս.Գ. Վարդանյանը, Լ. Մկրտումյանը և ուրիշներ:

Դիտարկումները ցույց են տալիս, որ գրառված է վասպուրականյան մեծաքանակ բանահյուսական նյութ: Բանահյուսական որոշ ժանրերի նյութեր հրատարակվել են XIX դարավերջին և XX դարասկզբին: Խորհրդային և հետխորհրդային տարիներին հրատարակության համար հիմնականում ուշադրության է արժանացել միայն հեքիաթի ժանրը: Վասպուրականի բանահյուսության ուսումնասիրությամբ սկսել են զբաղվել XXI դարասկզբին՝ գիտաժողովներում կարդացած զեկուցումների տեսքով, որոնք հրատարակվել են:



---



## МАРИНЕ ГАЙКОВНА ХЕМЧЯН

Научный сотрудник Института археологии и  
этнографии НАН РА, кандидат филологических наук  
эл. почта - mkhemchyan@yandex.ru

### ВАСПУРАКАН КАК КОЛЫБЕЛЬ АРМЯНСКОЙ ФОЛЬКЛОРНОЙ КУЛЬТУРЫ

#### Резюме

Работа включает в себе историю бытования, собирания, издания, исследования фольклорной культуры Васпуракана, которая началась в 50-е годы XIX века.


Хотя границы Васпуракана периодически подвергались изменениям, но его центральная часть - Ван с соседними провинциями всегда сохранял свою целостность и превосходное состояние. Ван, как ведущий и образцовый город региона и как центр духовной культуры, притягивал к себе население соседних провинций, которое привозил свои местные заветы, говоры, бытовые обычаи, фольклорные традиции и пополнял устную культуру Вана. Вследствие внутренних взаимопроникновений и воздействий фольклорных материалов Вана и соседних провинций сформировалось единое васпураканское фольклорное наследие.

Запись, издание и исследование фольклорных материалов Васпуракана нами разделены на следующие этапы:

- а) с 1850-х гг. до конца XIX века;
- б) начало XX века;
- в) советские годы;
- г) постсоветские годы.

Наблюдения показывают, что записан васпураканский объемный фольклорный материал. Материалы некоторых фольклорных жанров издавались в конце XIX века и в начале XX века. В советские и постсоветские годы для издания в основном обращали внимание на жанр сказки. Исследованием фольклора Васпуракана начали заниматься в начале XXI века - в виде докладов научных конференций, материалы которых изданы.

**Ключевые слова:** фольклор, сказка, жанр, сказитель, собиратель фольклора, быт, обычай, верование.



MARINE HAYK KHEMCHYAN

Researcher of the Institute of  
archaeology and ethnography NAS RA, Ph D  
e-mail: mkhemchyan@yandex.ru

VASPURAKAN AS THE CRADLE  
OF ARMENIAN FOLK CULTURE

Summary

The work includes the history of collection, publication and research of the folk culture of Vaspurakan, having begun in the 1850s.

Although the borders of Vaspurakan were periodically changed, its central part, the city of Van with its neighboring provinces, always maintained its integrity and superior role. Van, as a leading and exemplary city in the region and as the center of the spiritual culture, attracted the people of neighboring provinces, who brought their local dialects, everyday customs, folklore traditions and replenished the oral culture of Van. As a result of internal interpenetrations and influences of the folklore materials of Van and neighboring provinces, a unified Vaspurakan folklore heritage was formed.

We divided the recording, publication and research of the folklore materials of Vaspurakan into the following stages:

- a) since the 1850s until the end of the 19th century;
- b) the beginning of the 20th century;
- c) the Soviet years;
- d) post-Soviet years.

Observations show that Vaspurakan voluminous folklore material is recorded. Materials of some folklore genres were published at the end of the 19th century and at the beginning of the 20th century. In the Soviet and post-Soviet era, the publications mainly paid attention to the genre of fairy tales. Vaspurakan's folklore started to be studied at the beginning of the 21st century by the reports of scientific conferences, the materials of which were published.

**Keywords:** folklore, fairy tale, genre, storyteller, collector of folklore, life, custom, belief



## ՆԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՇԱՄԱՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի կրտսեր գիտաշխատող  
Էլ. փոստ-dancenano@mail.ru

### «ՅԱՐ ԽՈՒՇՏԱ» ՊԱՐԸ ՀԱՅ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻՆ

Բանալի բառեր. ազգագրություն, կինեմատոգրաֆիա, պար, երաժշտություն, մշակույթ, արվեստ, ժամանակ և տարածություն:

Հայ կինեմատոգրաֆիայի մի շարք ֆիլմերում (գեղարվեստական, վավերագրական և փաստավավերագրական) բազմաբնույթ պարերի դրվագներ են արտացոլված, որոնք տվյալ ժամանակաշրջանի պարային մշակույթի մասին պատկերացում են տալիս: «Հայֆիլմ» կինոստուդիայի գործունեության տարբեր շրջափուլերում հայ կինոռեժիսորներից շատերն անդրադարձել են ազգային սովորություններին, արարողություններին, այդ թվում՝ պարերին: Խորհրդային Հայաստանում ձևավորված «Հայֆիլմ» և հետխորհրդային շրջանում կինոարտադրման տարբեր ստուդիաներում նկարահանված մի շարք կինոնկարների պարային դրվագներ փաստացի, արժեքավոր նյութ են պարարվեստի ուսումնասիրման համար, ինչպես և տվյալ ժամանակահատվածի կատարողական արվեստի վավերական սկզբնաղբյուրն են հանդիսանում: Այս առումով ֆրանսիացի կինոռեժիսոր, ֆիլմի տեսաբան Ժան Լյուկ Գոդարը նշում է. «Կինոն դա ճշմարտությունն է 24 կադր 1 վայրկյանում»:

Սույն հոդվածում անդրադառնում ենք հայկական կինոնկարներում արտացոլված «Յար խուշտա» պարի պատմությանը՝ ըստ ժամանակագրական հերթականության: «Յար խուշտա» մարտապարին անդրադարձել են երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը<sup>1</sup>, էթնոպարագետներ՝ Սրբուհի Լիսիցյանը<sup>2</sup>, Ժենյա Խաչատրյանը<sup>3</sup>, Նաիրա Կիլիչյանը<sup>4</sup>, ինչպես նաև ազգագրագետ-բանահավաքներ Վարդ Բոդյանը<sup>5</sup>, Վարդան Պետոյանը<sup>6</sup>:

<sup>1</sup> Մելիքյան Ս., Հայ ժողովրդական երգեր ու պարեր, հ. 1, Երևան, 1949, էջ 119-156: Տվյալ աշխատանքում նուտագրված են նաև հետևյալ ռազմապարերի պարեղանակները. *Լուրիկի, Քեռծի, Մըռո խորո, Չիավեն, Շեխանի և Շեվիալանի, Աշիր գյոյ* (երկու տարբերակ), *Թուր մարթայի, Յար խուշտա, Շարանի*:

<sup>2</sup> Սրբուհի Լիսիցյանը հավաքագրել է տեղեկատվություն հետևյալ ռազմապարերի մասին, որոնք բնութագրական են Վանին *Քերծի* (երկու տարբերակ), *Շեխանի*, Շատալիին՝ *Շարանի, Թրախաղ, Հայոց Ձորին՝ Հայալ ըշտա, Սասունին՝ Չոլ Մայրան, Աշիրի գուվրն, Յար խուշտա, Մայիմո Մնո, Թուր ու մարտալ*: Նա անդրադարձել է նաև ռազմապարերի անունների ստուգաբանությանը: Մանրամասն տե՛ս՝ *Србуи Лисичьян*, Армянские старинные пляски (сост. и отв. ред. Э. Х. Петросян). Ереван, 1983, с.121-159:

<sup>3</sup> *Խաչատրյան Ժ.*, Ռազմական պարեր. - Պարը հայոց մեջ: Հոդվածների ժողովածու, Երևան, 2013, էջ 83-86:

<sup>4</sup> *Kilichyan N.*, Clap Dances: The Stage Version. - Dans MuzikKultur. ICTM 20th Ethnochoreology Symposium Proceedings 1998. Special Edition, Summer 2000. Istanbul, 2000, pp. 305-308: *Կիլիչյան Ն.*, Յար խուշտա ռազմական խաղ-պարը. - Միասական պարը հայոց մեջ: Գիտաժողովի կրթեր, Երևան, 2002, էջ 46-53:

<sup>5</sup> *Բոդյան Վ.*, Հայ ժողովրդական խաղեր, հ. 2, Երևան, 1980, էջ 83-84:

<sup>6</sup> *Պետոյան Վ.*, Մասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 422:

Հայֆիլմ կինոստուդիայի (հիմնադրվել է 1923թ.) գործունեության առաջին փուլի, որն ընդգրկում է Հայաստանի վաղ խորհրդային ժամանակաշրջանը, ֆիլմերում էկրանավորված պարերը հիմնականում քաղաքային միջավայրին բնորոշ ֆոլկ մենապարեր և ելրոպական զուգապարեր են եղել<sup>7</sup>, ինչպիսիք են օրինակ Չ. Բեկնազարյանի «Նամուս» ֆիլմում (1925 առաջին խաղարկային համր ֆիլմը)՝ «Լեզգինկա», «Շալախո», «Պեպո» ֆիլմում (1935 առաջին ձայնային ֆիլմը)՝ «Միրզեյի», «Ուզունդարա», «Շալախո», «Պոլկա», «Զանգեզուր» ֆիլմում՝ «Արծվապար», Հ. Մալյանի և Հ. Մարգարյանի համահեղինակությամբ «Նվագախմբի տղաները» ֆիլմում (1961)՝ «Տրեզի», Յու. Երզնկյանի «Խաթաբալա» ֆիլմում (1971)՝ «Շալախո» և այլն:

Հատկանշական է, որ խորհրդային շրջանի այդ հատվածում ռազմապարերին չեն անդրադարձել ռեժիսորները, ինչն ամենայն հավանականությամբ պայմանավորված է եղել մի շարք պատճառներով: Մարտական պարերը ենթադրում են իրենց արարողական համատեքստը և համապատասխան սցենարը, իսկ հայտնի է, որ ռազմա-հայրենասիրական սցենարների էկրանավորումը խիստ վերահսկողության ներքո է գտնվել Մոսկվայի կինոգրաքննիչների կողմից: Նման թեմատիկայով ֆիլմի սցենար գրելու կամ նկարահանելու փորձերը դատապարտվում էին կա՛մ աքսորով, կա՛մ մահապատժով: Ռազմա-հայրենասիրական թեմայով ֆիլմերի էկրանավորումը հնարավոր է դառնում միայն 1970-ական թթ. հետո, այսինքն ստալինյան բռնապետության թուլացումից մի քանի տասնամյակ հետո՝ գրեթե ուշ խորհրդային շրջանում:

Հայտնի է, որ Համո Բեկնազարյանը «Զանգեզուր» ֆիլմի առաջին սցենարն առաջարկել է գրել Ակսել Բակունցին: Ֆիլմի սցենարի հիմքում ընկած էր Զանգեզուրի լեռներում պատսպարված դաշնակցականների վերջին օրերի պատմությունները: Բակունցը, լինելով զանգեզուրցի, ականատես է եղել այդ իրադարձություններին, որոնց մասին նա պետք է գրեր: Ավարտելով սցենարը՝ Բակունցն այն չի տվել Բեկնազարյանին, իսկ մինչ այդ վերջինս բազմիցս խնդրել է նրան՝ սցենարին ծանոթանալ, ինչին Բակունցը պատասխանել է, որ այն կտա Մոսկվայի կինոքննիչների կողմից սցենարի հաստատումը ստանալուց հետո: 1938թ. Համո Բեկնազարյանի հետ միասին մեկնում են Մոսկվա՝ այն քննարկելու և հավանություն ստանալու ակնկալիքով: Մակայն Մոսկվայից վերադառնալով Երևան՝ անմիջապես ձեռքակալել են Բակունցին և գնդակահարել: Բեկնազարյանը ստիպված է եղել մեկնել Զանգեզուր և նյութեր հավաքել դաշնակցականների մասին: Երբ նյութերը հավաքված էին, սցենարը գրելու համար ընտրվել է ռուս դրամատուրգ Վ. Մուլվյովը<sup>8</sup>:

<sup>7</sup> «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանված պարերի մասին մանրամասն տե՛ս *Նաբինե Շամալյան*, Հայոց պարային մշակույթը Ի. դարի հայկական գեղարուեստական և վաղերագրական ֆիլմերում.-Հայկազեան Հայագիտական Հանդէս, հատոր ԼԶ, Պէրոս, 2016, էջ 445-464:

<sup>8</sup> *Բեկնազարյան Հ.*, Հուշեր դերասանի և կինոռեժիսորի (Թարգմանիչ՝ Ս. Գասպարյան), Երևան, 1968, էջ 242-244:

Տվյալ միջադեպն այն փաստերից մեկն է, ինչը խոսում է Խորհրդային Հայաստանում ֆիլմ նկարահանելու բարդ և բազմաթիվ սահմանափակումների մասին, առավել ևս ազգային թեմայով:

«Յար խուշտա» ռազմապարը (որը ենթադրում է իր կատարման համապատասխան միջավայրը ֆիլմում) սկսում է էկրանավորվել ուշ խորհրդային շրջանում՝ սկսած 1970 թ.-ից: Հայ կինեմատոգրաֆիայում առաջին անգամ այն իր յուրօրինակ արտացոլումն է գտնում Էդմոն Քեոսայանի «Տղամարդիկ» ֆիլմում 1972 թ.: Ֆիլմը ավանդական ազգային թեմատիկայի և ավանգարդ ոճի համադրում է, որտեղ տղամարդկանց պարային դրվագները՝ այդ թվում և «Յար խուշտա» պարը, որպես տղամարդկանց միասնականության խորհրդանիշ, տեղաբաշխված են ֆիլմի մի շարք անցումային հատվածներում: Հարկ է նշել, որ ֆիլմում պարերը՝ «Քոչարի», «Կերվերի», «Յար խուշտա», կատարվում են Պարի պետական անսամբլի տղաների կողմից: Ի դեպ, ներկայացվող պարերը բեմադրական, խորեոգրաֆիկ լուծումներով են կատարվում, որոնց գեղարվեստական ղեկավարն է եղել Վանուշ Խանամիրյանը:

Կինոնկարում «Յար խուշտա» ռազմապարն իր պատմական և արարողական համատեքստից դուրս է կատարվում, այլ մոտեցումներով, բայց և այնպես արտահայտվում է տղամարդկանց միասնության խորհուրդը: Հայտնի է, որ այս պարատեսակը բնորոշ է Պատմական Հայաստանի Տարոն աշխարհին և այն կատարվել է հիմնականում ռազմական գործողություններից առաջ կամ հետո: Առհասարակ ռազմապարերը միտված են բարձրացնել կռվողների մարտունակությունը, համախմբել ուժերը, ապահովել մարտական գործողությունների բարեհաջող ընթացքը և միասնականորեն նպաստել հաղթանակին:

Կինոնկարի տրամաբանությունից պարզ են Քեոսայանի ռեժիսորական խնդիրները, որտեղ սյուժեի գլխավոր նպատակն է ներկայացնել տղամարդկանց ընկերությունը՝ մեկ ընդհանուր կերպարի ներքո ընդգրկելով տաքսու վարորդներին, ընդգծելով նրանց մտերմությունն ու նվիրվածությունը միմյանց հանդեպ: Պարային դրվագները՝ որպես տղամարդկանց միասնականության խորհրդի արտահայտչամիջոց (որն ի դեպ ֆիլմում արտասյուժետային գիծն է), լրացնում են ֆիլմի գաղափարը, քանի որ պարերը նույնպես միասնականության խորհուրդ ունեն:

Հաջորդ ֆիլմը, որտեղ արտացոլվել է տվյալ ռազմապարը, Ժիրայր Ավետիսյանի (սցենարիստ՝ Մուշեղ Գալշոյան) «Ձորի Միբոն» ֆիլմն է: Այն նկարահանվել է 1980 թ. «Երևան» հեռուստաստուդիայում: Ֆիլմի հիմքում ընկած է հայ ժողովրդի ցեղասպանության թեման: Այն հարուստ է հայ ժողովրդական ծեսերի, ավանդույթների, երգ ու պարի դրվագներով: Ժիրայր Ավետիսյանը, ծնված լինելով Թալինի շրջանի Ծաղկասար գյուղում, իր պապերից շատ է լսել հայերի ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ պատմություններ: Հետագա ռեժիսորական գործունեության ընթացքում էլ հասունացել է



պատմական ֆիլմ էկրանավորելու գաղափարը, որում կարտացոլեր ոչ միայն հայ ժողովրդի կոտորածը, այլ նաև հայերի ծեսերը, ավանդույթները:

Ֆիլմը նկարահանվել է Հայաստանի տարբեր բնակավայրերում, մասնավորապես Թալինի շրջանում: Ինչ վերաբերում է թուրք հրոսակների հետ հայերի մարտ մղելու տեսարանին, նկարահանվել է Ծաղկասար գյուղի Բղուժ սարի շրջակայքում:

Հարկ է նշել նաև սասունցիներով բնակեցված Թալինի շրջանում «Յար խուշտա» պարի կատարման փաստավավերագրական տեսանյութը, որը տեղադրված է YouTube-ում «Ներքին Բազմաբերդ գյուղի հին հարսանիքը» խորագրով (տեսանյութի նկարահանողի անունը, ինչպես նաև տարեթիվը չի նշվում, հավանական է, որ նկարահանվել է 1980-ական թթ.-ից ոչ շուտ):

«Ձորի Միրոն» կինոնկարում «Յար խուշտա» ռազմապարը կատարվում է ֆիդայիների երդման արարողությունից անմիջապես հետո՝ Գևորգ Չաուշի գլխավորությամբ: Հատկանշական է, որ փաստագրական հենքի վրա ստեղծված գեղարվեստական ստեղծագործություններից տեղեկանում ենք, որ Գևորգ Չաուշի և նրա զինակիցների կազմակերպած ժողովներից մեկը, ուր քննարկվել են ինքնապաշտպանական ջոկատներին և հայրուկներին վերաբերող հարցեր, առաջադրվել նոր ինքնապաշտպանական ծրագրեր, ավարտվել է մասնակիցների խրոխտ պարով, որտեղ պարողների շարքը գլխավորել է Գևորգ Չաուշը: Գրքում կարդում ենք. «Նրանց խրոխտ պարից թնդում էր անտառը: Հայրուկները պարում էին կովելու պես և կովում պարելու պես»<sup>9</sup>: Տվյալ նկարագրությունը այն արժեքավոր փաստերից մեկն է, որ ֆիդային դառնալու և երդվելու արարողությունն ամփոփվել է մարտապարով: Ընդ որում, Ժիրայր Ավետիսյանը ֆիլմում «Յար խուշտա» ռազմապարը իր արարողական և պատմական համատեքստում է նկարահանել: Նա իր հարցազրույցներից մեկում նշել է, որ վտանգ կար, որ կինոգրաքննիչների կողմից կլրճատվեն որոշ հատվածներ կամ Մոսկվայից կհրահանգվի չեղարկել ֆիլմը: Ուշ խորհրդային շրջանում 1980-ական թթ. մեծ չափով ճնշումները թուլացել էին, և հայ գրաքննիչները բարեխղճորեն էին մոտենում նկարահանվող ֆիլմերին, ինչպես նաև աստիճանաբար խրախուսվում էր ռազմահայրենասիրական թեմաներով ֆիլմեր նկարահանելը, քանի որ հասունանում էր Հայաստանի Հանրապետությունն անկախ հռչակելու գաղափարը:

Հաջորդ ֆիլմը, որտեղ արտացոլվել է «Յար խուշտա» մարտապարը, Հրաչ Քեչիշյանի «Գարեգին Նժդեհ» ֆիլմն է՝ նկարահանված 2014 թ. Պան Արմենիա (PanArmenia) ստուդիայում: Հայաստանի երրորդ հանրապետությունում նկարահանված պատմական հենք ունեցող այս ֆիլմը բնականաբար չի ունեցել որևէ սահմանափակումներ, ինչն ընդունված ավանդույթ էր խորհրդային շրջանում: Ի դեպ, ֆիլմը նկարահանվել է Արցախի և Ադրբեջանի սահմանում լարված իրադարձությունների սրման ժամանակահատվածում և նախքան ապրիլյան քառօրյա պատերազմը՝ 2015 թ.-ին: Ռազմա-հայրենասիրական ֆիլմի ստեղծման անհրաժեշտությունը մեր օրերում նշանակալի դեր է կատարում:

<sup>9</sup> Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Ինձ քահ տվեր... (Գևորգ Չաուշ). փաստագրական վեպ, Երևան, 1990, էջ 422:

րում, քանի որ այն նպատակաուղղված է հայ մարտիկի մեջ դաստիարակել ոգու արիություն և հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն:

«Գարեգին Նժդեհ» ֆիլմը նկարահանելու համար ֆիլմի ստեղծագործական խումբը հավաքել է անհրաժեշտ արխիվային փաստերը, բոլոր տեղեկությունները, պատմաբանների հետ իրականացվել է խորհրդատվություն: Ֆիլմում պարային տեսարանը տեղաբաշխված է այն հատվածում, որտեղ Գարեգին Նժդեհին հայտնում են իր աղջկա ծննդյան լուրը:

Ինչպես վերը նշվեց, «Յար խուշտա» մարտապարը բնորոշ է Պատմական Հայաստանի Մուշ-Սասուն շրջաններին, այն Զանգեզուրի տարածաշրջանին բնորոշ մարտապար չէ:

Վերջին տասնամյակում, պայմանավորված հայ ժողովրդական պարի տարածման գործընթացով, «Յար խուշտա» ռազմապարը սիրվել և լայն տարածում է գտել ոչ միայն Հայաստանում, այլև հայկական Սփյուռքում: Հավանական է, որ Քեշիշյանն ընտրել է այս ռազմապարը այն պատճառով, քանի որ այն մեծ ժողովրդականություն է վայելում և շատ է կատարվում՝ ի տարբերություն մյուս ռազմապարերի: Ի դեպ, ֆիլմում պարը կատարվում է «Մարաթուկ» ավանդական երգի-պարի համույթի տղամարդկանց կողմից:

Մարտապարը, բացի գեղարվեստական ֆիլմերում արտացոլվելուց, նկարվել է նաև Արման Մանարյանի «Մասնա Ծոեր» կամ «Մասունցի Դավիթ» մուլտֆիլմում: (նկարահանվել է 2010 թ.): Վերջին տասնամյակում բացի կինոարվեստից, «Յար խուշտա» մարտապարին անդրադառնում են արվեստի տարբեր ոլորտներում նույնպես, ինչպես օրինակ՝ թատերական ներկայացումներում, բազմաթիվ հայրենասիրական տեսահոլովակներում, գեղանկարներում, գրաֆիտիներում, արտացոլվում է նաև նամականիշների վրա:

Ամփոփելով քննարկվող պարատեսակը և նրա դրսևորումները հայ կինեմատոգրաֆիայում՝ կարելի է եզրակացնել, որ «Յար խուշտա» ռազմապարի արտացոլումը գեղարվեստական ֆիլմերում, մուլտֆիլմերում, տեսահոլովակներում, արվեստի տարբեր ստեղծագործություններում նշանակալի դեր է խաղում հայ ժողովրդական մարտապարերի մշակույթի վերաիմաստավորման պարագայում, ռազմա-հայրենասիրական դաստիարակության գործում, քանի որ պարի հիմքում ընկած է մարտունակությունը բարձրացնելու, մրցելու և հաղթելու գաղափարը:

## НАРИНЕ АЛЬБЕРТОВНА ШАМАМЯН

Младший научный сотрудник Института археологии и этнографии НАН РА  
эл. почта- dancenano@mail.ru

### ТАНЕЦ «ЯР ХУШТА» В АРМЯНСКОЙ КИНЕМАТОГРАФИИ

Резюме

Фрагмент воинственного танца «Яр хушта» показывает не только подлинность времени и исторических событий, но также представляет художественную ценность в Армянской кинематографии. Танец «Яр хушта» был отражен в следующих фильмах: Жирайр Аветисян «Дзори Мирон (Миро из ущелья)», Эдмонд Кеосаян «Мужчины», Грач Кешишян «Гарегин Нжде», Арман Манарян, мультфильм «Давид Сасунский», а также в документальном фильме «Неркин Базмаберд».

В данной статье анализирован фрагмент воинственного танца «Яр хушта» в Армянской кинематографии в хронологическом порядке.

**Ключевые слова:** этнография, кинематография, танец, музыка, культура, искусство, время и пространство.

NARINE ALBERT SHAMAMYAN

Junior researcher of the Institute of archaeology and ethnography NAS RA  
e-mail: dancenano@mail.ru

### THE DANCE «YAR KHUSHTA» IN ARMENIAN CINEMATOGRAPHY

Summary

The fragments of martial dance «Yar khushta» can be viewed not only as authentication of time and historical events in Armenian cinematography but also present artistic heritage.

This dance is reflected in many Armenian movies such as «Dzori Miron (Miro of the valley)» by Jirayr Avetisyan, «Tghamardik (Men)» by Edmond Qeosayan, «Garegin Njeh» by Hrach Qeshishyan, cartoon «David of Sasoun» by Arman Manaryan and documentary film «Nerqin Bazmaberd».

In this article according to chronological sequence in Armenian cinema we will refer the history of dance «Yar khushta». As a result of comparative study the function of martial dance in Armenian documentary and artistic movies is demonstrated.

**Keywords:** ethnography, cinematography, dance, music, culture, art, time and space.





## НОНА РОБЕРТОВНА ШАХНАЗАРЯН

Старший научный сотрудник Института археологии  
и этнографии НАН РА, сотрудник Центра независимых  
социологических исследований, Санкт-Петербург,  
кандидат исторических наук  
эл. почта - nonashahnazar@gmail.com

### НВИВО-12: БИОГРАФИЧЕСКИЙ МЕТОД В ИЗУЧЕНИИ ДИАСПОР И МИГРАЦИЙ

**Ключевые слова:** глубинный метод, биографическое интервью, техно-метод, НВИВО-12, нарративы, валидизация grass-root исследований, обработка данных.

Реактивные, или вынужденные миграции, как и тема глобальных диаспор – не теряющие свою актуальность на протяжении всей истории человечества направления междисциплинарные исследования. Однако, при этом, тема вынужденных миграций, по общему признанию специалистов<sup>1</sup>, чудовищно непопулярна. Можно предположить, что причина такой непопулярности заключается в вялотекущем характере последующих насильственному перемещению событий. Особые признаки носят в себе также «герои» такого типа исследований - вынужденные переселенцы, *реактивные* мигранты. Иногда среди информантов попадаются веселые острословы и балагуры, но обычно это люди, у которых, согласно их собственным характеристикам, *что-то внутри сломалось*. Предмет разговора часто также внушает мало оптимизма. Все эти особенности номинируют такое исследовательское поле как довольно трудное по целому ряду параметров, которые в том или ином контексте необходимо будет обсудить ниже.

При изучении вынужденных миграций посредством биографического метода/устных историй непременно вычлениваются несколько структурных макро-трендов - это тематические блоки, макро-нарративы. В процессе анализа сотен собранных интервью, обнаружили следующие макро-темы: нормальная жизнь на местах изгнания (детство, отрочество, образование, социальные взаимодействия); катаклизмы и политическое насилие в отношении группы (включает как жестокие действия «оппонентов», так и акты помощи и спасения «оппонентами» же); переезд или серия переездов, сопровождающиеся часто повторными аппликациями, наслоениями травматических опытов; оседание в новых местах и начальные шаги в малознакомом сообществе; последующие действия или бездействие для достижения адекватного уровня социальной интеграции. Соответственно, по этим макро-темам потребовалось проработать детальные гайды, которые служили не только первич-

<sup>1</sup> Как отечественные специалисты по теме-Оксана Мусаелян и Мариам Авагян (Армения), так и зарубежные Лаура Лучини и Од Мерлин, из Бельгии.

ными инструментами структурирования интервью, часто *потоков мысли*, но и так называемыми *нарративными толчками*, то есть вопросы интервьюера к интервьюируемому, когда последний «буксует», теряется, тонет в собственных темах, которые пробует развить.

Биографические интервью представляют собой некоторую сложность, поскольку фокусирование на тех или иных этапах своей биографии - выбор чисто личный. К тому же, личный характер нарративов придает ходу интервью особую *сенситивность*, чувствительность, заточенность под этические оптики. Сам процесс рефлексирования о своей жизни может быть непосредственно связан со *здесь и сейчас* (пере) определением идентичности информанта, его самовыражения (если только речь не идет о публичных фигурах, ежеминутно ориентированных на камеры и самопрезентацию). Ввиду такого рода демократичности метода некоторые интервью продолжались по шесть-восемь, а то и десять часов с перерывами на чай-кофе, еду, созвон по телефону. Предыдущий опыт работы в подобном сугубо антропологическом стиле выявил некоторые издержки и проблемы метода - это как сама обработка собранного материала, так и «выбраковывание» больших массивов интервью, которые обычно уходили в недра бездонной категории «и прочее». Образно говоря, попадание первичного материала под эту категорию означало могилу для этих данных (например, из полевого материала для моей кандидатской диссертации, который я собирала ежедневно в течение восьми месяцев, только около 10 % было пушено в научный оборот, то есть встроено в текст авторской книги). Такая ситуация ничуть не оригинальная, она сложилась давно и часто замалчивается. Однако сейчас, можно говорить о попытках выхода из этой ситуации: на помощь приходят компьютерные технологии - специальные программы по обработке данных. Для достижения минимальности выбраковывания материала и достижения максимально высокого порога включения собранных материалов в научный оборот требуется дотошная предварительная работа по выявлению тем и кодов к этим темам, а также суб-кодов. Весь процесс такой подготовки называется аналитическим кодированием. Результат такого аналитического процесса называется дерево кодов (тематические ветви) и суб-коды (ответвления), в то время как макро-тема есть, образно говоря, ствол дерева. Конкретно мое исследование про реактивных мигрантов (вынужденные переселенцы-армяне из Азербайджана, 1988-2019) и диаспоральный образ жизни (армяне, проживающие в России и в США) суть низовой проект (grass-root research), то есть основной упор в процессе исследования делается на чаяниях самых обычных, рядовых членов сообществ. Основную сложность уже на кабинетно-библиотечном этапе исследования составляет творческий анализ качественных данных (АКД).

Аналитическое кодирование как процесс: разделение «концептуального труда» антрополога и компьютера Анализ качественных данных (АКД, или Qualitative Data Analysis Software, QDAS) с помощью компьютерных пакетов (Atlas.ti, MAXQDA, Nvivo, xSight, Et-

hноgraph – см. их описания в сети) непосредственно сопряжен с упомянутым выше процессом аналитического кодирования (АК), техники которого имеют глубоко умозрительную аналитическую природу. АК при использовании Нвиво предлагает стратегическое использование методов современного программирования (модульность, графика, компиляция, визуализация). Кодирование считается самими разработчиками ключевой аналитической процедурой всего АКД (Pierre&Jackson 2014), и имеет ни много ни мало 30-летнюю историю развития. Понятие, концепт, термин является единицей аналитических конструкций, простого и двойного кодирования. АК включает в себя специфический метод инструментального согласовывания исследователем естественно-языковых свидетельств, получаемых от участников исследования. Недостатком этих техник может стать «инструментальная слабость компьютерных инструментов кодирования» (Каныгин, Корецкая 2018). Тем не менее, концептуализация исследователем текстовых материалов позволяют более профессионально оперировать утверждениями на «естественном», а не академическом языке; позволяет компилировать результаты кодирования в форме семантической сети, а также визуализировать весь процесс работы с высказываниями участника, то есть интервьюируемого. Иными словами, обработке полевых материалов (ПМ) и адекватному аналитическому представлению этих оригинальных материалов сильно способствует усовершенствование методов аналитического кодирования. Самая сложная часть в этом процессе — концептуальная часть анализа данных, то есть идентификация смысловых единиц, соединение их в категории и, главное, описание отношений между этими категориями и таксономиями. При этом, первичное кодирование в виде двойных кодов - это процесс создания базовой структуры, лежащей в модульно-алгоритмической организации аналитических конструкций самого антрополога, этнографа. Исследователи замечают, что АКД становится несопоставимо труднее, когда мы отходим от базовых операций кодирования (Junker 2012). Прыжок в аналитические высоты кодирования радикально меняет статус исследователя-антрополога, имеющего дело с микроисториями (лайф-стори) обычных людей, предлагая ему лифт от рассказчика или пересказчика к аналитику, обобщающему результаты своей полевой работы на современных принципах производства знания и управления знаниями (Charmaz 2000). Такая работа представляет инклюзивную, представительную модель совместного производства антропологического знания, соавторами которого становятся рядовые носители естественного языка (но не специальных знаний). Тем самым, использование современных технологий обработки первичных данных оставляет меньше места авторскому произволу специалиста. Иными словами, происходит демократизация авторства и давнее рефлексирование о коллективности авторства и знания вообще обретает ощутимую почву под ногами. С другой стороны, огромные объемы и хитросплетения рутинного повседневного знания, предлагаемого участниками и обраба-

тываемого, обобщаемого исследователем, представляют принципиальную аналитическую трудность, которая более или менее и разрешается с помощью АК.

Генерация семантической сети Структурные механизмы АК включают первичное кодирование и связывание кода с фрагментом свидетельства участника, категоризацию кодов, которые помогают аналитическому выражению потока свидетельств. АК сродни структурированию папок на компьютере, но оно отличается от традиционного кодирования тем, что исследователь вводит двойные обозначения, почему и связывает между собой пары понятий (например, Бархатная Революция и геополитика снизу). Это первый момент. Второе, согласно правилам использования программы, исследователю разрешается связывать пары понятий только в двухуровневые графы (их также называют ветвлениями или локальными связями понятий) с единственной корневой вершиной. Итак, начальное ветвление схематично можно отобразить как Рассуждения Маргариты Концептуализация исследователя; к первичному ветвлению относиться также схема: *Когда во дворе меня спросила новая соседка из Армении, умеет ли моя мама делать Мадзун, я ударились во вранье, которое повлекло за собой цепь нового вранья* (а откуда твоя мама берет молоко для Мадзуна?) - Размышления Маргариты о своих детских представлениях об армянской идентичности. Второе ветвление представляет следующую сентенцию: *Когда во дворе меня спросила новая соседка из Армении, умеет ли моя мама делать Мадзун, я ударились во вранье* - Рассуждения Маргариты потому что я думала, что *настоящая армянская мама* обязательно *должна уметь делать Мадзун*. Ну, и как я могла позволить, чтобы кто-то подумал, что моя мама не умеет делать Мадзун, отсюда следовало бы, что она НЕ настоящая армянка. Второе и первое ветвление объединяет концепт *Этническая идентичность* и ее обсуждение, то есть папка *Идентичность* может включать целую сетку подпапок: *настоящая армянскость*, рассуждения о *Родине или Родинах, еда и идентичность, пространство /локальность и идентичность, память и идентичность (люди, звуки, запахи, материальные объекты, привычки, практики)*. Такое распределение происходит по принципу общее-частное, или части и целое. Таким образом, все виды кодирования неразрывно связаны со своими контекстами (эмпирическими данными, высказываниями участников). Тем самым, совершая концептуальную работу непременно путем создания т.н. локальных связей понятий, академическое сообщество обретает возможность алгоритмического контроля соблюдения антропологом этого общенаучного требования в своих практических концептуальных поисках. Анализирующий свой материал антрополог лишается возможности вводить свои обозначения adhoc, заведомо, то есть он оказывается «концептуально обязанным» учитывать то, что ранее зафиксировано им в качестве локально связанных понятий; то есть автор материала ограничивает и контролирует себя сам. Более сложные структуры связей и семантические сетки в целом производятся по принципу алгоритма на базе ми-

риад ветвлений, создаваемых в ходе мыслительной работы-концептуализации самого антрополога, работающего со своим материалом.

Результаты этой концептуализации представляются *семантической сеткой* оригинального вида, которая позволяет, по возможности, не обрывать связи между парой термин-контекст. Попробую показать, как происходит практическое преобразование свидетельства, интервью в семантическую сеть. Например, детальный рассказ мигранта о жизни в *хопане* при многократном аналитическом прочтении и осмыслении (то есть неоднократная конвертация «естественного» языка на язык выработанных в научном сообществе научных категорий и терминов и их последующая реконвертация на «естественный» язык интервью и триангуляция разных акторов *хопана*: отправляющая сторона, принимающее общество, сам мигрант с комплексом своих ощущений) выводит нас на категории *экономика денежных переводов*, или *родственная идеология* или *бытовая геополитика*. Эти (ре-)конвертации и представляют тернистый путь к новому знанию. На рутинном уровне этот процесс имеет свою динамику и этапы: на начальной фазе он происходит после сбора первой серии, так называемых, *модельных интервью*, которые и позволяют разработать рабочие гайды. Последние могут стать локомотивами, как исследовательского процесса, так и текстуальных излияний, академического письма на заключительном этапе. Повторюсь, что АК, выражаясь языком программирования, имеет свои алгоритмы, которые присоединяют узловые пары понятий к стволу семантической сетки. Алгоритмы могут выявлять двойные обозначения. Так, свидетельства Маргариты о детских представлениях об этнической идентичности в иноэтничной среде приводит к выявлению двойных и более обозначений касательно композиций об идентичности.

Низовые интервью (НИ). Повторюсь, что первый шаг к аналитическому кодированию — это первая серия низовых интервью, первичная не-компьютерная обработка которых становится моделью для составления дерева кодов.

Поскольку НВИВО применяется в процессе изучения армянских «диаспоральных» и диаспоральных сообществ в России (при финансовой поддержке фонда Г. Гюльбенкяна), представлю пример гайда для интервью в Краснодаре, Москве, Петербурге, Новосибирске и других городах России. «Стволовая» тема - *Диаспоральные и прочие армянские идентичности в России*, включает описание деталей и выглядит следующим образом:

Интервью запланировано проводить в формате life-history с обычными людьми, от 1 часа до 1,5-2-х часов (в некоторых случаях это занимало гораздо больше времени, особенно если имело место на рабочем месте). Нарративный толчок — важная часть интервью, которая задает тон всему интервью. Очень важно в своем представлении проекта и себя не «подсказывать» какие-то научные слова, термины, которые участники возьмут на заметку и будут их бесконечно повторять без особой нужды. В низовых интервью это особенно важно. К примеру, так звучит первоначальный нарративный толчок, или *легенда* без



подсказки терминов из не «естественного» языка участника: *Национальная академия наук Армении в сотрудничестве с Российской Академией наук предприняли совместное исследование, изучают жизнь людей разных поколений и людей разных национальностей в городах России; их заботы, трудности, как адаптируются к ним, как их преодолевают.* Не упоминая армян и миграцию, можно легче настроить участников исследования/информантов на более тривиальные (реальные проблемы), а не эпатажные нарративы (медиа-клише, эпатаж, «страсти-мордасти»). Вторая серьезная проблема – суб-культурное многообразие групп армян, проживающих в России. Гетерогенность проживающих в России вынужденных мигрантов в частности, и армянских этнических/диаспоральных сообществ в целом стала одним из первых камней преткновения при составлении рабочего гайда. Въедливый просмотр полевых материалов и публикаций стал предтечей составления миад типологий целевых групп. Вот пример, результат соединения академических знаний с представлениями Себя и Другого в модельных интервью.

Целевые группы очерчиваются:

*По типу миграции*

- армяне-старожилы: живущие в городах исследования в нескольких поколениях;
- проактивные мигранты: переехавшие в условиях «выбора» (с оттепели и до 1988 г);
- реактивные мигранты: вынужденные переселенцы/беженцы и трудовые мигранты

после 1988 и до настоящего времени

*По месту выхода/рождения.*

Армения

- Ереван: старожилы, культурная элита; гегци/котош/кярту – «сельские»
- средние города Армении (Гюмри, Ванадзор, Масис.)
- села (Абаран, Атарбеков, Саят-Нова)

Азербайджан

- Баку, Сумгаит, средние индустриальные города
- села Азербайджана
- Карабах и Шаумянский район

Грузия

- Тифлис (старые выезды, с дореволюционных времён)
- тбилисцы
- ахалкалакские и ахалцихские армяне
- другие: цалкинские, тюркоговорящие, армяне-католики

Прочие

- исход с территории Османской, Персидской империй на территорию современной Российской Федерации (далее РФ).

*По языку*

- армяноговорящие
- русскоговорящие
- русско и армяноговорящие
- тюркоговорящие
- полу-армяноговорящие
- говорящие на диалекте или на диалектах
- полилингвы

*По религии*

- Армяно-апостольская церковь
- католическая церковь
- протестантская церковь
- армяне-мусульмане(сообщества хемшилов в России)
- атеисты
- неофиты (свидетели Иеговы, пятидесятники)
- (ре-)конвертанты (например, некоторые группы армян в Джавахети/Джавахе и в

Аджарии)

Возрастные когорты (включая многообразие молодежных урбанистических субкультур) и гендерные различия также принимались в расчет при составлении гайда.

*Рабочий гайд для уроженцев (старожилов)*

1. Как давно вы живёте в Москве (Петербурге, Краснодаре, Тюмени, Новосибирске)? Где родились ваши родители? Если давно живете в Москве (Краснодаре, СПб и т.д.), то в каком поколении? [тут же постараться выяснить: социальный статус его/ее и родителей, где учился и работает, семейный статус, год рождения, по возможности]

2. Какие обстоятельства привели вас или ваших предков в Москву/СПб. Кем были ваши родители, их предки? Чем они занимались, чем вызван их переезд в Россию? [к кому приехали, на чью помощь рассчитывали - земляческие сети, родственные сети?].

Как сложилась их жизнь здесь?

3. Есть ли родственники за пределами Москвы, СПб [в России]? Как они там оказались? Поддерживаете ли Вы связи с ними? Как это происходит?

4. Есть ли родственники (друзья) вне России? В Армении? Как часто вы навещаете их - в Армении, в других странах? С какими целями?

5. Вы давно живете здесь. Есть ли изменения в окружающей жизни вашего города за последние 15 лет? В чем они заключаются?

*Для недавних приезжих*

1. Если приехали в этот город недавно (начиная с 1988 г. и после распада СССР): откуда, по каким причинам? Какие планы – остаться, уехать обратно в родной город, уехать

в другой город/страну? Почему? [важно не забыть спросить, к кому приехали, на чью помощь рассчитывали: земляческие сети, родственные сети или иные?].

2. В каких городах (странах) вы жили раньше?

3. Почему выбрали именно этот город для переезда?

4. Сложно ли было привыкать к жизни в этом городе? Какие основные трудности привыкания – у вас, у мужа/жены, других родственников? Как складываются отношения с соседями, сослуживцами?

5. Ваши дети уже привыкли к жизни в этом городе? С кем они дружат? Как складываются отношения в детсаду, в школе, в вузе?

6. Вы себя уже относите к москвичам (петербуржцам, «кубанцам»)? К «местным» жителям? Если да, то почему?

7. Есть ли у вас родственники за пределами этого города [в России]? Как они там оказались? Поддерживаете ли Вы связи с ними? Как это происходит? Часто ли вы с ними встречаетесь? Где?

8. Есть ли родственники (друзья) вне России? В Армении? Как часто вы навещаете их – в Армении, в других странах? С какими целями? Что вы их просите привезти из Армении, когда они собираются к вам в гости?

9. Если вы недавно здесь живете, то в чем отличия жизни *здесь* от жизни *там*, где вы жили раньше?

Основная часть гайда общая для всех.

1. Жизненный путь информанта - учеба, выбор профессии, работа и пр.

Людям старшего и среднего возраста задать вопросы о детях: каким будет (есть) их жизненный путь (планы, связанные с учёбой, работой, миграцией)?

2. Тестирование кухни, еды, пищевого комплекса как маркера идентичности. Какое ваше самое любимое блюдо дома? Если вы ходите в кафе, рестораны, то какую кухню вы предпочитаете? Какие блюда чаще всего заказываете?

